

1064

Письмо

Днепропетровск

Бесс. 6

914)

V-76

1914

2011-07
Dr. of V. L. 14

ԿԱՐ. ՄԵԽԻՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

155

ԴԱՍԱԳԻՐՅԱ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մ Ա Ա Ն Ա.

(ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՐՁԵՆ ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ)

55 նկարով եւ 1 բարտէզով.



ԵՐԿՐՈՇ, ԲԱՐԵՓՈԽԻԱԾ. ՏՊԱԴՐՈՒԹՅԻՆ

Հայուսմականություն
«ԳԻՐ»
գրադարան անունը

Թ. ի Ժ Լ ի ս

Տիգրան և Հերիթիլ Գրադարան փող. 6, Հեռախոս 566
1911

9(1)
Մ-76

Հ Արմ.

Հ 3-2901/_{1/2}

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆ Խ ԱՇ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

AN-1155-

15 JUL 2005

9CD

5-76

ԴԱՍԱԳԻՐՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա.

(ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՐՔԸ ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ)

55 Նկարով եւ 1 քարտէզով



| |
|-------------------|
| ՀՐԱՄԱՆԱԿ. ՊԱՍԵԽԱԾ |
| «ԳԻՐ» |
| ԳՐԱՎԱՆԱԿԱՆՈՒԹ |

ՀԽՎ. № 20862

Ժ Բ Ժ Լ Ի Ա

Տպարան ՀՀ ԵՐՄԵՍ ԳՐԱԴԱՐԱՆ ՓՈղ., 6. Հեռախոս 566

1911

39697-67



Հ. Ա. ՄԱՅԻԿԻ ԱՎԱՐ
ԱՊՈՒ-ԼՈՒ ՀԱՅԻ ԱՊՈՒ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ա. տպագրութեան

Սոյն դասագիրքը կազմւած է մեր ծխական դպրոցների համագիծ—ծրագրի համաձայն: Նա բաղկացած է երկու մասից: Առաջին մասն իր մէջ պարունակում է քաղաքակրթութեան պատմութեան տարերքը, իսկ երկորդ մասը՝ հայոց պատմութեան առասպելական շրջանը:

Դրքիս առաջին մասը կազմելիս մենք ձգտել ենք մատչելի և հետաքրքիր դարձնել նիւթը, միևնոյն ժամանակ չմեղանչելով կուլտուրայի պատմութեան սկզբունքների դէմ:

Նոյն ձգտումով զեկավարւելով, մենք չենք բաւականացել այս կամ այն գործիքի, զէնքի նկարագրութեամբ ու նկարով, այլ ըստ կարելոյն, աշխատել ենք գաղափար տալ իւրաքանչիւր գործիքի կամ զէնքի գործադրութեան մասին և դրանով սւելի շօշափելի, աւելի կօնկրէտ դարձնել նախապատմական մարդկանց իրական կեանքը: Նախապատմական մարդկանց կենցաղի այդ պատկերները քաղել ենք մեր ձեռքի տակ ունեցած աղբիւրներից:

Վերոյիշեալ ձգտումն արտայայտել է նաև դասագրքիս լեզւի նկատմամբ: Զնայած նիւթի ծանր ու լուրջ բնաւորութեան, մենք ամեն կերպ աշխատել ենք գրել պարզ նախադասութիւններով. սակայն, իհարկէ, միշտ չի յաջողւել այդ:

Դասագրքիս առաջին գլուխը, որ կրում է Ապրուստի գըլխաւոր միջոցները վերսագիրը, մի տեսակ ներածութիւն է կուլտուրայի պատմութեան դասընթացի համար: Նրա նպատակն է աշակերտներին վերացնել ժամանակակից բարձր կուլտուրայից և տանել դէպի հեռաւոր նախապատմական անցեալը, երբ մարդիկ՝ նիւթական կուլտուրայի բարիքներից զուրկ՝ գոյութեան կոիւ էին մղում շրջապատող բնութեան դէմ: Ուսուցիչը հէնց առաջին դասմից մի շարք զեկավար հարցերով երեխաներին գաղափար է տալիս ապրուստի առաջնակարգ պայմանների և նրանց ձեռք բերելու միջոց—գործիքների մասին ու այդպիսով հասկանալի դարձ-

Կ. Կառւցկի. Очерки и этюды. Պետեր. 1901.

Կ. Բիւխեր. Возникновение народного хозяйства. Մասն առաջին. Պետեր. 1907.

Բերլին. Великая семья человечества. „Слово о словѣ“ գըրքոյլը.

Պրօֆ. Դ. Կուդրեաւսկի. Какъ жили люди въ старину. Իւրիկ, 1906.

Ֆր. Էնդէլս. Происхождение семьи, собственности и государства. Պետեր. 1904.

Կ. Կառւցկի. Возникновение брака и семьи. Պետեր. 1906.

Դորինին. Древний Востокъ и героическая Греция. Մուլ. 1906.

Ֆր. Լիւտգենաու. Естественная и социальная религия. Պետեր. 1908.

Կ. Կառւցկի. Античный миръ, іудейство и христианство. Պետեր. 1909.

Պրօֆ. Գ. Գեօֆֆէինզ. Философія религії. Պետեր. Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս 1881.

Խ. Ճ. Վ. Ստեփանէ. Մովսէս Խորենացու հայկական պատմութիւնը. Պետեր. 1889.

Ստ. Մալխասեան. Դասընթաց Հայոց Մատենագրութեան պատմութեան (վիմագր) Թիֆլիս 1899.

Ստ. Պալասանեան. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս 1902.

ՓԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՐՔԸ

1

ԱՊՐՈՒՍԻ ԳԼԽԱԽՈՐ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Մարգիկ պէտք է ունենան կերակուր, որ չմեռնեն քաղցից և ընակարան ու հագուստ, որ պաշտպանւեն ցըրտից, անձրեկից, շոգից: Կերակուրը, բնակարանն ու հագուստը ամենահարկաւոր բաներն են ապրուստի համար:

Եթէ մէկը ուզենայ բնակարան շինել, պէտք է ունենայ հետևեալ նիւթերը՝ քար, կիր, փայտ, ջուր. բացի դրանից պէտք է ունենայ հետևեալ գործիքները՝ բլունգ, բահ, սղոց, մուրճ, կացին և այլն:

Հագուստ կարելու համար պէտք է ունենանք կտորեղէն, թել, ասեղ, մկրատ, մատնոց:

Կերակուր պատրաստելու համար էլ պէտք է ունենալ նիւթ ու գործիքներ: Օրինակ, մարդ չի կարող հացթիւել, եթէ չունենայ հետևեալ նիւթերը՝ ալիւր, ջուր, աղ և հետևեալ գործիքները՝ տաշտ, մաղ և այլն:

Ուրեմն մարդս իր անհրաժեշտ պէտքերը հոգալու համար պէտք է ունենայ նիւթեր և գործիքներ:

Բայց գործիք շինելու համար էլ հարկաւոր են նիւթ ու գործիքներ: Օրինակ, կացին շինելու համար, բացի նիւթերից, հարկաւոր են հետևեալ գործիքները՝ մուրճ, զնդան, փուքս և այլն: Այս գործիքներն էլ գործիքներով են շինում:

էր կերակուր գտնել և առանց հագուստի ու բնակարանի ապրել։ Բայց տաք երկիրների դաշտերում ապրելը դժւար էր, որովհետև թէ սաստիկ շոգ էր լինում և թէ կերակուր քիչ էր ճարտում։ Այդ պատճառով մարդիկ ապրում էին անտառներում։

Անտառներն էլ լի էին ամեն տեսակ գաղաններով, որոնք հեշտութեամբ կարող էին մարդկանց վնասել։ Դրանցից պաշտպանւելու համար մարդիկ բարձրանում էին ծառերը և կամ մտնում էին այրերը։ Մի գիտնական պամում է, որ Աֆրիկայի վայրենիները հիմա էլ գաղաններից պաշտպանելու համար ծառերն են բարձրանում։

Մի ճանապարհորդ էլ տեսել է վայրենիների մի ցեղ, որ խմբերով ապրելիս է եղել անտառներում. ամեն մի խմբի մէջ եղել է մօտ 100 հոգի։ Նրանք մշտական բնակարան չեն ունեցել, վատ եղանակին պատսպարւելիս են եղել ճիւղերից շինած խուղերի մէջ։ Նրանց կերակուրն եղել է որսի միուր, պտուղներն ու կանաչները։

4

ՊԱՇՏՊԱՆԻԵԼՈՒ ԱՄԵՆԱԼՍԻ ՄԻՋՈՑԸ

Գաղաններից պաշտպանւելու համար մարդիկ թէ բարձրանում էին ծառերը, բայց չէին կարող շարունակ ծառերի վրայ մնալ. ստիպւած էին իջնել և իրենց համար կերակուր որոնել։ Գետնի վրայ կերակուր որոնելիս գաղանները նրանց աւելի հեշտութեամբ կարող էին վնասել, և այդպիսով մարդիկ կոչնչանային։ Բայց նրանք չ'ոչնչացան, որովհետեւ ապրում էին ոչ թէ առանձին-առանձին, այլ խումբ-խումբ։

Պաշտպանւելու համար կենդանիներն էլ խմբովին են ապրում. օրինակ, թոյլ կապիկները խմբովին լինելով կարողանում են պաշտպանւել իրենցից շատ ուժեղ կենդանիներից։ Այսպէս, մի անգամ մի ահագին արծիւ աշխատում էր ծառի վրայից տանել մի փոքրիկ կապիկ։ Կապիկը

ձեռներով բռնել էր ծառի ճիւղից և գոռում էր։ Հաւաքւել էին մի խումբ կապիկներ և անասելի ճիշ ու աղմուկով աշխատում էին փրկել իրենց ընկերոջը։ Նրանցից մէկը բռնել էր արծւի թերից, միւսը ոտներից, մի ուրիշը վզից և այսպէս քաշքում էին։ Երկար չարչարւելուց յետոյ արծիւը հազիւ կարողացաւ ազատւել նրանց ձեռքից։

Մարդիկ էլ խմբովին ապրելով կարողանում էին պաշտպանւել իրենց թշնամիներից։ Երբ մի գաղան մօտենում էր մարդկանց՝ նրանք ճիշ ու աղմուկով իմաց էին տալիս միմեանց, հաւաքւում էին և քարերով ու փայտերով փախցնում գաղանին։

5

ԽՄԲՈՎԻՆ ԿԵՐԱԿՈՒԻՐ ՃԱՐԵԼԸ

Գարնանը և ամառը, երբ անտառներում կարելի է առատ սնունդ ճարել, գայլերն ապրում են հատ-հատ կամ զոյգ-զոյգ։ Բայց հէնց որ մօտենում է ձմեռը և կերակուր գտնելը դժւարանում է, նրանք խմբեր են կազմում և միասին են որսի գուրս գալիս։ Խմբի մի մասը հալածում է որսը, իսկ միւս մասը աշխատում է նրա առաջը կտրել և շփոթեցնել։ Ինչքան էլ որ ուժեղ լինի կենդանին, ինչը բան էլ որ արագ վազի, այսուամենայնիւ կորած է, երբ ընկնում է գայլերի վոհմակի ձեռքը։

Երբ կապիկներն ուզում են մի մեծ քարի տակից որդեր ու ճիճուներ հանել, նրանք հաւաքւում են քարի շուրջը և ընդանուր ոյժերով շուռ են տալիս քարը։

Այսպէս ուրեմն կենդանիները միացած ոյժերով կարողանում են շատ դժւարութիւնների յաղթել և հեշտութեամբ կերակուր ճարել։

Նախամարդիկ էլ խմբովին էին ձեռք բերում իրենց կերակուրը։ Օրինակ, ընտրում էին անտառով շըջապատած մի փոքրիկ դաշտ, չորս կողմից շըջապատում էին այդ դաշտը, յետոյ շըջանը կամաց-կամաց նեղացնում էին ու

մէջը մնացած կենդանիներին մի տեղ հաւաքում։ Հէնց որ տեսնում էին, որ մի կենդանի խրանեց և ուզում է շրջանից դուրս պըծնել, վայրենի աղաղակ էին բարձրացնում։ Դրանից կենդանիները շփոթւում էին և վախից քարանում։ այդ ժամանակ մարդիկ ճիչ ու աղմուկով յարձակւում էին նրանց վրայ և կոտորում։

Այսպէս ահա խմբական կեանքը հեշտացնում է կերակուր ճարելու գործը։

6

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Նախամարդկանց խմբելը մի որ և է տեղ ապրելով, մի քանի ժամանակից յետոյ սպառում, վերջացնում էին այստեղ գտնւած կերակուրը՝ պտուղները, մանր կենդանիները և այլն։

Ամեն մի խումբ, երբ տեսնում էր, որ ուտելիքը քըշացել է, վեր էր կենում, գնում մի ուրիշ տեղ, որտեղ առատ կերակուր կար։ Երբ այստեղ էլ ուտելիքը պակասում էր, անցնում էին մի այլ տեղ, և այսպէս շարունակ տեղից տեղ էին թափառում։

Մի ուրիշ պատճառ էլ կար, որ ստիպում էր մարդկանց թափառել։ Մարդիկ հետզհետէ շատանում էին։ Մի որոշ տարածութեան վրայ ապրող երկու-երեք խումբը ժամանակի ընթացքում դառնում էր չորս-հինգ խումբ։ Նրանց ուտելիքը պակասում էր։ Խմբերը քաղցից չմեռնելու համար պէտք է նոր բնակավայր որոնէին։

Ահա այս երկու պատճառները ստիպում էին մարդկանց տեղից տեղ անցնել, թափառել։ Այսպիսի կեանքը կոչում է թափառական կեանք։

7

ՔՈՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ


Որսի միսը կտրատելու կամ մի փայտ կտրելու համար մարդիկ արդէն ունէին քարէ դանակներ ու կացին-

ներ։ Պինդ պտուղներ կոտրելու համար նրանք գործ էին ածում քարէ մուրճեր։ Սկզբում այդ գործիքները հասա-



Կոթաւոր քարէ կացիններ

րակ քարի կտորներ էին, յետոյ սկսեցին նրանց կատարելագործել։ Իրենց քարէ կացինը կամ մուրճը նրանք կա-



Կոթաւոր քարէ գործիքներ

պում էին փայտի ծայրին և այդպիսով ստանում կոթաւոր գործիքներ։ Կապելու համար նրանք գործ էին ածում զանազան թելանման բոյսեր։

Այդպիսի գործիքներով աւելի հեշտութեամբ էին աշխատում, քան առաջ: Բայց և այնպէս այդ գործիքներն էլ չէին կարող հաւասարել մեր կացնին ու մուրճին:

Հիմա էլ կան վայրենի ցեղեր, որոնք քարէ գործիքներով են աշխատում: Մի անգամ մի խումբ վայրենիներ անտառում քարէ կացիներով ծառ կտրելիս են եղել: Մի ճանապարհորդ հարցրել է նրանց. «Ի՞նչքան ժամանակ է պէտք մի ծառ կտրելու համար»: Կարողները պատասխանել են. «Մի ծառը կտրում ենք երկու լուսնի ընթացքում»: Ահա թէ որքան դժւար է քարէ գործիքներով աշխատելլ:

Հացահատիկներ մանրելու կամ ծեծելու համար մարդիկ նոյնպէս գործ էին ածում քարի կտորներ: Նրանք հացահատիկներն ածում էին տափակ քարի վրայ և մի ուրիշ քարով ծեծում, մանրում էին: Դա նախնական ա-




Նախնական աղօրիք

ղօրիքն էր: Երկար ժամանակ ծեծելուց տակի քարը ինքն իրեն փորւում, յդկուում էր: Մարդիկ տեսնում էին, որ փորւած քարի մէջ հատիկները թէ լաւ են ծեծում և թէ չեն ցըւում: Այնուհետև նրանք սկսեցին հացահատիկները ծեծել փորւած քարերի մէջ: Այսպէս շինուեց քարէ սանդղ կամ հաւանգը: Սանդերը փայտից էլ էին շինում:

ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ ՍՊԱՆԵԼՈՒ ԵՒ ԲՌՆԵԼՈՒ ԶԵՆՔԵՐ

Սկզբում մարդիկ քարով ու փայտով էին որսորդութիւն անում, բայց զրանցով դժւար էր կենդանիներ սպանելլ, որովհետև նրանք թեթև վէրքեր էին ստանում և մեծ մասամբ փախչում էին: Աւելի խոր վէրքեր հասցնելու համար մարդիկ սկսեցին կատարելագործել իրենց զէնքերն ու գործիքները: Երկար փայտի ծայրին ամրացնում էին սուր քար, ոսկոր, ձկան ատամ կամ մի ուրիշ սուր քան և այսպիսով ստացւում էր մի զէնք, որ կոչւում է նիզակ:




Զինուած վայրենիներ

Քարով ուժեղ խփելու համար շինեցին մի ուրիշ զէնք, որ կոչւում է պարսատիկ:

Պարսատիկ շինելու համար վերցնում էին մի կտոր կաշի, կապում էին նրանից երկու թել՝ մէկը կարձ, միւսը երկար: Արձակելիս երկար թելը փաթաթում էին ձեռքին, կաշւի մէջ քար էին դնում, կարճ թելը պահում էին մատների մէջ և սկսում էին պարսատիկը օդում արագ պտտել: Հէնց որ քաց էին թողնում կարձ թելը, քարը ուժովին

նետում էր հեռուս: Պարսատիկի հարւածը շատ անգամ այնպէս ուժեղ էր լինում, որ կենդանին տեղնուտեղը փըռում էր գետին:

Բայց նախամարդու ամենալաւ զէնքը աղեղն էր: Աղեղ նիզակ արձակելու համար էր, միայն թէ աղեղի նիզակները շատ էին փոքր և կոչում էին նետ:



Աղեղ շինելու համար վերցնում էին մի ձկուն ձիւղ, ձկում էին կիսաշրջանի ձևով և ծայրերը կապում էին ամուր թելով, որին լար են ասում: Նետն արձակելիս կոթը դնում էին լարի վրայ, քաշում էին լարը և յանկարծ բաց

թողնում, ձգւած լարից նետը ուժգին շպրտում էր հեռու: Մարդիկ ունեին և այնպիսի զէնքեր, որոնցով որսը կարողանում էին կենդանի բռնել: Այդպիսի մի զէնք էր պարանը: Դա մի երկար թող էր կամ կաշի, որի ծայրից մի ծանր բան էին կապում կամ օղակ շինում: Երբ զցում էին կենդանու վրայ, պարանը փաթաթւում էր կենդանու ոտին կամ վզին և թոյլ չէր տալիս, որ փախչի:

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Մարդիկ գլխաւորապէս խմբերով էին որսորդութեան գնում և զանազան ձևերով կենդանիներ որսում: Օրինակ, ընտրում էին բարձր խոտով ծածկւած մի դաշտ, տղամարդիկ նիզակները ձեռներին, իրարից հեռու պառկոտում էին այդ դաշտում, խոտերի մէջ: Կանայք ու երեխաները բարձրանում էին մօտակայ բլուրները և անասելի ճիչ ու աղմուկ էին բարձրացնում: Այդ աղմուկից վախեցած դուրս էին թափւում թփերի մէջ պահւած կենդանիները և շփոթւած ցած էին վազում դէպի դաշտը, որ հեշտ կարողանան փախչել: Երբ կենդանին վազում էր պառկած որսորդների մօտով, նրանք մէկ-մէկ վեր էին թռչում, նիզակով խփում էին կենդանուն և խկոյն պառկում իրենց տեղը, որպէսզի հետեւել կենդանիները չնկատեն: Բաւականաչափ կոտորելուց յետոյ, բոլոր որսորդները հաւաքւում էին և որսը ժողովում:

Կենդանիներ որսալու ուրիշ ձևեր էլ կային: Օրինակ, շրջապատում էին անտառի մի մասը և այնտեղ եղած կենդանիներին կամաց քշելով, մի տեղ էին հաւաքում: Այնուհետև ամենափորձած որսորդները ետ քաշւելով շրջանի մի մասը բաց էին անում: Հէնց որ այդ բացւածքից կենդանիներն ուզում էին դուրս պլծնել, որսորդները ուժգին հարւածելով գետին էին գլորում նրանց: Այս ձեռվ մարդիկ երբեմն այնքան էին կոտորում, որ բոլորը չէին



կարողանում ուտել. որսի մեծ մասը մնում էր դաշտում
և փթում:

Երբեմն գետափի մօտ քաշում էին բարձր ու երկար
ցանկապատ: Նրա մէջ մի քանի տեղ փոքրիկ բացւածքներ
էին թողնում: Կենդանիները գալիս էին գետի ափը ջուր
խմելու: Ցանկապատը տեսնելով՝ նրանք անցնում էին բաց-
ւածքներով: Ցանկապատի ետեր, բացւածքների մօտ թագ-
նւած էին լինում որսորդները: Հէնց որ կենդանիները
անցնում էին բացւածքների միջով, որսորդները յարձակ-
ւում էին նրանց վրայ և կոտորում:

Շատ անգամ, երբ որսորդները տեսնում էին, որ կեն-
դանիների մի հօտ է անցնում դաշտի միջով, մի ուզիղ
գծով շարուում էին մէկ մէկու ետևից և կամաց-կամաց
մօտենում հօտին: Երբ բաւական մօտեցած էին լինում,
յանկարծ բաժանուում էին խմբերի և գոռում գոչիւնով
յարձակւում կենդանիների վրայ: Այս ձևով էլ մեծ կոտո-
րած էին անում:

Մարդիկ իրենց նախնական զէնքերով որսում էին նոյն
իսկ այնպիսի հսկայ և ուժեղ կենդանիներ, ինչպիսին վիզն
է: Երբ տեսնում էին, որ փիղը գալիս է, երկու խմբի էին
բաժանուում: Մի խումբը ետեի կողմից յարձակւում էր
փիղի վրայ և վէրքեր հասցնում: Փիղը բարկացած շուռ էր
գալիս դէպի նրանց, այդ ժամանակ յարձակւում էր երկ-
րորդ խումբը: Կատաղում էր փիղը, նորից շուռ էր գա-
լիս, բայց խոյն յարձակւում էր առաջին խումբը: Այս-
պէս փիղը մէկ դէպի առաջին խումբն էր դառնում, մէկ
դէպի երկրորդը, մինչև որ թուլացած տապալւում էր
գետին: Այդ ժամանակ մարդիկ վրայ էին թափւում և ի-
րենց դանակներով ու կացիններով կտրատում էին փղի
մարմինը:

Սակայն որսորդութիւնը միշտ խմբովին չէր կատար-
ւում: Ամեն մի որսորդ էլ իր նետ ու աղեղով կամ նի-
շակով կարողանում էր կենդանիներ և թռչուններ սպանել:

Մարդիկ նիզակներով ձկնորսութիւն էլ էին անում:

Մտնում էին ջուրը, կիսաշրջան էին կազմում և ջրի տակ
սուզւելով՝ նիզակներով խփում էին ձկներին: Երբ մի քա-
նի ձուկ խրւում էր նիզակի ծայրին, դուրս էին բերում
ափը և ուտում:

Այսպէս էլ էին ձուկ որսում: Գետի մէջ ցանկապատ
էին շինում և մէջտեղը մի անցք թողնում: Այդ անցքի
առաջ շարում էին մի քանի կողովներ և օրերով թողնում
էին գետի մէջ, որ ձկներով լցւեն:

Զկնորսութիւն անելով մարդիկ այնքան էին վարժւել,
որ գետերի և ծովերի մէջ կարողանում էին երկար ժա-
մանակ լողալ ու սուզւել: Խմբով մտնում էին ջուրը, լո-
ղալով բաւական հեռանում էին ափից և ջրին խփելով ու
ճչալով աշխատում էին ձուկը քշել դէպի ափը: Հետզհետէ
շըջանը փաքրացնելով, ձուկը հաւաքում էին մի տեղ:
Այնուհետև կանանց ու երեխաների օգնութեամբ լցնում
էին իրենց ցանցերն ու կողովները և ափ գուրս բերում:

Մարդիկ իրենց ձկնորսական ցանցերն ու կողովները
շինում էին տերեններից և թելանման բոյսերից: Երբեմն
այնպիսի մեծ ցանցեր էին շինում, որ միանգամից կա-
րողանում էին հարիւրաւոր ձկներ բռնել:

10

ՊԱՇԱՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԻ

Որսորդութիւնն ու ձկնորսութիւնը մարդկանց կեանքը
առաջւանից աւելի ապահով դարձեց: Սակայն նրանց
կեանքը գեռ այնքան էլ ապահով չէր: Շատ անգամ ոչ մի
որս չէին կարողանում գտնել և քաղցած էին մնում: Իսկ
երբեմն էլ այնքան կենդանիներ էին սպանում, որ բոլորը
չէին կարողանում ուտել, աւելորդը հոտում էր և անպէտ-
քանում:

Մարդիկ կամաց-կամաց սովորեցին իրենց ունեցած
ուտելիքից պաշար պատրաստել, որ քաղցած չմնան:

Սկզբում նրանք կարողանում էին պահել միմիայն

19

հացահատիկներ և զանազան չոր պտուղներ, որոնք հեշտութեամբ չէին փթռւմ: Այդ պաշարը պահում էին փոսերի կամ մաղախների մէջ: Այսուհետեւ, երբ սովորեցին ուսելիքը արևի տակ չորացնել, սկսեցին նաև մսի պաշար պատրաստել:

Չորացնելը կարող էին պատահմամբ սովորել: Առասորսից յետոյ այս ու այն տեղ մսի կտորներ էին մնում թափթփած: Մարդիկ տեսնելով որ արևի տակ մնացած կտորները չորանում են և էլ չեն փշանում, սկսեցին մսի կտորներ շարել արևի տակ և չորացնել:

Մարդիկ կարող էին տեսնել նաև, որ մսի բարակ կամ փոքրիկ կտորներն աւելի շուտ են չորանում և աւելի համեղ են լինում, քան մեծ ու հաստ կտորները, այսուղից հեշտ էր հասկանալ, որ միսը լաւ չորացնելու համար հարկաւոր է բարակ կտրատել:

Նոյնը անում էին առաս ձկնորսութիւնից յետոյ: Քարէ դանակներով ճղում էին ձկները և փռում տաք քարերի վրայ:

Սյսպիսով մարդիկ սովորեցին մսի և ձկան պաշար պատրաստել: Դրանից յետոյ նրանց կեանքը բաւական ապահով դարձաւ, որովհետեւ որս կամ պտուղներ չգտնելու դէպքում, նրանք կարող էին ուտել պատրաստած պաշարից:

11


ՅՂԿԻԱԾ ՔԱՐԷ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Քացի կենդանիների մսից, մարդիկ ուսում էին նաև տեսակ-տեսակ պտուղներ ու սերմեր: Պինդ սերմերը ծեծում էին քարով և այնպէս ուսում: Ծեծելիս նկատում էին, որ մի քարը մաշում, յղկում է միւս քարի երեսը. իսկ երկար ժամանակ միւնոյն գործիքը բանեցնելով, տեսնում էին, որ տակի քարը շատ փորելուց նոյն իսկ ծակւում է:

Այս գիւտը մեծ նշանակութիւն ունեցաւ: Առաջ քարէ

կացին կամ մուրճ շինելիս ստիպւած էին կոթը թելանման բոյսերով ամրացնել: Հիմա արդէն նրանք իրենց կացինը կամ մուրճը ծակում էին և փայտի կոթը այդ ծակի մէջ ամրացնում:

Երբ քարը մաշւելուց յղկում էր, այլ ևս չէր ցաւեցնում մարդկանց ձեռքը և բացի դրանից տւելի լաւ էր կտրում: Այդ պատճառով մարդիկ սկսեցին իրենց գործիքները յղկել ու սրել:



Յղկւած կացիններ

Այն ժամանակը, երբ մարդիկ քարէ գործիքներ էին գործ ածում, պատճութեան մէջ կոչւում է քարի դար:

Քարի դարը բաժանում է երկու շրջանի, առաջին շրջանը կոչւում է չյղկւած քարի դար, իսկ երկրորդը՝ յղկւած քարի դար:

Քարի դարը շատ երկար տևեց: Հազարաւոր տարիներ մարդիկ աշխատում էին քարէ գործիքներով: Այդ տեսակ գործիքներից մի քանիսը մենք մինչև հիմա էլ գործ ենք ածում: օրինակ, քարէ սանդը, երկանքը:

12
ԿՐԱԿԻ ԳԻՒՏԸ

Սկզբում մարդիկ թէս կրակ չէին գործ ածում, բայց բնութեան մէջ տեսնում էին: Այսպէս պատահում էր, որ կայծակն ընկնում, վառում էր անտառը կամ դաշտը: Մարդիկ կրակը տեսնելով սարսափած փախչում էին: Երբեմն էլ նրանք տեսնում էին կրակ գուրս թափող սարեր՝ հրաբուղիներ և դարձեալ վախեցած փախչում էին:

Այսուհետեւ, երբ տեսան, որ կրակը իրենց մնաս չետալիս, այլևս չէին վախենում նրանից:

Մարդիկ կարող էին նկատել նոյնպէս, որ գազանները սարսափած փախչում են կրակից:


Այդ բանը տեսնելով՝ նրանք ուզում էին շարունակ կրակ ունենալ իրենց մօտ, որ պաշտպանուեն դազաններից: Սակայն նա միշտ վառ չէր մնում. երբ փայտը այրում, վերջանում էր՝ կրակը հանգչում էր: Հանգչող կրակի վրայ փայտ էին աւելացնում և այդպիսով աշխատում վառ պահել: Բայց երբ կրակը բոլորովին հանգչում էր, նրանք էլ չէին կարողանում վառել:

Յետոյ մարդիկ գտան կրակ հանելու միջոցը: Քարէ գործիքներ տաշելիս, երբ քարը քարին էին խփում, կայծեր էին գուրս թռչում: Կայծերը չոր խոտի կամ տերեների մէջ ընկնելով կրակ էին առաջացնում: Փայտը փայտին քսելիս էլ կրակ էր առաջ գալիս:

Այդ տեսնելով, մարդիկ վերցնում էին երկու փայտ, արագ քսում էին իրար, մինչեւ որ փայտերը տաքանալով վառեին:

Աւելի հեշտ էին կրակ ստանում, երբ փայտի մի ծայրը խրում էին հողի մէջ, միւսը դէմ էին տալիս կրծքին և մի ուրիշ փայտով սկսում էին արագ քսել, մինչեւ որ փայտը վառէր: Շատ անգամ էլ փայտերով կրակ անելիս, մօտները չոր խոտ էին ունենում, որ փայտը հեշտ

վառւի: Կամ վերցնում էին մի տափակ փայտի կտոր և նրա մէջ փոսիկներ փորում. երբ ուզում էին կրակ հանել, փոսիկի մէջ մի ձող էին դնում և ձեռքի ափերով արագ պտտում: Խիստ շփւելուց ձողիկի ծայրը տաքանում էր և վառւում: Չողը հեշտ պտտելու համար մարդիկ կաշէ թել կապեցին ձողիկին և այդպիսով հեշտացըրին կրակ հանելը:



Մարդիկ թէս կրակ հանելու շատ միջոցներ գիտէին, բայց այդ միջոցներով հեշտ չէր կրակ ստանալը: Այդ պատճառով աշխատում էին իրենց կրակը չհանգնել, միշտ վառ պահել:

Կանայք ու երեխաներն էին նայում կրակին. երբ տեսնում էին, որ կրակը հանգչում է, խկոյն փայտ էին ձգում մէջը և այսպիսով օջախը միշտ վառ էր մնում:

Մինչեւ հիմա էլ հայերս իրար անիծելիս, ասում ենք. «օջախդ հանգչի»: Եթէ հիմա մեր օջախը հանգչի, մենք իհարկէ մեծ մնաս չենք ստանայ, որովհետեւ խկոյն լուցկով կարող ենք վառել: Բայց եթէ նախամարդկանց օջախը հանգչէր, նորից վառելու համար ահագին աշխատանք էր հարկաւոր: Այնպէս որ հիմ ժամանակ «օջախդ հանգչի» խօսքը մեծ անէծք էր:

Կրակի նշանակութիւնը այնքան մեծ էր, որ մարդիկ նրա մասին զանագան առասպելներ էին պատմում: Հին

յոյներն ասում էին, թէ սկզբում կրակը միայն աստւածների ձեռքին է եղել: Պըոմէթէոսը յափշտակել է այդ կրակը և բերել, տւել է մարդկանց, որ նրանք էլ աստւածների պէս օգտւեն կրակի զօրութիւնից: Աստւածները զայրացել են Պըոմէթէոսի վրայ, զղմայել են Կովկասիան լեռներում մի ժայռին ու մի արծիւ են ուղարկել, որ քրքրի, յօշոտի նրա աճող լեարդը:

13

ԽՈՐՈՎԵԼՆ ՈՒ ԹԻԵԼԸ

Մարդիկ նկատելով որ կրակի կամ տաք մոխրի մէջ ընկած ուտելիքը համեղանում է, սկսեցին իրենց ուտելիքը մոխրի կամ կրակի մէջ դցել, որ համեղանայ:

Այդ ձեռվ խորովներոց յետոյ մարդիկ շուտով հասկացան, որ լաւ խորովելու համար հարկաւոր է ուտելիքը կրակից մի քիչ հեռու պահել: Եւ դրա համար զանազան միջոցներ դտան:

Օրինակ, կրակի շուրջը տնկում էին մի քանի ձող, նրանց ծայրերին ամրացնում էին ճիւղերից հիւսած ցանց, ցանցի վրայ շարում էին մսի կտորներ և խորովում:

Կամ երկար ձողին անց էին կացնում մսի կտորներ, ձողը թեք տնկում էին կրակի մօտ և միսը խորովում էր: Եթէ մսի կտորները մանր էին լինում, այն ժամանակ ձողը չէին տնկում հողի մէջ, այլ ձեռքով բռնում էին կրակի վրայ մինչև միսը խորավեր:

Առաջ, քանի մարդիկ ծանօթ չէին կրակի հետ, հացահատիկները մանրում, աղում էին, ապա ջրի հետ խառնելով շփոթ էին շինում և ուտում:

Իսկ երբ խորովելու արւեստը սովորեցին, սկսեցին ալիւրի շփոթը կպցնել կրակով տաքացած քարերին և թիւել:

Մի քանի ցեղեր եղիպտացորենի ալիւրը խառնում էին սառը ջրի հետ, ստացւած շփոթից պատրաստում էին ձեռքի ափի մեծութեան և երկու մատի հաստութեան լո-

շեր: Այդպիսի լոշերը փաթաթում էին տերեների մէջ, շարում էին տաք մոխրի վրայ և կրակով ծածկում: Այս ձեռվ լոշերը շատ լաւ էին թխում:

Բայց նախամարդկանց հացը անխաշ էր, որովհետև նրանք դեռ չգիտէին խմոր թթւեցնելը: Խմոր թթւեցնելու հետ նրանք բաւական ուշ ծանօթացան: Դեռ մինչև հիմա էլ գործ է ածւում անխաշ հացը: Օրինակ, վրացիների պատրաստած ձաթը (եղիպտացորենի հացը) անխաշ է: Անխաշ հաց է նաև մեր նշխարը, հրէաների գատկական բաղարջը:

14

ԿՐԱԿՈՎ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Նախամարդկիկ կրակով նոյն իսկ որսորդութիւն էին անում: Նրանք գնում էին թփերով ծածկւած դաշտերը, որովհետև գիտէին, որ թփերէ մէջ շոգից պահւած էին լինում զանգան կենդանիներ: Թփերը կրակում էին, որ կենդանիները դուրս փախչեն նրանց միջից: Եւ իսկապէս, կենդանիները սարսափահար դուրս էին թռչում վառող թփերից ու փախչում. բայց շուտով խրտնած ետ էին դառնում, որովհետև դիմացի կողմն էլ կրակ էր լինում վառած: Կենդանիները շւարում էին, չէին իմանում՝ ուր փախչեն: Այդ ժամանակ յանկարծ վայրենի աղաղակներով դուրս էին վագում պահ մտած մարդիկ և կոտորում կենդանիներին:

Շատ անգամ էլ անտառի մօտ բարձր ցանկասլատ էին քաշում քամու հակառակ կողմը և ցանկապատի մէջ տեղտեղ բացւածքներ թողնում: Բացւածքների մօտ կանգնում էին աղաղաղդիկ դագանակներով կամ նիզակներով: Երբ այս ամենը պատրաստ էր լինում, կանայք ու երեր այս ամենը պատրաստ էր լինում, որտեղից բամին խաները գնում էին անտառի այն կողմը, որտեղից բամին վշում էր, և մի քանի տեղ կրակ էին վառում: Կրակը վշում էր, և մի քանի տեղ կրակ էին վառում: Կրակը արագ սկսում էր տարածւել: Կենդանիները սարսափած արագ սկսում էր տարածւել:

25

վագում էին ցանկապատի կողմը և անցնում էին բացւածքների միջով. այդ ժամանակ բացւածքների մօտ կանգնած որսորդները անխնայ կոտորում էին նրանց:

15

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Թէկ մարդիկ բաւական վարժւել էին որսորդութեան մէջ, բայց և այնպէս նրանց կեանքը դեռ էլլի ապահով չէր: Պատահում էր, որ օրերով թափառում էին որսի ետելից և յաջողութիւն չգտնելով վերադառնում էին տուն: Մարդիկ պաշար էլ միշտ չէին ունենում:

Որսորդական կեանքի անապահովութիւնը վերացաւ այն ժամանակ, երբ մարդիկ սկսեցին զանազան թռչուններ ու կենդանիներ պահել իրենց մօտ և օգտւել նրանցից:

Մարդիկ թռչուններին և կենդանիներին միանգամից ընտելացրին, այլ հետզհետէ: Ընտելացումը կատարւում էր զանազան ձևերով.

1) Որսորդութիւնից վերադառնալիս մարդիկ երբեմն իրենց հետ բերում էին զանազան թռչունների և կենդանիների ձագեր: Այդ ձագերը շատ անգամ նրանք բերում էին ոչ թէ ուտելու, այլ խաղացնելու, գլարճանալու համար: Զագուկների հետ սիրում էին խաղալ թէ մեծերը և թէ փոքրերը: Այդպիսով ձագերը մնում էին մարդկանց մօտ: Նրանցից շատերը մեծանալով ընտելանում էին— ապրում մարդկանց մօտ և էլ չէին հեռանում նրանցից, իսկ մարդիկ առաջւայ պէս սիրով պահում էին նրանց: Փոքր հասակից ընտելացնելը շատ հեշտ էր:

2) Մարդկանց ընակավայրի մօտ միշտ կարելի էր գտնել կերակրի մնացորդներ: Այդ պատճառով մի քանի կենդանիներ, օրինակ, խողը, շունը, մուկը շարունակ թափառում էին մարդկային ընակավայրի մօտ: Այդ կենդանիները հետզհետէ մօտենում, ընտելանում էին մարդկանց: Մարդիկ նրանց չէին հալածում, որովհետեւ նրանցից վնաս

չէին ստանում: Ընդհակառակը շատ անգամ նոյն իսկ օգտում էին այդ կենդանիներից՝ բռնում էին և ուտում:

3) Մարդիկ մի ուրիշ բան էլ ունէին, որ նոյնպէտք քաշում մօտեցնում էր մի քանի կենդանիների. դա կրակն էր: Կատունները, օրինակ, մինչև օրս էլ սիրում են կրակի մօտ նստել: Բայց կատուններին ընտելացնողը միայն կրակը չէր: Նրանք տեսնելով որ մարդկանց ընակավայրի մօտ բռն են դրել բազմաթիւ մկներ՝ այլ ևս չէին հեռանում մարդկանցից:

4) Կենդանիների ընտելացնելուն բաւական օգնում էր պարանը: Այդ գործիքով մարդիկ կարողանում էին որսը կենդանի բռնել: Եթէ բռնած կենդանին հանդարտ էր լինում, շատ շուտ էր ընտելանում. օրինակ, ոչխարներին ընտելացնելը շատ հեշտ էր:

5) Ոչխարները այնքան հանգիստ կենդանիներ են, որ մարդիկ շատ անգամ նոյն իսկ չէին բռնում նրանց, այլ թռղնում էին, որ մնան անտառում կամ դաշտում: Բայց որպէսզի չփախչեն, դաշտը կամ անտառը շրջապատում էին բարձր ցանկապատով: Ցանկապալը նրանց պաշտպանում էր գազաններից:

Ահա այսպէս, մարդիկ ժամանակի ընթացքում ընտելացրին շանը, կատւին, ոչխարին, այծին, կովին, գոմշին, ձիուն, իշին, ուղտին, փղին, հաւին, սագին, բաղին և այլն:

Ընտելացը կենդանիներից մարդիկ շատ օգուտներ էին ստանում: Այդ պատճառով հետզհետէ նրանք ընտանի կենդանիների թիւը սկսեցին շատացնել և այդպիսով անսանապահ կամ լսաշնարած դարձան:

Անամնապահութիւնը նրանց կեանքը աւելի ապահովեց, այլևս օրերով չէին թափառում որսի ետևից, այլ օգտուում էին իրենց ընտանի կենդանիներից:

Խաշնարածութիւնն աւելի թափառական դարձեց մարդկանց: Առաջ նրանք իրենց ուտելիքի համար էին թափառում, իսկ հիմա պէտք է թափառէին, որ իրենց կենդանիների համար կերակուր ճարեն:


ԵՓԵԼՈՒ ԱՐԻԵՍՏԸ ԵՒ ԿԱՀԻ ԱՄԱՆՆԵՐԸ

Մարդիկ իրենց թափառումների ժամանակ երբեմն պատհում էին տաք աղբիւրների: Նրանք նկատում էին, որ տաք ջուրը փափակացնում է հացահատիկները, պտուղները, միսը:

Այժմ, երբ արդէն գտել էին կրակը, իրենք էլ կարող էին ջուր տաքացնել: Դրա համար ամաններ էին հարկաւոր:

Դեռ մինչև կրակի գիւտը նրանք իբրև աման գործ էին ածում զանազան պտուղների կճեպներ կամ կենդանիների պատեաններ. այսպէս՝ գործ էին ածում գլուխներ, խոշոր ընկոյզներ, կրիայի վահաններ և այլն:

Առաջ այդ ամանների մէջ նրանք պահում էին իրենց ուտելիքն ու խմելիքը: Իսկ կրակը գտնելուց յետոյ սկսեցին նաև ջուր տաքացնել:



Հիւսւած ամաններ

Մարդիկ չբաւականացան այս ամաններով: Նրանք հետզհետէ շինեցին աւելի յարմար ամաններ: Փայտից շինում էին թասեր, ճիւղերից հիւսում էին քթոցներ և զամբիւրներ, կենդանիների մորթին ամբողջապէս հանելով պատրաստում էին տկեր և այլն:

Երբ ամանները կրակի վրայ էին դնում, տեսնում էին, որ նրանք այրւում են: Այդ պատճառով նրանք սկսեցին ամանները տաք մոլարի վրայ դնել:

Ջուրը տաքացնում էին նոյն իսկ հիւսւած քթոցներով: Դրա համար քթոցները թաց էին անում և այնքան տրորում էին, մինչև որ հիւսւածքները կրար մօտենում, կպչում էին ու ջրի համար անթափանց դառնում:

Մարդիկ շուտով նկատեցին, որ կաւը ջուր պահելու յատկութիւն ունի: Այս բանը նրանք կարող էին պատահմամբ տեսնել: Հիւսւած ամանը կաւահողի վրայ դնելով նրանք նկատում էին, որ ամանին կպած կաւը պահում է ամանի միջի ջուրը: Այս բանից նրանք կարող էին գլխի ընկնել, որ հիւսւած ամանները կաւով ծեփեն: Այդպէս էլ անում էին: Ծեփած կաւը պնդանում էր և ամանը անթափանց դարձնում: Կաւով պատած քթոցները կարելի էր նաև կրակի վրայ դնել: Ամանի կաւը կրակի վրայ այրւում, թրծում էր և քարի պէս պնդանում: Ստացւում էր կաւապատ աման:


Այս տեսակ ամաններով նրանք արդէն կարողանում էին ջուրը եռացնել: Եռացրած ջրի մէջ ուտելիքը ոչ միայն փափկում էր, այլև եփում: Դրանից յետոյ մարդիկ սովորեցին կերակուր եփել:

Կաւապատ քթոցներից յետոյ իսկական կաւէ աման շնելը շատ հեշտ էր: Երբ քթոցը ներսից ծեփում էին կաւով և կրակի վրայ դնում, տեսնում էին, որ քթոցը այրւում է, իսկ կաւը պնդանում, թրծում: Ստացւում էր կաւէ աման: Այդպիսի ամանների վրայ դրսից մնում էին հիւսւածքի հետքերը նախշերի նման:

Այնուհետև այնքան վարժւեցին կաւագործութեան մէջ, որ առանց քթոցների էլ կարողանում էին զանազան ձևի ամաններ պատրաստել, ինչպէս որ հիմա էլ պատրաստում են մեր բըռւաները — կաւագործները:

Եփելու արւեստը մեծ նշանակութիւն ունեցաւ մարդկանց համար: Բազմաթիւ դժւարամարս սերմեր ու պտուղ-

Ներ այժմ հեշտամարս դարձան։ Այնուհետև մարդիկ կարողանում էին տեսակ-տեսակ կերակուրներ պատրաստել, թէ բուսեղին և թէ մսեղին։



Կառէ աման հիւսւածքի հետքերով

Եփելու արւեստի հետ միասին մտաւ նաև գդալի ու պատառաքաղի գործածութիւնը, որովհետև տաք կերակուրը դժւար էր ձեռքով ուտել։ Թէ գդալները և թէ պատառաքաղները պատրաստում էին փայտից։ Նախնական պատառաքաղը մի սրածայր փայտիկ էր։ Այդպիսի պատառաքաղներ մինչեւ հիմա էլ գործ են ածւում Զինատաշնում։

17

Զ Ա Ր Դ Ե Բ Ռ

Ինչպէս որ հիմա մարդիկ սիրում են զարդարւել, պճնւել, այնպէս էլ նախամարդիկ սիրում էին զարդարւել։ Մենք հիմա զարդերը կրում ենք գլխաւորապէս շո-

քերի վրայ, իսկ նախամարդիկ կրում էին մերկ մարմնի վրայ, որովհետև դեռ հագուստ չունէին։ Ճանապարհորդները մերկ մարդիկ շատ են տեսել, բայց առանց զարդարանքի մարդ չեն տեսել։

Բազմատեսակ էին նախամարդկանց զարդերը։ Նրանք իրենց մազերը զարդարում էին փայլուն փետուրներով։ Վզից, ձեռքերից, ոտներից, մէջքից կապում էին թելեր, իսկ թելերին անց էին կացնում գոյնզգոյն խեցիներ, սիրուն փայտիկներ, քարեր, ոսկորներ, ատամներ, փայլուն մետաղներ և այլն։

Ամենից շատ իրեր կրում էին մէջքին կապած թելից, որովհետև այդտեղից կախկխւած իրերը չէին խանգարում աշխատանքի ժամանակ։ Մէջքի թելից կախում էին տեսակ-տեսակ խեցիներ, գոյն-գոյն քարեր, զանազան ձևի ոսկորներ, փայլուն փետուրներ, գե-

ղեցիկ մորթերի կտորներ։ այնպէս որ շատ անգամ կախկխւած իրերը զոգնոցի պէս ժածկում էին մարմնի մերկութիւնը առջելից ու ետեից։

Նախամարդիկ իրենց մազերը սանրում էին այլ և այլ ձևերով, որպէսզի գեղեցիկ երևան։

Նրանք սիրում էին նաև գոյնզգոյն ներկերով նախ-



Զարդարւած փայտենի

շել իրենց մարմնի զանազան մասերը՝ երեսը, գլուխը, մատները, ատամները։ Երբեմն նրանք տասնեակ վերստեր էին անցնում ներկեր բերելու համար։ *)

Ներկերը գործ էին ածում ոչ միայն իբրև զարդարանք, այլ և որպէս վախեցնելու միջոց, աշխատում էին



Զարդարւած գլուխներ

ներկերով դէմքը սարսափելի դարձնել և դրանով վախեցնել թշնամիներին։


Մի քանի զարդեր առաջ են եկել հաւատալիքից, նախամարդիկ կարծում էին, թէ իրենց աստւածները կերակրուում են արիւնով. այդ պատճառով, երբ ուզում էին

*) Երեսին ներկեր բոելու սովորութիւնը մինչև հիմա էլ մնացել է կանաց մէջ, իսկ մատներն ու մազերը ներկելու սովորութիւնը՝ մահեղականների մէջ։

աստւածներին դուր գալ, կտրում էին իրենց մարմինը և արիւն բաց թողնում աստւածների համար։

Նոյն էին անում հիւանդութիւնների ժամանակ։ Երբ մէկը հիւանդանում էր, նրանք կարծում էին, թէ որ և է աստւած բարկացել է հիւանդի վրայ. իսկոյն հիւանդի մարմնից արիւն էին բաց թողնում, որ բարկացած աստւածը խմի ու հանդստանայ։

Կտրուած վէրքերի հետքերը մնում էին մարմնի վրայ։ Այդպիսի հետքեր ունեցող մարդը նոյն իսկ պարծենում էր, որովհետև հետքերը ցոյց էին տալիս, որ նա ծառա-



Մարմինը գաջած նախշած ազնիկ

յութիւն է արել աստւածներին։ Որպէսզի հետքերը չոչնչանային, նրանք զանազան առարկաներ էին ցցում կտրուածքների մէջ։ Այսպէս օրինակ, անց էին կացնում ոսկորներ, խեցիներ, սիրուն փայտիկներ, փայլուն մետաղներ և այլն։

Շատ անգամ արիւն բաց թողնելու համար մարմինը ոչ թէ կտրում էին, այլ ծակծկում էին ծկան ատամներով, այդ ծակոտիները լցնում էին գոյնզգոյն ներկերով, և ըստացուում էին սիրուն նախշեր, որոնք երբէք չէին ջըն-

ջւում: *) Վերջը այդ կարւածքներն ու նախշերը զարդարանք դարձան: Այնուհետև մարդիկ իրենց մարմինը դաջում էին ոչ թէ աստւածներին արիւն տալու համար, այլ զարդարւելու, սիրուն երևալու համար:

Զարդերը գործ էին ածում նաև իրրև ցեղական նըշաններ: Մի ցեղի բոլոր անդամները այտի վրայ ունենում էին մի տեսակ կարւածքներ, մի ուրիշ ցեղի անդամները ականջներից քաշ էին անում օղեր, մի երրորդ ցեղը զըլուխը ներկում էր կարմիր ներկով և այլն: Դրանով ցեղերը տարբերում էին իրարից:

Դարեր են անցել, բայց մինչև օրս էլ մարդիկ գործ են ածում զանազան զարդարանքներ՝ ականջօղեր, մատանիներ, ապարանջաններ, վզնոցներ, շղթաներ, այլև աշխատում են սիրուն ձև տալ իրենց մազերին: Այս բոլորը հիմա միայն զարդարանքներ են, իսկ մի ժամանակ նրանք եղել են նաև ցեղական նշաններ:

18

Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն


Մարդիկ շատ օգուտներ էին ստանում կրակից: Կրակը նրանց պաշտպանում էր զազանների յարձակումներից: Կրակով նրանք որսորդութիւն էին անում: Կրակի վրայ պատրաստում էին իրենց կերակուրը: Այդ պատճառով մարդիկ ամեն կերպ աշխատում էին, որ կրակը միշտ վառ մնայ:

Բայց ինչքան էլ որ աշխատէին կրակը վառ պահել, այնուամենայնիւ քամին ու անձրկը չէին թողնում, որ վառ մնայ:

Հարկաւոր էր կրակը պաշտպանել քամուց և անձրելից:

*) Մարմինը դաջելու սովորութիւնը պահպանւել է, օրինակ, հայերիս և մահմեղականների մէջ: Դաշտած մարմին ունեցողները մեզանում մահտեսի կամ հաջի են կոչում:

Եւ ահա մարդիկ զանազան միջոցներ են գտնում կրակը պաշտպանելու համար: Այս կողմը, որտեղից քամին փշում էր, պատւար էին շինում, և կրակը հանդարտ վառում



Դեմնի վրայ շինուած բնակարան

էր: Իսկ անձրեկց պաշտպանելու համար գետնի մէջ մի քանի ցցեր էին տնկում, դրանց վրայ ամրացնում էին ճիւղեր, ճիւղերի վրայ փռում էին տերեններ կամ մորթիներ: Այսպիսով ըստացւում էր մի ծածկ, որի տակ աշխատ վառում էր կրակը: Գիշեր ժամանակ կամ վատեղանակներին մարդիկ նստուում էին այդ ծածկերի տակ, կրակի շուրջը բորբած: Այնուհետև




Վայրենիները տուն են շինում

ակսեցին ծածկերի տակ ալրել: Այսպիսով կրակի պահպանեցին ծածկերի տակ ալրել: Այսպիսով կրակի պահպանութեան համար շինուած ծածկը ընակարան դարձաւ:

Նախամարդիկ իրենց բնակարանները շինում էին թէ
գետնի երեսին, թէ գետնի տակ և թէ ջրերի մէջ:

1) Գետնի մէջ ցցեր էին տնկում և ցցերի աղատ
ծայրերը իրար մօտեցնելով կապում էին: Տնկած ցցերը
ամեն կողմից ծածկում էին ճիւղերով, տերևներով, խո-
տով, եղեգնով կամ մորթիներով: Մտացւում էր վրանաձե
տուն (դագա): Տան մէջտեղը վառում էր օջախը: Օջախի
ծուխը դուրս էր գալիս կամ կողքի բացւածքից (դռնից),
կամ առաստաղի մէջ թողած անցքից (երդիկից):




Եղեգնից շինած բնակարաններ

2) Գետնափոր բնակարանները այսպէս էին շինում:
Հոր էին փորում, նրա վրայ ձգում էին գերաններ, գե-
րանների վրայ ածում էին ճիւղեր, տերևներ, կամ մոր-
թիներ փուռմ: Այս տեսակ տների մէջտեղն էլ վառում էր
օջախը, որի ծուխը նոյնպէս դուրս էր գալիս երդիկից:

Գետնափոր խրճիթների մէջ էին ապրում նաև հին
հայերը: Նրանց խրճիթները մեծ և ընդարձակ էին, բայց
մուտքը ջրհորի բերանի նման նեղ էր ու խոր: Մուտքը
շինուած էր միայն անասունների համար: Իսկ մարդիկ

ներս ու գուրս էին անում երդիկից իջնող սանդուղով:
Տների մէջ մի կողմը պահում էր՝ այծ, ոչխար, կով, հաւ,
իսկ միւս կողմը՝ շտեմարանների մէջ՝ ցորեն, գարի, բան-
ջարեղէն, գինի:

3) Գետերի և լճերի մօտ բնակւող մարդիկ իրենց
տները շինում էին ցցերի վրայ, ջրից մի քանի արջին
բարձր: Ափից ոչ հեռու, ջրի մէջ տնկում էին երկար ու
ամուր ցցեր: Ջրից դուրս ցցւած ծայրերի վրայ ամրաց-




Ցցային շինքեր

նում էին գերաններ: Այնուհետև դրանց վրայ ձողեր գը-
ցելով յատակ էին շինում: Այդպիսի յատակը խորդ ու բորդ
էր լինում, այդ պատճառով ծածկում էին կաւով, աւազով
ու մանր քարերով:

Յատակը պատրաստելուց յետոյ վրան կառուցանում
էին մի քանի խրճիթներ: Այդպիսով ջրի վրայ շինում էր մի
կամ մի քանի խրճիթներ: Կամ կամուրջներով: Կա-
մուրիկ գիւղ, որը ափի հետ միանում էր կամուրջներով: Կա-
մուրիկ գիւղ այսպէս էին շինուած, որ կարելի էր վերցնել:
Ափ դուրս գալու համար նրանք գործ էին ածում նաև
մակոյկներ: Նախնական մակոյկը ծառի հաստ կոճղ էր,
մէջը փորած:

Ցցերի վրայ շինուած բնակարանները մարդկանց պաշտ-

պանում էին գաղաններից, կրծող կենդանիներից և թռւնաւոր միջատներից։ Ցցային բնակարանները շատ յարմար էին նաև ձկնորսութեան համար։



399

Մի քանի ցեղեր սովորութիւն ունէին շատ մեծ և
ընդարձակ բնակարաններ շինելու։ Այդպիսի բնակարան-
ներում ապրում էին մինչև երկու-երեք հարիւր հոգի, եր-
բեմն սոյնիսկ աւելի։

‘Նախամարդու բնակարանում կահկարասիք չկար: Մարդիկ յատակի վրայ էին նստում ու պառկում. յատակի վրայ փոռում էին խոտ կամ մորթիներ: Մէջտեղը վառում էր օջախը: Մի անկիւնում շարւած էին ամաններ, պատերից կախւած էին գէնքեր ու գործիքներ: Ահա այսպիսի պարզ տեսք ունէր նախամարդու տունը:

Անասունները պահում էին կամ առանձին տներում (գոմերում), կամ հէնց մարդկանց բնակարաններում, ինչ-պէս հին Հայաստանում։ Երբեմն անասունների կացարանը մի ցածր պատով բաժանւած էր լինում մարդկանց բնակարաններից։

Քանի դեռ մարդիկ ապրում էին տաք երկիրներում, նրանք հագուստի կարիք չունեին, ման էին գալիս բոլորովին մերկ: Մարմնի մերկութիւնը մի քիչ ծածկւեց այն ժամանակ, երբ մէջըին կապած թելից այլ և այլ զարդարանքներ կախիլիսեցին:

Էլքակի ու բնակարանի գիւտից յետոյ մարդիկ կաբո-
ղանում էին ցուրտ երկիրներ գնալ։ Այստեղ արդէն անկա-
րելի էր մերկ ման գալ, և մարդիկ սկսեցին իրենց մար-
մինը մորթիներով ծածկել:

Վերցնում էին որ և է կենդանու մորթի, ծակում էին
մէջտեղը և, զլուխը միջից անց կացնելով, փաթաթւում էին
նրա մէջ:

Յեսոյ, երբ տեսան, որ ցուրտը ներս է թափանցում
բացւածքներից, սկսեցին մոլթիները թելերով մարմնի
շուրջը փաթաթել:

Այժմ թէև չէին մըսում, բայց չէին կարող ազատ շարժել, աշխատել, որովհետև փաթաթած մորթին հուպ էր տալիս ամեն կողմից։ Այդ պատճառով սկսեցին մորթին կտրատել և մարմնի զանազան մասերին կտոր-կտոր փաթաթել—մէջքին ու կրծքին առանձին, ձեռքերին ու ոտքերին էլ առանձին։ Հիմա արդէն կարող էին ազատ շարժել։

Ժամանակի ընթացքում մէջքի փաթաթանը միացրին թևերի փաթաթաններին, և ստացւեց շապիկ։ Ոտի փաթաթաններն էլ միացրին, և ստացւեց վարտիք։

Առաջ մարդիկ գլխաբաց էին ման գալիս, յետոյ սկսեցին պահարկ կամ փաթող գործ ածել:

Մարդիկ սկզբում կենդանիների մորթին անպատճառ էին գործ ածում: Բայց յետոյ տեսան, որ անպատճառ կաշին հոտում, որդինում է. հոտում էր մորթու վրայ մետ-

ցած միսն ու ճարպը: Այդ բանը նկատելով նրանք սկսեցին մորթին ջուրը դնել և բարով կամ փայտով մաքրել միսն ու ճարպը:

Շատ անգամ էլ մորթին կախում էին ծխի վրայ, որ միսն ու ճարպը ոչնչանայ: Սկզբում մորթիներն այդպէս էին պատրաստում:

Հետզհետէ մարդիկ վարժւեցին կաշեգործութեան մէջ: Փոխանակ փայտով կամ քարով քերելու, սկսեցին զանազան բոյսերով տրորել կամ, ինչպէս ասում են, ղալաղել: Դաբաղած կաշին այլ ևս չէր որդնում: Դաբաղելու համար գործ էին ածում ծառերի կեղևներ, մատղաշ եղիպտացորենի հեղուկը և այն:

Կաժն մինչև օրս էլ այդ ձևով ենք պատրաստում:

20

ԳՈՐԾԵԼՈՒ, ՄԱՆԵԼՈՒ ԵՒ ԿԱՐԵԼՈՒ ԱՐԻԵՍՏՆԵՐԸ

Դեռ շատ վաղ ժամանակներից մարդիկ թելանման բոյսերից հիւսում էին հաստ ու բարակ թոկեր, ձկնորսութեան համար պատրաստում էին ցանցեր, քթոցներ, կողմներ:

Այնուհետև նրանք սկսեցին խիտ ցանցանման կտորներ հիւսել, հիմիկւայ մեր խսիրների նման:


Հետզհետէ մարդիկ այնպէս կատարելագործեցին հիւսելու արւեստը, որ սովորեցին կտորներ գործել: Սկզբնական գործւածքը շատ քիչ էր զանազանում հիւսւած խըսիրներից: Դա էլ թելերից կազմւած հիւսւածք էր: Թելերի մի մասը անց էին կացնում աջից ձախ, միւսները՝ վերևից ներքև:

Նեգրերը մինչև հիմա էլ խսիրների նման կտորներ են գործում հագուստի համար և գործելիս ոչ մի գործիք չեն բանեցնում: Թէև նրանք իրենց մատները շարժում են շատ արագ-արագ, բայց և այնպէս ամենալաւ գործողը մի շա-

բաթւայ մէջ հազիւ կարողանում է մի արշինաչափ կտոր գործել:

Գործւած կտորներից մարդիկ շորեր էին կարում:

Կարելու համար գործ էին ածում կաշւից կամ բոյսերից պատրաստած թելեր և քարէ կամ ոսկրէ ասեղներ: Ասեղով նրանք ոչ թէ կարում էին մեզ նման, այլ միայն ծա-



Աւտուալիացիների գործւածք

Գործւածք. մանելու գործելու և կարելու գործիքներ

կում էին կտորը, իսկ թելը ձեռքով էին անց կացնում: Այնուհետև արդէն ասեղի մի ծայրը ծակեցին և ծակի մէջ թել անց կացնելով սկսեցին մեզ նման կարել:

Անցաւ բաւական ժամանակ, մարդիկ ծանօթացան բամբակի, բրդի, վուշի, մետաքսի հետ. այս նիւթերից սովորեցին թել մանել և մանածից կտորներ գործել: Բայց այս բանը շատ ուշ սովորեցին, որովհետև մանելու և գործելու համար հարկաւոր էին աւելի բարդ գործիքներ՝ սանդերք, ծախարակ, իլիկ, տոռք և այլն:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Շատ հին ժամանակներից արդէն մարդիկ հացաբոյսերի սերմեր էին հաւաքում ուտելու համար: Հաւաքած սերմերի մի մասը անմիջապէս ուտում էին, իսկ միւս մասը որպէս պաշար պահում քարերի տակ կամ փոսերի մէջ:

Այդ տեղերում թափթփած հատիկներից շատ անգամ բուսնում էին իրենց ծանօթ հացաբոյսերը: Մարդիկ տեսնելով, որ հողի մէջ ընկած հացահատիկները բուսնում են և պտուղ տալիս, սկսեցին հողի մէջ փոսիկներ փորել ու հացահատիկներ թաղել նրանց մէջ, որ աճեն ու աւելի շատ պտուղ տան:

Այստեղ, ուր երկիրը ծածկւած էր անտառներով կամ անպէտք վայրի խոտերով, մարդիկ այրում էին ծառերն ու խոտերը և բացւած տեղը ցանում: Նրանք նկատել էին, որ այրւած տեղերում բերքը աւելի առատ է լինում:


Մի քանի երկիրներում հողն այսպէս էին մշակում: Տղամարդիկ սրածայր ցցեր կամ քլունզներ ձեռներին կողք կողքի շարւած քանդում էին հողը: Նրանց ետևից գալիս էին կանայք և մանրացնում հողի մեծ կտորները. իսկ կանանց ետևից եկող երեխաները փշրում էին մանր կտորները: Այստեղուար արդէն ցանում էին և սերմը հողով ծածկում:

Այսպէս սկզբում հողը շատ հասարակ դործիքներով էին քանդում:

Այժմ էլ կան ցեղեր, որոնք հողը մինչև անգամ չեն էլ քանդում: Աֆրիկայի ժողովուրդներից մի քանիսը վար ու ցանքի ժամանակ ոչ գութան են բանեցնում, ոչ եզներ. Նրանք կացնով կտրում են մեծ ծառերը, ցաքատով կտըրտում ճիւղերը, փորիչով քաղհանում անպէտք բոյսերը և թողնում են, որ չորանան: Ապա սաստիկ քամու ժամանակ կրակ են տալիս չորացած ծառերը, որ այրւեն, մո-

խիք գառնան: Այնուհետև, երբ անձրկ է գալիս ու հողը թրջում է, ցանում են բրինձ և ուրիշ բոյսեր:

Երկրագործութիւնը աւելի զարգացաւ, երբ մարդիկ սկսեցին արօրով կամ գութանով վարել:



Մարդիկ քլունզով հող են քանդում

Նախնական գութանը նման չէր մեր գութանին: Դամի գերան էր, որի վրայ թողել էին մի ճիւղ և ծայրը սրբել: Գերանը քաշ էին տալիս գետնի երեսով, սրածայր ճիւղը մտնում էր հողի մէջ և ակօսում: Թէև այսպէս հասարակ էր նախնական գութանը, բայց նրանով հողը շատ աւելի լաւ էր փորւում, քան սրածայր ցցերով կամ քլունզներով: Բացի դրանից գութանով աւելի շուտով կարելի էր վարել:

Վերջը գութանի ծայրին, վերկից, մի փայտ ամբացը ըին, որ կոչւում է մսմ: Մածկալը այդ փայտից բռնած թոյլ չէր տալիս, որ գութանը շուռ գայ և ակօսից գուրմ ընկնի:


Երբ մարդիկ սկսեցին մետաղներ գործ ածել, գութա-
նի ճիւղի ծայրին սուր բերանով երկաթ ամրացրին, որ
հողը աւելի հեշտ փորուի: Այդ երկաթը կոչւում է խոփի:

Առաջ գութանը մարդիկ էին քաշում, իսկ յետոյ սկս-
ցին անասուններ լծել ու այնպէս վարել:



Մարդիկ գութանին լծած հող են վարում

Երկրագործութիւնը ապահով դարձրեց մարդկանց
կեանքը: Այժմ հողից ստանում էին ամբողջ տարւայ պա-
շարը և էլ կարիք չունէին տեղից տեղ թափառելու: Նրանք
մնում էին միւնոյն տեղը և այդպիսով նստակեաց դառ-



Արօրին եղներ լծած հող են վարում

նում: Բայց մարդիկ միանգամից չդարձան նստակեաց,
որովհետև սկզբում երկրագործութեան հետ դեռ էլի շարու-
նակում էին որսորդութեամբ կամ խաշնարածութեամբ պա-
րապել:

ԲՐՈՆԶԻ ԵՒ ԵՐԿԱԹԻ ԴԱՐ

Դեռ շատ հին ժամանակ, քարի դարում, մարդիկ ծա-
նօթ էին զանազան մետաղների հետ:

Քարէ գործիքների համար քարեր փնտոելիս նըանք
երբեմն գտնում էին պղնձի, արծաթի, երկաթի կտորներ:

Մի քանի երկիրներում գետերի ափին, աւագի մէջ,
նըանք տեսնում էին ոսկու հատիկներ, որ ջուրը բերում
էր սարերից:

Երբեմն օջախ վառելիս տեսնում էին մի տեսակ հող
(երկաթի հանք), որ կրակից կարմրում, փափկում էր, իսկ
յետոյ պնդանում:

Այսպէս, մարդիկ թէկ ծանօթ էին զանազան մետաղ-
ների հետ, բայց նըանցից դեռ չէին կարողանում գործիքներ
ու զէնքեր պատրաստել: Այդ բոլոր մետաղները սկզբում
նըանք գործ էին ածում իբրև զարդարանքներ:

Յետոյ կամաց-կամաց սկսեցին մետաղներից գործիք-
ներ ու զէնքեր շինել:

Պղնձից գործիք շինելը շատ հեշտ էր, որովհետև մա-
քուր պղնձը փափուկ է: Քարէ մուրճով նըան կարելի էր
ամեն տեսակ ձև տալ: Բայց հէնց փափուկ լինելու պատ-
ճառով պղնձից չէր կարելի զէնքեր պատրաստել. կարելի
էր միայն զարդարանքներ ու ամաններ շինել:

Այսուհետև, երբ մարդիկ տեսան, որ պղնձը կրակից
հալւում է, սկսեցին պղնձից զանազան իրեր ձուլել:

Պղնձը հեշտութեամբ էր հալւում, հալւածը լցնում
էին զանազան կաղապարների մէջ և ստանում էին ուզած
առարկանները: Բայց ձուլւած պղնձն էլ փափուկ էր մը-
նում. նըանից էլ չէր կարելի զէնքեր շինել:


Յետոյ մարդիկ գտան մի ուրիշ մետաղ, որ կոչւում
է կլայեկ կամ անագ. այդ մետաղը պղնձի հետ հալելով
ստանում էին բաւական պինդ մետաղ—բրոնզ: Բրոնզից

արդէն կարելի էր զէնքեր շինել: Այդ պատճառով բրօնղի գործածութիւնը արագ տարածւեց մարդկանց մէջ:

Աւելի դժւար էր երկաթ պատրաստելու արւեստը: Դա պահանջում էր մեծ հմտութիւն: Երկաթը պատրաստում էին դարբինները դարբնոցներում:

Նախամարդու դարբնոցը նման չէր մեր հիմիկւայ դարբնոցներին: Մեր դարբինները պատրաստի երկաթից են իրեր շինում, իսկ առաջ երկաթն էլ էին դարբնոցներում պատրաստում:

Այն ժամանակւայ դարբնոցը այս տեսակ էր. — մի փոս էին փորում, փոսի պատերը ծեփում էին կաւով: Եր-



Նախական դարբնոց

կաթի հանքը ածում էին փոսի մէջ, վրան դարսում էին բաւական փայտ և փոսի բերանը ծածկում կաւի հաստ շերտով: Փայտ աւելացնելու և վառելու համար շերտի մէջ բացւածք էին թողնում: Այսուհետեւ փայտը վառում էին: Կրակի ոյժը սաստկացնելու համար զործ էին ածում փուլսեր:

Նրանց փուլսերն էլ շատ հասարակ կազմութիւն ունէին: Վերցնում էին կաւէ երկար աման, կողքից շինում

էին մի խողովակ, որ գնում, մանում էր փոսի մէջ: Ամանի բերանը ծածկում էին կաշւով. կաշւի մէջ ամրացնում էին ձող: Այդ ձողը ցածրացնելով ու բարձրացնելով ամանի մէջ եղած օդը քշում էին դէպի փոսը, և դրանից կրակը սաստկանում էր: Այս ձեռվ երկաթի հանքը հալելով մա-



Այլբնին քարով երկաթ է կոփում

քուր երկաթ էին ստանում: Այսուհետեւ ստացած երկաթը կոփելով շինում էին զանազան իրեր:

Այսպէս դժւար էր երկաթ պատրաստելը: Այդ էր պատճառը, որ բրօնղը աւելի առաջ ու աւելի շատ տարածւեց հին ազգերի մէջ:

Երբ մարդիկ սովորեցին մետաղներ պատրաստելու արւեստը, սկսեցին շինել մետաղէ դանակներ, սրեր, թրեր, մուրճեր, նիզակի և նետի ծայրեր և այլն:


Այսպիսով քարի դարին հետեւց բրօնղի և երկաթի դարը:

Մետաղէ գործիքներն ու զէնքերը մեծ թեթևութիւն մտցրին մարդկանց կեանքի մէջ:

Այն, ինչ որ քարէ գործիքներով կարելի էր մի օրում շինել, նոյն բանը մետաղէ գործիքներով կարելի էր մի երկու ժամում վիրջացնել:

Բայց այդ օգուտների հետ վնաս էլ տւին մետաղէ գործիքները: Մետաղէ զէնքերով կուելն աւելի հեշտ էր. այդ պատճառով բրօնղի և երկաթի դարում կոիւներն

աւելի արիւնահեղ դարձան։ Զէնքի հարւածներից պաշտպանւելու համար մարդիկ շինեցին վահան։¹⁾ սաղաարտ ու զլարի։ Բայց այսուամենայնիւ մետաղէ զէ՞քերով մարդիկ ահագին կոտորածներ էին անում։



Բրոնզէ իրեր

23

ՅԵՂԸ ԵՒ ՆՐԱ. ԱՌԱՋՆՈԲԴՀԸ

Նախամարդիկ հատ-հատ չէին ապրում, այլ խմբերով։ Սկզբում այդ խմբերը փոքր էին, բայց յետոյ շատ մեծացան։ Այդպիսի խմբերին ասում են ցեղ։

Միևնույն ցեղին պատկանող մարդիկ իրար միշտ օդ-

¹⁾ Վահանները շինում էին նաև փայտից. փայտէ վահանը մի կողմից պատում էին եղան կաշով։

նում, պաշտպանում էին և ինչ որ ձեռք էին բերում, հաւասար բաժանում էին իրար մէջ. ծերերին, հիւանդներին, վիրաւորածներին խնամում, պահպանում էին։ Բայց եթէ ցեղը տեղափոխուում էր ուրիշ տեղ, նրանց իրենց հետ չէին կարողանում տանել, որովհետև դեռ կառքեր և բեռնակիր անասուններ չունէին. Նրանց թողնում էին անօգնական և գնում։ Այդ պատճառով սաստիկ ծերացած մարդիկ ուզում էին շուտ մեռնել։ Նրանք շատ անգամ խնդրում էին ուրիշներին, որ սպանեն իրենց։ Հիմա էլ կան այնպիսի ցեղեր, որոնք ծերերին սպանելը չար գործ չեն համարում։ Մի էսկիմոս աղջիկ պատմել է. «Մի պառաւ, հիւանդ կին ինձ աղաչում էր, որ նրան տանեմ այն ժայռի գլուխը, որտեղից ցած են զլորւում ծանր հիւանդներն ու ծերերը։ Ես այդ պառաւին այնքան էի սիրում, որ նրա ինդիրը չմերժեցի, տարայ, ժայռի զլիսից ցած զլորեցի»։

Ցեղերն իրարից շատ հեռու էին ապրում։ Ոչ մի ցեղ թոյլ չէր տալիս, որ օտար ցեղի մարդիկ իրենց կողմերում պտուղ հաւաքեն կամ որսորդութիւն անեն։ Օտարներին թշնամի էին համարում և եթէ պատահում էին այդպիսի մարդկանց՝ յարձակում էին նրանց վրայ և կոտորում։ Շատ անգամ սպանւած թշնամիների միան ուտում էին և արիւնը խմում։

Երբ մի ցեղից մարդ էր սպանւում, սպանւածի բոլոր ցեղակիցները աշխատում էին վլուժը լուծեն։ Նրանք կամ սպանողին էին գտնում ու սպանում, կամ թշնամի ցեղից որ և է մէկին էին սպանում։ Այսպէս, ցեղերը ամեն մի սպանութեան համար իրարից վրէժ էին հանում և իրար կոտորում։

Կոփւներից մարդիկ շատ քիչ էին օգուտ ստանում։ Նըրանց ասլրուստի զլիսաւոր միջոցը որսորդութիւնն էր։ Բայց դա հեշտ գործ չէր, կենդանիները միշտ միենոյն տեղում չեն մնում. տեղափոխում են մի տեղից միւսը, որսի ժամանակ փախչում և ծածկում են, շատ անգամ նրանք են որսորդների վրայ յարձակում։ Ուրեմն հարկաւոր էր նրանց այնպէս շրջապատել, որ չկարողանային փախչել, հարկաւոր

էր նրանց վրայ այսպէս յարձակւել, որ վսաս չտային որսորդներին։ Իսկ դրա համար պէտք է բոլորը որսի ժամանակ միայն մէկին լսէին, մէկի հրամանները կատարէին, որ իրար չխանգարէին ու որսը փախցնէին։ Որսորդութիւնը կառավարելու համար ցեղն ընտրում էր իր միջից մի առաջնորդ կամ ցեղապետ, որի կարգադրութիւնները ամենքը պարտաւոր էին կատարել։ Նոյն ցեղապետը առաջնորդում էր ցեղին նաև կոիւների ժամանակ։

Առաջնորդ կամ ցեղապետ ընտրելու համար հաւաքւում էր ամբողջ ցեղը. թէ տղամարդիկ և թէ կանայք։ Նրանք ընտրում էին այնպիսի մարդու, որ ամենքից խելօքն էր, ամենքից փորձածը, ամենքից քաջն ու ուժեղը։ Նա պէտք է ծանօթ լինէր որսի բոլոր տեղերին, պէտք է խմանար որսորդութեան ու կուի բոլոր ձեերը։ Որսորդութիւնից կամ կուից առաջ նա էր ցեղը խմբերի բաժանում և ցոյց տալիս, թէ ամեն մի խումբ ուր պէտք է գնայ և ինչ պէտք է անի։ Գործը վերջացնելուց յետոյ որսի միսը կամ կուում խլած աւարը նա էր բաժանում։ Բայց երբ որսորդութիւնը կամ կուրը վերջանում էր, առաջնորդը դառնում էր մի հասարակ մարդ և այլնս հրամայելու իրաւունք չունէր։

Ամեն մի ցեղ իր առանձին անունն ունէր։ Այդ անունները երբեմն զանազան կենդանիների և թռչունների անուններ էին լինում, որովհետեւ նրանք կարծում էին, թէ իրենք կենդանիներից են առաջ եկել, այսինքն իրենց նախնիքները կենդանիներ են եղել։ Այսպէս՝ մի ցեղ կարծում էր, որ իրենք ադուաւից են առաջ եկել, մի ուրիշ ցեղ ասում էր, թէ գայլից են առաջ եկել, մի այլ տեղ ասում էին, թէ իրենք կրիայից են առաջ եկել։ Այդպիսի կենդանիներին ասում են տոտեմ։ Ամեն մի ցեղ նկարում էր իր տոտեմի պատկերեւ տեղափոխութիւնների ժամանակ առջեից տանում այդ տոտեմները։ Ցեղերն իրենց տոտեմների անունն էին կըում։ Երբ նրանք կուում էին, և մէկը միւսին յաղթում էր, ասում էին՝ շունը յաղթեց գայլին կամ կրիան ու օձը կուեցին։

24 ՄԱՅՐԱԿԱՆ ՏՈՀՄ Առաջ մ ուստի վեհապետ ավելի միավակ վահանակ ու առաջանակ ավելի մասնաւում ուղարկութիւնը գործադրութիւնը ամենամեծ անունը է կամաց ամենամասնաւում էին իրենց ցեղին կոիւների ժամանակ, երբ գերիներ էին վերցնում, աղամարդկանց սովորաբար սպանում էին, իսկ կանանց միացնում էին իրենց ցեղին և ամուսնանում էին նրանց հետ։ Տղամարդկանցից շատ քչերին էին խնայում և իրենց ցեղին միացնում։ Պրա համար հարկաւոր էր, օրինակ, որ գերի վերցրած տղամարդուն մի կին որդեգրէր։ Կոիւներ շատ էին պատահում հարկան ցեղերի մէջ և ամեն անգամ օտար կանանց բերում, միացնում էին իրենց ցեղին։ Ցեղի մարդիկ շատ անգամ չէին հասկանում այդ կանանց լեզուն։ Նրանց երեխաներն էլ իրենց մօր լեզուն էին սովորում և դրանով ջոկում էին ցեղի միւս երեխաներից։ Այդ կանանցից ու իրենց որդիներից ցեղի մէջ կազմում էր մի օտար խումբ։ Պատահում էր, որ տղամարդիկ ոչ թէ միայն մի ցեղից էին կանայք յափշտակում, այլ մի քանի ցեղերից։ Այդ ժամանակ ցեղի մէջ առաջ էին դալիս ոչ թէ միայն մի խումբ օտար մարդիկ, այլ մի քանի խումբ։ Ամեն մի այդպիսի խումբը կոչւում է տոհմ։ Ցեղի մարդիկ այդ օտարների վրայ ուրիշ աչքով էին նայում, նրանց խորթ էին համարում։ Թէև նրանց ոչ մի վնաս չէին տալիս, միասին էին ապրում նրանց հետ, բայց երբ ուզում էին ցեղի առաջնորդ կամ ցեղապետ ընտրել, օտարներից չէին ընտրում, այլ իրենց միջից։ Այդ պատճառով մարդիկ ուշադրութիւն էին դարձնում, թէ ովք է ամեն մէկի մայրը, օտար է նա, թէ չէ։ Այդպիսով իմանում էին, թէ ամեն մարդ որ տոհմին է պատկանում։ Եթէ մէկն ուզում էր ցոյց տալ, թէ ինքն ովք է, իր մօր անունն էր տալիս, յետոյ տատի անունը, ապա իր տատի մօր անունը և այլն։ Այսպէս, մայրերի շարքով կամ գծով էին որոշում, թէ ովք է ամեն մէկը։ Ասում էին,

օրինակ, Մարիամի որդին, Եղիսաբէթի թոռը և այլն: Ոչ
ոք իր հօր անունը չէր տալիս:

Երեխաները իրենց հօրը նոյնիսկ չէին ճանաչում, ո-
րովհետև տոհմի մէջ ջոկ-ջոկ ընտանիքներ չկային և տոհ-
մի բոլոր մարդիկ խառն էին ապրում և միասին աշխա-
տում. կարծես ամբողջ տոհմը մի մեծ ընտանիք լինէր:
Երեխաները ճանաչում էին միայն իրենց մօրը և նրա մօ-
տից չէին հեռանում, քանի դեռ փոքր էին: Բայց երբ մե-
ծանում էին, մօր պաշտպանութիւնը նրանց էլ հարկաւոր
չէր: Տոհմի միւս մարդկանց հետ նրանք գնում էին կեն-
դանիներ որսալու, կուելու կամ ուրիշ աշխատանքի: Նը-
րանք ոչ իրենց մօրն էին պատկանում, ոչ հօրը, այլ
միայն տոհմին:

Տոհմի մէջ բոլորը պարտաւոր էին օգնել և պաշտ-
պանել միմեանց: Եթէ օտարները մէկին վիրաւորում կամ
սպանում էին, ամբողջ տոհմը վրէժ էր հանում թշնամի-
ներից: Յանցաւորին աշխատում էին գտնել և սպանել,
կամ դրա փոխարէն վարձատրութիւն էին ստանում հա-
կառակ ցեղից:

Ցեղի մէջ ամեն մի տոհմ մի անուն ունէր և դրանով
զանազանում էր միւս տոհմերից: Տոհմի անունը այն ցեղի
անունն էր, որից ինքը առաջ էր եկել: Եթէ տոհմի մարդիկ
բերւել էին, օրինակ, կը իս ցեղից, տոհմն էլ կը իս էր կոչւում:

Իւրաքանչիւր տոհմ իր համար առանձին տոհմապետ
էր ընտրում, որ տոհմի գործերը կարգադրի: Դրա համար
ժողովում էին ոչ միայն տոհմի տղամարդիկ, այլ և կա-
նայք: Մի քանի երկիրներում կանայք էլ էին դառնում
տոհմապետ:

Թէև ցեղի տոհմերը իրարից բաժանւած էին, բայց
բոլորովին կտրւած չէին միմեանցից: Լինում էին այն-
պիսի գործեր, որ մի տոհմը մենակ չէր կարող կատա-
րել: Այդ պատճառով ցեղի տոհմապետները հաւաքւում էին
մի տեղ, խորհուրդ էին անում միասին և ցեղի բոլոր
մարդկանց առաջ ընտրմ էին այդ գործերը: Եթէ ամբողջ ցեղը

հաւանում էր նրանց ասածը, այն ժամանակ նրանց վճիռը
կատարում էր:

Մեծ կուների կամ մեծ որսորդութեան ժամանակ
ցեղի բոլոր տոհմերը միասին էին գործում: Դրա համար
նրանք ընտրում էին ամբողջ ցեղի համար մի ընդհանուր
առաջնորդ և իրենց տոհմապետներով կատարում էին նրա
տւած հրամանները:

25

ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ցեղերը ապրում էին միմեանցից հեռու, ընդարձակ
տարածութիւնների վրայ: Այդ պատճառով մի ցեղի բնա-
կավայրում լինում էր այնպիսի բան, որ միւս ցեղի բնա-
կավայրում չէր ճարւում: Օրինակ, մի ցեղի բնակավայրում
գտնուում էր կարմիր հող, որ գործ էր ածւում երեսը ներ-
կելու համար, մի այլ ցեղի բնակավայրում՝ աղ, որ հա-
մեղ էր գարճնում կերակուրը, մի երրորդի բնակավայրում
պատահում էր պղինձ կամ երկաթ, որից պատրաստում
էին զարդարանքներ, զէնքեր ու գործիքներ: Մի ուրիշ ցեղ
ունենում էր լաւ գործիքներ, որոնցով կարողանում էր թէ
աւելի հեշտ աշխատել և թէ աւելի լաւ բաներ պատրա-
ստել: Սրանք բոլորը հարկաւոր բաներ էին, և ամեն մի ցեղ
ուզում էր ունենալ սրանցից:

Նրանք յարձակում էին իրար վրայ, որ իրենց ու-
զած իրերը խլեն: Կոխւ էր ծագում, և սկսում էին իրար
կոտորել: Երբեն նրանք թաքուն էին մտնում օտար ցեղի
երկիրը, գողանում էին ուզած իրերը և վերադառնում տուն:
Բայց վերջը իմացւում էր օտար մարդկանց գալը, ցեղը
վեր էր կենում և գնում նրանց հետ կուելու և փոխարէնը
նրանցից մի բան յափշտակելու:

Այսպէս, ամեն մի ցեղ տեսնում էր, որ երբ ինքը
յափշտակում է ուրիշ ցեղի իրերը, այդ ցեղն էլ մտնում

է նրա բնակավայրը և տարածի փոխարէն նրա իրերը յափշտակում։ Այս տեսնելուց յետոյ նրանք, երբ օտար ցեղի բնակավայրից մի բան էին տանում, միշտ նրա փոխարէն մի ուրիշ բան էին թողնում, որ ազատւեն այդ ցեղի յարձակումից։ Իսկ թողնելու համար այնպիսի բաներ էին բերում իրենց երկրից, որ այդ ցեղը չունէր։ Օրինակ, մի ցեղ թաքուն մտնում էր իր հարեան ցեղի երկիրը, բաղում էր նրա պտուղներն ու հացահատիկները, իսկ փոխարէնը թողնում էր իր հետ բերած չորացրած միսը և նորից վերադառնում իր բնակավայրը։ Այս ձեռվ ցեղերը փոխանակում էին իրենց ունեցած իրերը, բայց աշխատում էին միմեանց չպատահել, որ կոխւ չծագէր։

Կամաց-կամաց փոխանակող ցեղերը համարձակում էին իրար երես գուրս գալ, բայց դեռ ոտքից մինչև գլուխ զինւած էին լինում։ Փոխանակելուց առաջ նրանք ցած էին գնում իրենց զէնքերը. վերջացնելով տուր և առը, միանգամից վերցնում էին զէնքերը և խիստ նայում իրար, կարծես ուզում էին միմեանց հասկացնել, թէ՝ «Պատրաստ ենք կռւելու, եթէ յարձակւէք մեզ վրայ»։ Եւ ապա գնում էին իրենց բնակավայրը։

Անցաւ ժամանակ։ Ցեղերը աւելի շուտ-շուտ սկսեցին իրեր փոխանակել. նրանք այնքան ընտելացան իրար, որ առանց զէնքի մօտենում էին միմեանց, տալիս էին իրենց ունեցած իրը և փոխարէնը ուրիշ բան վերցնում։ Օրինակ, մի ցեղ բերում էր կաւէ ամաններ և տալիս էր միւս ցեղին, որը կաւէ ամաններ էր ուզում, իսկ փոխարէնը վերցնում էր մորթիներ։ Կամ տալիս էին կացին և վերցնում կարմիր հող։ Այս փոխանակութեան ժամանակ մի հարկաւոր բանի տեղ տալիս էին մի ուրիշ հարկաւոր բան։ Այսպիսի փոխանակութիւնը կոչւում է ուղղակի կամ անմիջական փոխանակութիւն։

Երբ մարդիկ փոխանակել սովորեցին, նրանք սկսեցին պատրաստել ոչ թէ այնքան, ինչքան հարկաւոր էր իրենց գործածութեան համար, այլ միշտ աւելի, որ աւելացածը

փոխեն ուրիշ ցեղերի հետ։ Փոխանակելու համար պատրաստած իրերին մենք ասում ենք ապրանք։

Անմիջական փոխանակութիւնը միշտ չէր յաջողւում։ Շատ անգամ մի ցեղ բերում էր նետ ու աղեղ, որ փոխի կաւէ ամանի հետ, բայց կաւէ աման ունեցող ցեղը նետ ու աղեղ չէր ուզում, այլ կամենում էր կացին, իսկ կացին ունեցող ցեղը կաւէ աման չէր ուզում, այլ մորթի էր ուզում։ Փոխանակութիւնը չէր յաջողւում, և նրանք իրենց իրերով վերադառնում էին տուն։

Բայց յետոյ մարդիկ փոխանակելու ձևը փոխեցին։ Գալիս էր մի ցեղ, հացահատիկներ բերում, որ նետի ծայրեր առնի։ Նետի ծայրեր ունեցող ցեղը, թէև հացահատիկներ չէր ուզում, բայց նետի ծայրերը տալիս էր և փոխարէնը հացահատիկներ վերցնում։ Նա գիտէր, որ հացահատիկը ամենքին պէտք է։ Երբ ստացածը առաջարկում էր մորթի ունեցողին, սա իսկոյն փոխանակում էր հացահատիկի հետ իր մորթին։ Թէև իրեն այդ բոպէին հացահատիկը պէտք չէր, բայց գիտէր, որ հացահատիկով ինչ ուզենար, կառնէր։ Այսպիսով հացահատիկը անցնում էր ձեռքից ձեռք և նրա միջոցով հեշտանում էր փոխանակութիւնը։

Հացահատիկները այստեղ նոյն գործն էին կատարում, ինչ որ հիմա կատարում է փողը։ Բացի հացահատիկներից կային և ուրիշ տեսակ փողեր. օրինակ, իբրև փող գործ էին ածում գեղեցիկ խեցիներ, նետի ծայրեր, ոչխար, կով, մորթի, սոկու, արծաթի, պղնձի ու երկաթի կտորներ և այլն։

Կամաց-կամաց փողի այս բազմաթիւ տեսակները ըլշացան և իբրև փող մնացին միայն մետաղի կտորները։ Դրա պատճառն այն էր, որ մետաղները չէին փշանում, նրանց կարելի էր կտոր-կտոր անել, հեշտ էր պահելը, դժւար չէր տեղից տեղ տանելը և վերջապէս նրանցից կարելի էր զարդարանքներ, գործիքներ ու զէնքեր շինել։ Հին ժամանակ առևտուր անելիս մետաղները ամեն

անգամ քաշում էին և այսպէս վճարում: Նրանք դիտէին, թէ մի զըւանքայ պղնձով ինչքան բուրդ կարելի է առնել կամ մի մսխալ արծաթով ինչքան ցորեն: Վերջը փոխանակութեան համար գործ ածւող մետաղների վրայ սկսեցին նշանակել նրանց քաշը, որպէսզի ամեն անգամ քաշելու կարիք չլինի: Չափւած մետաղները գործ ենք ածում հիմա էլ: Մենք նրանց ասում ենք փող կամ որամ: Փողը չափում ու կտրում է կառավարութիւնը: Մեր արծաթէ մանէթանոցը մօտ չորս մսխալ է քաշում, իսկ ոսկէ հինգ մանէթանոցը՝ մօտ մէկ մսխալ:

26

ՅԱՄԱԲԱՑԻՆ ԵՒ ԶՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Փոխանակելու համար ցեղերը շաբաթական մի անգամ հաւաքում էին որոշ տեղերում—շուկաներում: Շուկաների տեղերը լինում էին ցեղերի սահմանի վրա. այդ տեղերը ոչ մի ցեղի չէին պատկանում: Ամեն մի ցեղ բերում էր այդտեղ այն առարկաները, որից շատ ունէր: Մէկը բերում էր մեղք, միւսը զինի, երրորդը՝ չորացրած միս, չորրորդը՝ կաւէ ամաններ, հինգերորդը՝ երկաթեղէն, վեցերորդը՝ անասուններ և այլն:


Շուկաները իրարից շատ հեռու էին գտնուում: Շուկայ գնալու համար ցեղերը ստիպւած էին լինում ահազին ճանապարհ անցնել: Այդ ժամանակ շինւած ճանապարհներ չկային, եղած ճանապարհներն առաջ էին եկել մարդկանց գնալ գալուց: Ճանապարհորդելը դժւար էր: Ճանապարհորդութիւնը մի քիչ թեթևացնելու համար մարդիկ տեղադրերի վրայ հաստ ու երկար գերաններից կամուրջ էին գցում և նրանց վրայով անցնում: Ճանապարհորդութիւնը աւելի հեշտացաւ, եթե մարդիկ սկսեցին կենդանիներին հեծնել, իսկ յետոյ նաև լծել:

Աւելի լաւ էին ջրային ճանապարհները: Գետերի, լճե-

րի, ծովերի մօտ ապրող ցեղերը շատ շուտ սովորեցին ջրի վրայ ճանապարհորդել: Հիմա էլ շատ վայրենիներ, երբ ուզում են ափից մի կղզի գնալ, նստում են մի փոքր գերանի վրայ և երկու ձեռքով թիավարելով առաջ շարժում: շատ անգամ նրանք գերանի ծայրերը սրում են, որ ջուրը հեշտութեամբ կտրեն:

Այսպիսի գերանով լողալուց յետոյ մարդիկ շատ հեշտ կերպով կարող էին լաստ կամ տոփ շինել: Դրա համար հարկաւոր էր մի քանի գերան իրար կապել թոկերով, իսկ առջեց ու ետեց թիակներով թիավարել:

Բացի լաստերից նրանք շինում էին նաևնը, մակոյկներ: Նաւերը շինում էին նոյնիսկ քարի դարում: Այն ժամանակ թէկ դժւար էր նաւեր շինելը, բայց մարդիկ դրա հնարը գտել էին: Նրանք կտրում էին ծառի հաստ բունը, ծայրերը սրում և վրան կրակ դնում, որ մի քիչ այրուի:



Նաւեր

Յետոյ հանգցնում էին կրակը և այրւածքը սկսում էին կացիններով փորփորել: Եթէ փորւածքը մեծ չէր լինում, նորից այրում էին և փորում, մինչև որ ուզած խորութիւնը ստանային: Այսպիսի կոպիտ նաւերով նրանք ճա-

Նապարհորդում էին գետերի, լճերի վրայով:

Նաւակներն ու մակոյկները շինում էին նաև ծառերի կեղևներից, կեղեցից շինւած նաւերը ամրութեան համար դրսից պատում էին կենդանիների մորթով:

Հետաքրքիր էին հին հայերի նաւերը, որոնք շինւած էին ուռենիներից ու դրսից պատած էին մորթով: Նրանք բոլորակ ձև ունէին վահանի պէս: Այսպիսի նաւերի մէջ հին հայերը դնում էին իրենց ապրանքները և ապա երկու կողմից թիավարելով առաջ լոդում: Իւրաքանչիւր փոքր նաւի մէջ ունենում էին մի էշ, իսկ մեծ նաւերի մէջ երկու կամ աւելի: Եթե հասնում էին շուկայ և ապրանքը ծախում, քանդում էին իրենց նաւերը, փայտէ մասը ծախում, իսկ մորթիները էշերի վրայ բարձելով վերադառնում էին իրենց երկիրը: Այսպէս էին անում, որովհետեւ դետի հոսանքին հակառակ չէին կարող նաւերով գնալ:

Աւելի ուշ մարդիկ առազաստանաւ շինեցին: Նաւակի վրայ կանգնած ժամանակ նրանք նկատում էին, որ քամին ուռցնում է իրենց շորերը և դրանով արագացնում նաւակի ընթացքը: Այդ բանը նկատելուց յետոյ նրանք նաւերի վրայ ձողեր տնկեցին և այդ ձողերից կտոր կապեցին: Քամին ուռցնում էր փռած կտորը և նաւը առաջ մղում: Առագաստը շինում էին և մեծ-մեծ տերեներից:

Առագաստաւոր նաւով մարդիկ կարողանում էին աւելի հեռու երկիրներ գնալ, քան հասարակ նաւով կամ լաստով: Որքան հեշտանում էր ճանապարհորդութիւնը, այնքան մեծանում էր առևտուրը, այնքան աւելի շուտ շուտ էին ցեղերը իրար մօտ գնում դալիս: Այսպիսով ցեղական թշնամութիւնը կամաց-կամաց թուլանում էր:

27

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱՀՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առաջ մարդիկ չգիտէին, թէ ինչ է նշանակում «իմ» ու «քոնց»: Ամեն բան պատկանում էր կամ ցեղին,

կամ տոհմին. ուրիշ խօսքով՝ ամբողջ համայնքին. մասնաւոր մարդը ջոկ սեփականութիւն չունէր: Ուրեմն առաջ ամեն ինչ համայնական սեփականութիւն էր, — մասնաւոր սեփականութիւն չկար:

Եթէ մէկը մի քանի գործիք կամ հագուստ էր պատրաստել, մի ուրիշը կարող էր առանց հարցնելու աւելորդ գէնքը կամ հագուստը վերցնել և գործ ածել:

Եթէ մի քանիսը մի տեղ կերակուր էին պատրաստել, իսկոյն ձայն էին տալիս, թէ կերակուր կայ, և ամեն կողմից, ով պատահում էր, գալիս էր և հաւասար բաժին էր ստանում կերակրից: Այսպէս որ, եթէ նրանցից մէկը մի կենդանի էր սպանում և իմաց չէր տալիս միւսներին, նրան գող էին ասում ու վատ աչքով էին նայում նրա վրայ:

Բայց միայն ուտելիքը չէր համայնական սեփականութիւն: Ընտանի կենդանիների հօտերն ու աներն էլ առաջ ամբողջ համայնքի սեփականութիւնն էին կազմում: Տներն ունենում էին տունձին շտեմարան կամ ամբար, որտեղ պահում էր պաշարը, գործիքները և այլն: Ամեն մարդ կարող էր վերցնել այդ պահեստից ինչ որ իրեն հարկաւոր էր:

Որովհետեւ ամեն բան պատկանում էր բոլորին և բաժանում էր ամենքի մէջ, այդ պատճառով համայնքում առաջ ոչ հարուստ կար, ոչ աղքատ:

Բայց մինչև վերջը այդպէս շշարունակւեց: Համայնական սեփականութիւնը կամաց-կամաց վերջացաւ և նրա տեղը բռնեց մասնաւոր սեփականութիւնը: Առաջ, երբ քանի հոգի մի կենդանի էին սպանում, ուրիշներին էլ էին բաժին հանում: Բայց յետոյ սպանողները էլ ոչ ոքի մաս չէին տալիս: Կենդանին դառնում էր նրանց սեփականութիւնը և բաժանում էր միմիայն սպանողների մէջ: Նոյնպէս, եթէ մէկը մի գէնք էր շինում, նա դառնում էր շինողի սեփականութիւնը: Այդ գէնքով սպանւած կենդանին էլ պատկանում էր գէնքի տիրոջը:

58

59

Որովհետև առւնը համայնքն էր շինում, այդ պատճառով նա մասնաւոր սեփականութիւն չէր, այլ համայնական: Հողն էլ առաջ համայնական սեփականութիւն էր, որովհետև ամբողջ համայնքն էր նրան մշակում ու պաշտպանում: Բայց վերջը թէ տունը և թէ հողը մասնաւոր սեփականութիւն դարձան:

28

ՀՆՏԱՆԻՔ

Կոիւներում յափշտակած իրերը առաջ պատկանում էին ամբողջ համայնքին: Կուողները իրաւունք չունէին այդ իրերը իրար մէջ բաժանելու: Բոնած գերիները նոյնպէս չէին կարող իրենց մէջ բաժանել:

Բայց մինչեւ վերջը այդպէս շշարունակւեց: Երբ առաջ եկաւ մասնաւոր սեփականութիւնը և ամեն մարդ սկսեց իրենը համարել իր աշխատանքը, այն ժամանակ կուի աւարը դարձաւ կուողների սեփականութիւնը: Գերի բռնւած կանայք ևս բաժանում էին կուողների մէջ, և ամեն մի կին դառնում էր մի տղամարդի սեփականութիւնը: Կնոջ որդիքն էլ նրա տիրոջ սեփականութիւնն էին համարւում:

Այսպիսով հայրը դարձաւ կնոջ ու երեխաների տէրը, և առաջ եկաւ ընտանիքը:

Սրանից յետոյ ամեն մարդ, երբ ուզում էր ցոյց տալ, թէ ինքն ով է, իր հօր անունն էր տալիս: Ասում էին, օրինակ՝ Գրիգորի որդիները, Սարգսի կամ Պետրոսի թոռը, կամ ուրիշ խօսքով Սարգսեան, Պետրոսեան և այլն:

Երբ տոհմի մէջ առաջ եկան ընտանիքներ, նրանցից իւրաքանչիւրը իր ունեցածը ջոկեց միւսների ունեցածից, և այնուհետև ինչ որ մի ընտանիք աշխատում էր, համարւում էր այդ ընտանիքի սեփականութիւնը: Տոհմի հողն

էլ վերջը բաժանւեց ընտանիքների մէջ և դարձաւ առանձին-առանձին ընտանիքների սեփականութիւն:

Շատ երկիրներում տղամարդիկ մի քանի կին էին ունենում: Ով քաջ և ուժեղ էր, նրա համար աւելի հեշտ էր ուրիշ ցեղերից կին յափշտակելը: Իհարկէ ոչ ոք մենակ չէր գնում կուի: իւրաքանչիւրին օգնում էին իր ընկերները: Բայց այդ օգնութեան համար նա էլ պարտաւոր էր իր ընկերներին օգնել, երբ նրանք կին յափշտակելու էին գնում:

Կին յափշտակելը վերջացաւ այն ժամանակ, երբ առաջ եկաւ փոխանակութիւնը: Բարեկամ ցեղերից այնուհետև միայն փողով կարելի էր կին առնել, որովհետև յափշտակելը կթշնամացնէր այդ ցեղերին: Կնոջ համար տալիս էին երբեմն տասը, քսան, երեսուն կամ յիսուն կենդանի: Շատ երկիրներում մարդիկ մի քանի կին էին առնում և նրանց ծառայի նման աշխատեցնում էին: Կանայք էին կատարում բոլոր ծանր աշխատանքները—հողը վարում, ցանում, հնձում, փայտ ջարդում, ջուր բերում և այլն:

Առաջւայ նման կանայք այլևս ազատ չէին. նրանք այլևս չէին կարող տղամարդկանց հետ նստել, ժողովներում խօսել, ցեղապետ կամ տոհմապետ ընտրել: Այլևս տանից դուրս չէին գալիս. միշտ տան գործերով էին զբաղւած: Շատ տեղ կանայք տղամարդկանց հետ չէին ճաշում: Երբ տունը հիւր էր կալիս, երեսներին քօղ էին քաշում, որ օտար մարդը նրանց երեսը չտեսնի:

Տղամարդկանց կեանքն այդպէս չէր. նրանք ազատ էին, ուր ուզում էին՝ գնում էին, ինչ ուզում էին՝ անում էին:

Ցեղի կամ տոհմի գործերը կառավարում էին ընտանիքի մեծերը, ծերերը: Այդ պատճառով մի քանի երկիրներում նրանց ժողովը կոչւում էր ծերակոյտ:

Տան մէջ էլ ընտանիքի մեծն էր կարգադրում բոլոր

գործերը։ Նա էր ցոյց տալիս, թէ ով պէտք է դաշտ գնայ և երկրագործութեամբ պարապի, ով պէտք է անասունները պահի, անտառից փայտ բերի։ Նա էր որոշում, թէ ինչ պէտք է ուղարկել ծախելու, կամ տան համար ինչ պէտք է առնել։ Տան այդպիսի մեծին ասում են նահապետ։

Նահապետի մահից յետոյ նրա մեծ որդին էր տան տէր դառնում։ Նա այդպիսով ստանում էր հօր ամբողջ ունեցածը, որպէս ժառանգութիւն։ Պատահում էր, որ հայրը ժառանգութիւն էր տալիս նաև միւս որդիներին։ Երբեմն որդիները իրարից բաժանւում էին, և ամեն մէկը իր ընտանիքով առանձին էր ասլրում։

29

ԱՐՀԵՍՏԱԽՈՐՆԵՐ

Ամեն մի ընտանիք սկզբում ինքն էր պատրաստում թէ իր ուտելիքը, թէ հագուստը, թէ բնակարանը և թէ ամանեղէնն ու գործիքները։ Այսպէս որ միւնոյն ընտանիքի անդամները թէ երկրագործ էին, թէ հիւսն, թէ դարբին, թէ բրուտ և թէ ջուլհակ։ Իհարկէ, ամեն մարդ չէր կարող այդ բոլոր արհեստները լաւ գիտենալ. այդ պատճառով շինւած իրերը անյարմար և կոպիտ էին։

Թէև առհասարակ պատրաստած իրերը կոպիտ ու անյարմար էին, բայց կային մարդիկ, որոնք մի բան աւելի լաւ էին շինում, քան միւսները։ Այդ պատճառով շատերը խնդրում էին այդպիսի մարդկանց, որ իրենց համար էլ այդ իրերից պատրաստեն։ Իսկ դրա փոխարէն նրանց տալիս էին փող կամ ուրիշ աստրկաներ։

Մի արհեստի մէջ վարժ մարդիկ կամաց-կամաց թողին իրենց միւս գործերը և սկսեցին պարապել միայն մի արհեստով։ Պատրաստած իրերը նրանք ծախում էին և ստացած փողով առնում իրենց հարկաւոր միւս իրերը։

Այսպէս աշխատանքը բաժանւեց զանազան մարդկանց

մէջ, և առաջ եկան ջոկ-ջոկ արհեստատորներ։ Մէկն սկսեց պարապել միայն դարձնութեամբ, միւսը՝ հիւսնութեամբ, երրորդը՝ բրուտութեամբ, չորրորդը՝ կօշկակարութեամբ, հինգերորդը՝ ջուլհակութեամբ և այլն։

Դարբինն իր պատրաստած գործիքները տալիս էր երկրագործին, բրուտին, ջուլհակին, հիւսնին։ Իսկ դրա փոխարէն երկրագործից ստանում էր իր ուտելու հացը, բրուտից՝ ամանեղէնը, ջուլհակից՝ կտորեղէնը, հիւսն էլ դալիս էր նրա տունը շինում։ Նոյն ձեռվ ապրում էին և միւս արհեստաւորները։

Արհեստաւորների պատրաստած իրերը առաջւայ նման կոպիտ ու անյարմար չէին, որովհետև արհեստաւորը միայն մի գործով, մի արհեստով էր պարապում և կամաց-կամաց կատարելագործում էր իր արհեստի մէջ։

Արհեստները հետզհետէ շատացան, նոր-նոր արհեստներ առաջ եկան։ Շատացան նաև արհեստաւորները և հասարակութեան մէջ կազմեցին մի առանձին դասակարգ։

30

ՎԱՃԱՐԱԿԱՆՆԵՐ

Արհեստների համար հարկաւոր էին զանազան տեսակ նիւթեր և գործիքներ։ Մակայն բոլոր նիւթերն ու գործիքները ամեն տեղ չէր կարելի գտնել։ Մի երկրում գըտնուում էր, օրինակ, պղինձ, արծաթ, զանազան ներկեր, բայց երկաթ չէր ճարտում. կամ գտնուում էր ոսկի, երկաթ, կաւ, կաշի, իսկ միւս հարկաւոր նիւթերը չէին ճարտում։ Պակասող նիւթերը կամ գործիքները պէտք է ուրիշ երկրներից բերւէին։ Արհեստաւորները չէին կարող թողնել իրենց արհեստը և գնալ հեռաւոր երկիրներ՝ նիւթեր բերելու իրենց արհեստի համար։ Այդ գործով պարապում էին վաճառականները։

Նրանք շրջում էին մի երկրից միւսը և ամեն տեղից

հաւաքում էին այն առարկաները, ինչ որ իրենց հայրենիքում չկար: Հայրենիք վերադառնալով նրանք բերած ապրանքները վաճառում էին իրենց հայրենակիցների վրայ. սակայն ոչ այն գնով, որով գնել էին, այլ աւելի թանգ: Իւրաքանչիւր ապրանք թանդ ծախելով նրանք այնքան փող էին վաստակում, որ երբեմն ահազին հարստութեան տէր էին դառնում:

Վաճառականները միայն անսղատրաստ նիւթեր չէին բերում ծախելու համար, այլ և շատ ուրիշ պատրաստի իրեր, որ իրենց երկրում չէր ճարւում: Իրենց երկրի բերքերն ու պատրաստած իրերն էլ տանում էին օտար երկիրներ և ուրիշ ազգերի վրայ ծախում: Այսպէս, վաճառականների շնորհիւ ամեն մի երկիր կարող էր ստանալ այն բոլոր ապրանքները, որ գտնեռում էր օտար աշխարհներում:

Վաճառականներն իրենց ապրանքը պահելու և վաճառելու համար շինում էին առանձին տներ (պահեստներ) և խանութներ: Այդ խանութներում ամեն մի մարդ կարող էր գտնել իրեն հարկաւոր իրերը:

Զանազան տեղերից հաւաքած ապրանքները վաճառականները բարձում էին ուղտերի, էշերի, ջորիների կամ ձիերի վրայ և սարեր ու ձորեր անցնելով ճանապարհորդում էին մի երկրից միւսը: Բայց այս ճանապարհորդութիւնը հեշտ չէր: Զկային շինւած ճանապարհներ, կառքեր, նաւեր, գետերը կամուրջներ չունէին, իջևաններ չկային, որ մարդիկ կարողանային հանգստանալ կամ ուտելու պաշար վերցնել: Սովոր ու ծարաւը, շոգն ու ցուրտը տանջում էր նրանց: Եւ այսպիսի ճանապարհորդութիւնը երբեմն ամիսներ էր տեսում:

Բացի այդ գժւարութիւններից ճանապարհ գնալը շատ վտանգաւոր էր: Ամեն տեղ կարող էին յարձակւել վաճառականների վրայ, կոտորել նրանց և ունեցած չունեցածը տանիել: Այդ պատճառով վաճառականները մենակ չէին ճանապարհորդում, այլ խմբերով, մեծ քարաւաններ կաղ-

մած: Զանազան ցեղերի մօտից անցնելիս նրանք շատ անգամ արիւնահեղ կոհեներ էին մղում յարձակւող խմբերի դէմ:

Սակայն վաճառականներին ամեն տեղ չէին վնասում: Շատ երկիրներում նրանց սիրով էին ընդունում, որովհետև նրանց միջոցով ստանում էին այնպիսի իրեր, որոնցից իրենք չունէին: Վաճառականներին հիւր էին համարում, նրանց պատրում, պաշտպանում էին, թէև նրանք օտար էին: Վաճառականներից շատ բաներ էին իմանում ուրիշ աշխարհների մասին և զանազան գիտութիւններ սովորում:

31

ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՍՏՐՈՒԿՆԵՐ

Երբ աշխատանքը մարդկանց մէջ բաժանւեց, ժողովրդի մի մասն սկսեց պարապել երկրագործութեամբ, մի մասը՝ արհեստներով, միւսները՝ վաճառականութեամբ և այլն: Ամեն մարդ պարապում էր այն գործով, ինչի մէջ ինքը վարժ էր:

Կային մարդիկ, որոնք վարժ էին կուելու, պատերազմելու մէջ: Երբ հարկաւոր էր երկիրը թշնամիներից պաշտպանել, դրանք էին գուրս գալիս թշնամիների դէմ: Երբեմն էլ իրենք էին յարձակւում հարկան ժողովուրդների վրայ և աւար բերում նրանց երկրից: Այդպիսով նրանք հետզհետէ աւելի էին վարժւում կուելու արեսափ մէջ:

Ուրիշ գործով պարապողները—օրինակ, երկրագործները, արհեստաւորները—արդէն մոռացել էին կուելու արեսափը: Բացի դրանից նրանք չէին կարող իրենց գործը թողնել և պատերազմի գնալ: Այսպէս, օրինակ, երբ երկրագործի արտը հասնում էր, նա չէր կարող իր արտը թողնել չհնձած և հեռանալ, որովհետև հատիկները կթափէին, և նրա ամբողջ աշխատանքը կ'ոչնչանար: Երկրա-

գործը կղրկւէր իր ապրուստից նաև այն դէպքում, եթէ
իր հողը ժամանակին չվարէր:

Գործից հեռանալը շատ էր վասում երկրագործներին,
արհեստաւորներին ու վաճառականներին: Սակայն նրանք
չէին կարող իրենց երկիրը՝ անպաշտպան թողնել և թոյլ
տալ, որ թշնամիները դան ու իրենց ունեցած-չունեցածը
տանեն: Եւ ահա նրանք իրենց աշխատանքի մի մասը տա-
լիս են կուող, պատերազմող մարդկանց, որպէսզի իրենց
փոխարէն նրանք գնան կուելու, երկիրը պաշտպանելու:

Այսպիսով կուի մէջ վարժ մարդիկ ոկտում են զբաղ-
ւել երկրի պաշտպանութեամբ, պատերազմներով, իսկ ի-
րենց ապրուստը հայթայթելու համար տուրք կամ հալիկ են
հաւաքում ժողովուրդից:

Հարկի մի մասով նրանք ապրում էին, իսկ միւս մասը
գործ էին ածում երկրի պաշտպանութեան վրայ: Նրանք
գիւղերն ու քաղաքները թշնամիների յարձակումից պաշտ-
պանելու համար շրջապատում էին խոր փոսերով կամ պա-
րիսպներով, շինում էին բերդեր—ամրոցներ. պատերազմ-
ների համար գնում էին զէնքեր, հագուստ, պաշտը. շինել
էին տալիս պատերազմական նաւեր. հաղորդակցութիւնը
հեշտացնելու համար շինում էին ճանապարհներ ու կա-
մուրջներ:

Բայց երկրի պաշտպանութիւնից ժողովուրդը նրանց
ուրիշ գործ էլ էր յանձնել: Երկիրը կառավարելու գործերը
շատացել էին ու դժւարացել. մարդիկ այլև չէին ուզում
իրենց աշխատանքները թողնել ու շարունակ երկրի գոր-
ծերով զբաղւել: Այդ պատճառով նրանք այդ գործերը ևս
հետզհետէ թողել էին երկրի պաշտպանողներին և նրանց
բոլոր հրամաններին հնագանդւում, հպատակւում էին:

Այսպիսով երկրի կառավարիչները դարձան հրամայող,
իշխող, իսկ մնացած ժողովուրդը՝ հպատակ: Իշխողները
շատ պարտականութիւններից ազատ էին. նրանք միայն
կառավարում էին ժողովրդին և երկիրը պաշտպանում: Հա-
սարակ ժողովրդից նրանք զանազանուում էին նաև նրանով,

որ աւելի հարուստ էին:

Նրանք համարում էին ազնական և հասարակութեան
մէջ կազմում էին մի առանձին դասակարգ:

Ազնւական դասակարգը հետզհետէ ուժեղանալով նոր-
նոր երկիրներ էր նւաճում և միացնում իր երկրին: Յաղթ-
ւած ժողովուրդներին հարկի տակ էր կնում: Եթէ նը-
րանք որոշած հարկը չէին տալիս, այն ժամանակ յաղթող-
ների գօրքը մանում էր նրանց երկիրը, կոտորում էր ժո-
ղովրդին և երկիրն աւերում: Վախենալով այդպիսի պատ-
ժից՝ յաղթւած ժողովուրդները չէին համարձակւում գլուխ
բարձրացնել—ապստամբել:

Շատ անգամ թոյլ ժողովուրդները իրենց կամքով հը-
պատակւում էին ուժեղ հարեաններին, որպէսզի ազատւեն
նրանց յարձակումներից, կամ նրանց օգնութեամբ պաշտ-
պանւեն ուրիշ թշնամիներից:

Այսպիսով կամաց-կամաց աւելանում էին իշխող դա-
սակարգի հպատակները, և մեծանում, ընդարձակւում էր
նրա ձեռքի տակ եղած երկիրը:

Ազնւական դասակարգը իր ընդարձակ հողերը մշա-
կելու համար գերիներ էր բերում հարեան երկիրներից և
ստրկացնում: Ստրուկներին աշխատեցնում էին թէ դաշ-
տերում և թէ տանը. բոլոր ծանր աշխատանքները նրանց
էին կատարել տալիս:

Ստրուկների հետ վատ էին վարւում, ծեծում էին
անասունների նման և մինչև անգամ սպանում: Ոչ ոք
ստրուկին չէր պաշտպանում, որովհետև նա օտար էր:

Ստրուկներին առնում ու ծախում էին կենդանիների
նման: Կային մարդիկ, որոնք միայն ստրուկների առե-
տուրով էին պարապում և զբանով մինչև անգամ հարըս-
տանում էին: Քանի շատ էին ստրուկները, այնքան նրանց
գինը էժան էր: Երբեմն մի քանի բուբովկ կարելի էր
ստրուկ գնել:

Մի քանի երկիրներում մեծ-մեծ արհեստանոցներ էին

շինում և ստրուկներին աշխատեցնում նրանց մէջ։ Առանձին վերակացուներ կային, որոնք մտրակները ձեռքներին հակում էին նրանց և ծուլացողներին պատժում։ Դաշտերում էլ նոյն ձեռվ էին աշխատեցնում։

Ստրուկների կեանքն այնքան անտանելի էր, որ նըրանք ամեն կերպ աշխատում էին փախչել իրենց հայրենիքը։ Բայց եթէ փախած ստրուկները նորից բռնւում էին, նրանց խիստ պատիժներ էին տալիս, մինչև անգամ սպանում էին։

32

Լ Ե Զ Ո Ւ

Մարդիկ միասին էին ապրում ու աշխատում։ Միասին ապրելու համար հարկաւոր էր, որ նրանք իրար հասկանալին։ Ամեն մարդ պէտք է հասկանար այն բոլորը, ինչ որ իր ընկերն ուզում էր յայտնել իր տեսածի ու լսածի մասին։ Բացի այդ, նա պիտի կարողանար իր մտքերն էլ ուրիշներին հասկացնել։ Եթէ մարդիկ իրար հասկանալու մի միջոց չունենային, չէին կարող միասին ապրել։

Իրար հասկանալու միջոցը լեզուն է։ Նախամարդու լեզուն նման չէր մեր լեզւին։ Դա ճշերի, ըացականչութիւնների լեզու էր։

Մի ահռելի գաղան տեսած ժամանակ մարդու կըրծից ակամայ դուրս էր թուչում ահ ճիչը։ Մի որ և է ծանր բան բարձրացնելիս նորից ակամայ դուրս էր թուչում մէջ ճիչը։ Իսկ նրա ընկերները ահ ճիչը լսելիս խսկոյն հասկանում էին, որ մի գաղան կայ մօտերքը, վնյ ճիչը լոելով գլխի էին ընկնում, որ ընկերն որ և է տեղը ցաւում է, ուն ճիչը լսած դէպքում հասկանում էին, որ ընկերը դժւարանում է մի ծանր առարկայ բարձրացնել։ Հասկանում էին այս բոլորը, որովհետև նման դէպքերում իրենք էլ այդպիսի ձայներ էին հանում։

Մարդիկ բնութեան մէջ լսում էին զանազան ձայներ, ալսլում էին ծառերի տերեները, ըշըռում էին առւակները, վզզում էր քամին, ծլլում էին թուչուները, կոկում էին գորտերը, զզզում էին բգէզները, մայում էին ոչխարները, մլատում էին կատուները, մռնչում էին գազանները և այլն։ Ահա այսպիսի բազմատեսակ ձայներ էին լսում մարդիկ, լսում էին և իրենք էլ կրկնում, նմանեցնում։ Օրինակ, երբ մէկը ուզում էր հասկացնել իր ընկերներին, թէ գորտ կայ, գորտի նման կոկուում էր, իսկ եթէ կատուի մասին էր բան ասում, կատուի նման մլաւում էր։ Ընկերները ծանօթ ձայները լսելով՝ խսկոյն հասկանում էին խօսողի միտքը։


Բայց բնութեան մէջ լսած ձայները կրկնելով շատ շատ կարող էին յայտնել, թէ գորտ կայ, կատու կայ և այլն։ Մակայն չէին կարող իմաց տալ, թէ ո՞րտեղ կայ, ի՞նչքան կայ։ Եւ այդ պատճառով լսողները չէին կարող լսւ հասկանալ խօսողի միտքը։ Բայց մարդիկ սրա ճարն էլ գտել էին։ Նրանք նշանների լեզու էլ ունէին։ Շատ բան ձեքուերի, դէմքի և ամբողջ մարմնի շարժումներով էին իրար հասկացնում։ Ճիշտ այնպէս, ինչպէս հիմա խօսում են խուլ ու համբերը։ Նշանների լեզուն սաստիկ զարգացած էր նախամարդկանց մէջ։

Ահա թէ ինչ է պատմում մի ճանապարհորդ նշաններով խօսող մի վայրենու մասին։ «Հնդիկը *») իր ձեռքերը կրծքի վրայ դրեց խաչածե և սկսեց ամբողջ մարմնով դողալ։ ուզում էր ասել, թէ ցուրտ է, ծմ՛եռ է, այսինքն, երբ ինքը ճանապարհորդում էր, այն ժամանակ ձմեռ էր։ Ապա աջ ձեռքի ցուցամատը դրաւ կրծքին, իսկ ձախը ուղղեց դէմի արևմուտք։ ուզում էր ասել, թէ ես գնում էի արևմուտք։ Աջ ձեռքի ափը դէպի բերանը տանելով ուզում էր ասել, թէ ջուր կար։ Յետոյ ձեռքը ալիքների նման շարժեց և նորից ցոյց տւեց արևմուտքը։ ուզում էր յայտնել, թէ իր տեսած ջուրը մի զետ էր, որ հոսում էր

*) Հնդիկները վայրենի մի ցեղ են։

արեմտեան կողմը»։ Հնդիկը մի քանի ժամ այսպէս խօսելով ճանապարհորդի հետ, մանրամասն պատմեց նրան իր զլխով անցած դարձածը։

Հետզհետէ գարդանում էր մարդկանց լեզուն, հարըստանում էր նորանոր ձայներով, բառերով։ Ակզբում բառերը անկապ էին, նրանք նշանների օգնութեամբ էին միտք, խօսք դառնում։ Այսպէս, նախամարդը կասէր. «Անտառ—գնալ» և միենոյն ժամանակ նշաններով կհասկացնէր, թէ՝ «Ես անտառ պիտի գնամ»։ Կամ կասէր. «Ուտել—ես—բրինձ—այստեղ» և կհասկացնէր. «Ես կուտեմ այս բրինձը»։ Կասէր. «Ծերութիւն—նա—հայր—քո» ու կհասկացնէր. «Քո հայրը ծերացել է»։



«Մեզ եետ էին»

«Չորս եսպով էինք»

Այդ բոլորը հասկացւում էր զլխաւորապէս նշաններով, շարժւածքներով։ Ուրեմն զարմանալու չէ, որ նախամարդիկ խաւարի մէջ չէին կարողանում խօսել, որովհետեւ իրար շարժւածքներ չէին տեսնում, որ հանած ձայները հասկանային։

Անցան դարեր։ Լեզուն զարդանալով ու մշակւելով դարձաւ վերջապէս մեր խօսակցութեան լեզուն նման։ Բայց չպէտք է կարծել, թէ լեզուն հիմի բոլորովին կատարելագործւել է։ Ո՛չ. նա դեռ շարունակում է զարդա-

նալ։ Ինչքան մի ազգ շատ է զարդացած, այնքան աւելի հարուստ ու կատարելագործւած է նրա լեզուն։

Միենոյն բնակավայրում ապրող մարդիկ խօսում էին միենոյն լեզուվ։ Պատահում էր, որ հասարակութիւնից բաժանում էին առանձին խմբեր և գնում էին ուղիղ տեղեր ապրելու։ Նոր բնակավայրերում նրանք ծանօթանում էին նոր բաների հետ, և նրանց լեզուի բառերը շատանում էին։ Բայցի գրանից խօսակցութեան ժամանակ լեզուն շարունակ փոփոխում, զարդանում էր։ Այդ պատճառով շատ անդամ հեռացած ցեղակիցները զժւարութեամբ էին հասկանում իրար լեզու։ Այդպիսով միենոյն լեզով խօսող համայնքները զանազան տեղեր ապրելով ստեղծում էին տարբեր լեզուներ։

Նոյն կերպ կազմում են մի լեզուի զանազան բարբառները։ Հայ լեզուն հիմա ընդհանուր է բոլոր հայերին համար։ Բայց ամեն հայ գտւառ ունի իր տեղական գտւառական լեզուն կամ բարբառը։ Գանձակի բարբառի մէջ կան այնպիսի բառեր, ձևեր, որ թիֆլիսի հայ բարբառի մէջ չկան։ Երևանի հայը այլ տեսակ է խօսում, Ալէքսանդրապոլինը՝ այլ։ Դա առաջ է եկել նրանից, որ հայ ազգի զանազան մասերը զանազան տեղեր ապրելով փոփոխել են իրենց սկզբնական մայր լեզուն։

Լեզուի բարբառի կազմութեան վրայ ազգում են նաև հարեան և իշխող ժողովուրդները։ Այսպէս, հայ լեզուի վրայ ազգել են հին ու նոր պարսիկները, ասորիները, յոյները, արաբները և այլն։ Իսկ թիֆլիսի հայ բարբառի վրայ ազգել են վրացիները, թուրքերը, ուռուները, երկուոր հայերը։


33

Գ Ի Ր

Մի ժամանակ մարդիկ գրել-կարդալ չգիտէին։ Հիմա էլ ամեն մարդ գրել-կարդալ չգիտէ։ Բայց և այնպէս ան-

զբագէս մարդիկ կարողանում են իրենց մտքերը ցանկութիւնները որ և է կերպ նշանակել, որ չմոռանան: Օրինակի համար, թաշկինակի ծայրը կապ են զցում, մատին թել են կապում և այլն: Այդ նշանները տեսնելով նրանք իսկոյն յիշում են, թէ ինչ պէտք է անեն:

Իրենց մտքերը այդպէս էին նշանակում և նախամարդիկ: Նրանցից մէկը, օրինակի համար, երբ ուզում էր իր ցե-



Դապ զցած թելեր

Թել անց կացրած խեցիներ

ղակիցներին յայտնել, թէ այս ինչ ծառի մէջ եղած փեթակը տէր ունի, մի կտրւածք էր անում ծառի վրայ: Յեղակիցները այդ նշանը տեսնելով, իսկոյն հասկանում էին, որ փեթակը տէր ունի, էլ ձեռք չէին տալիս:

Նախամարդիկ իրենց մտքերը կարողանում էին նշանակել և ուրիշ կերպ: Օրինակ, թելի վրայ անց էին կացնում գոյնղոյն խեցիներ: Ամեն մի գոյնի խեցին մի ջոկ բան էր նշանակում: Սպիտակը նշանակում էր հաշտութիւն,

բարեկամութիւն: Կարմիրը՝ կոփւ, պատերազմ: Այս գունաւոր խեցիները թելի վրայ զանազան ձևով շարելով զանազան մտքեր էին կազմում և ուզած ժամանակը կարդում:

Նոյն նպատակով գործ էին ածում կապ զցած գոյնըզդոյն թելեր: Ամեն մի կապը, ամեն մի գոյնը մի բան էր ասում, մի բան էր պատմում: Շատ անգամ այդպիսի կապ զցած թելերի վրայ նշանակած ունէին իրենց կրիւների, որսերի, ճանապարհորդութիւնների պատմութիւնները:

Երկար ժամանակ մարդիկ այդ ձևով էին իրենց մըտքերը նշանակում: Այսունետև նրանք կամաց-կամաց սկսեցին զբել իրենց մտքերը: Բայց նրանք մեզ նման չէին զրում, այլ աւելի շուտ նկարում էին:

Օրինակ, նկարում էին մի խումբ մարդիկ, նրանց ոտների հետքերը, դիմացը մի սար, սարի վրայ էլի հետքեր, նորից մարդիկ, յետոյ մի ծառ, որը մի մարդ ուզում է զրկել, բայց ձեռքերը չեն հասնում: Նրանք այդ պատկերը տեսնելով հասկանում էին, որ մի խումբ մարդիկ դնացել են ճանապարհորդելու, ճանապարհը լեռնոտ տեղ է եղել, գնալով հասել են մի երկիր, որտեղ ծառերը այնքան հաստ են եղել, որ երկու ձեռքով չեն կարողացել բռնը գրկել:



Պատկերներով գրւած ճանապարհորդութիւն

Այսպէս ահա պատկերների օգնութեամբ մարդիկ կարողանում էին զանազան մտքեր, պատմութիւններ գրելու կարգալ: Գրութեան այս ձևը կոչւում է պատկերագիր կամ

հիերօգլիք։ Հիերօգլիքներով էին զբում կարդում և եղիպտացիները։ Մինչև հիմա էլ նրանց հին տաճարների ու գերեզմանների աւերակների վրայ մնացել են պատկերագրեր։ Գիտնականները կարողացան կարդալ այդ պատկերագրերը և իմացան, թէ ինչպէս էին ապրում հին եղիպտացիները։



Եղիպտական հիերօգլիքներ

Բայց պատկերագրով չէր կարելի ամեն բան գրել։ Օրինակ, չէր կարելի նկարել—քաջութիւն, աշխատանք, լոյս և ուրիշ շատ բաներ, որոնք իրենց պատկերը չունեն։ Այդ դժւարութիւններից դուրս գալու համար մարդիկ ըսկեցին մի քանի պատկերներ զանազան մտքով դործ ածել։ Այսպէս, նկարում էին առիւծ և կարդում թէ առիւծ և թէ ոյժ կամ քաջութիւն։ Նկարում էին արեգակ և հասկանում էին, թէ արեգակ և թէ լոյս, ցերեկ։ Նկարում էին եղը և հասկանում էին թէ եղը և թէ աշխատանք և այլն։ Սա կոչւում է պայմանաւոր պատկերագիր։

Թէև պատկերագրի պակասը լրացնելու համար հնարեց պայմանաւոր պատկերագիրը, բայց էլի չէր կարելի ամեն գրել։

Դրութիւնը աւելի հեշտացաւ, երբ մարդիկ սկսեցին բարի ամեն մի հնչիւնը առանձին պատկերով նշանակել։ Ահա օրինակ, ինչպէս կարող էին գրել ծանօթ բառը. նրա մէջ կայ հինգ հնչիւն՝ Ծ, Ա, Ն, Օ, Թ, այդ պատճառով կնկարէին հինգ առարկայ, որոնք սկսւում են այդ հնչիւններով—Ծառ, Աքաղաղ, Նետ, Օձ, Թիթեռ։ Եւ կարդացողը այդ առարկաների պատկերներին նայելով ոչ թէ կմտածէր ծառի, աքաղաղի, նետի և թիթեռի մասին, այլ նրանց



առաջին հնչիւններից կկազմէր ԾԱՆՈԹ բառը։ Այդպէս էլ երբ տեսնում էին նկարած պարկ, աչք, հաւ, եղը, ցին, կարդում էին պահից։ Այս եղանակով կարելի էր ամեն բան գրել. հարկաւոր էր միայն բառը բաժանել հնչիւնների և այդ հնչիւններով սկսւող պոարկաների պատկերները նկարել։ Այդ պատճառով հնչիւնները կրում էին զանազան պոարկաների անուններ։ Օրինակի համար, առ հնչիւնին ասում էին ալէփի, որ հրէից լեզւով նշանակում է եղը. և հնչիւնին ասում էին րէթ, որ հրէից լեզւով նշանակում է տուն. զ հնչիւնին ասում էին զիմել, որը հրէից լեզւով նշանակում է ուղարկում է ուղտ և այլն։

Այսպիսով մարդիկ գտան գրել-կարդալու այրըննական եղանակը։


Մենք հիմա ա-ին ասում ենք այլ, պ-ին բնն, գ-ին զիւ և չենք հասկանում, թէ ինչու են տառերը այսպէս կոչւում։ Բայց բանից դուրս է գալիս, որ դրանք հայերէն բառեր չեն, այլ հրէից լեզւից վերցրած բառեր են։ Այլ-ը հրէից ալէփի բառն է, ընկ-ը հրէից բէթ բառն է, զիւ-ն էլ հրէից զիմել բառն է։

Սկզբում գրելիս աշխատում էին պատկերները ճիշտ նկարել, բայց երբ տեսան, որ մանրամասն նկարելը շատ ժամանակ է խլում, սկսեցին ամբողջ առարկայի փոխարէն միայն նրա ամենագլխաւոր մասը նկարել։ Իսկ երբ ամբողջ պատկերներ էին նկարում, այն ժամանակ էլ շտապ-շտապ մի քանի գծերով էին գծագրում։ Այդ պատճառով քանի գնում, այնքան փոխաւում էին պատկերագրերը։ Վերջապէս կազմւեցին այնպիսի գրեր, որոնք

լորովին նման չէին սկզբնական ալէփին ու բէթին, այսինքն եզան ու տան պատկերներին։

Այբուբենը առաջին անգամ մշակեցին փիւնիկեցիները, որոնք ապրում էին Միջերկրական ծովի ափին և հարևան էին հրէաներին, ասորիներին ու արաբներին։ Փիւնիկեցիք իրենք չհնարեցին այբուբենը, այլ վերցրին եղիպտացիներից և աւելի պարզեց տւին։ Այնուհետև այբուբենը տարածւեց հրէաների, յոյների, հայերի և ուրիշ ժողովուրդների մէջ։

Հին Միջագետքի բնակիչները (բարելացիները, ասորեստանցիները) գործ էին ածում ուրիշ տեսակ գրեր։ Նրանց գրերը սեպի, բևեռի (մեխի) ձեւ ունէին, այդ պատճառով կոչւում են սևազներ կամ ըսեւոազրեր։ Գրելիս բևեռագրերից կազմում էին զանազան խմբեր։ Իւրաքանչիւր խումբը նշանակում էր կամ մի վանկ, կամ մի բառ և կամ նոյն խոկ մի միտք։ Կարդացողը նայում էր բևեռագրերի խմբին, բայց չէր հասկանում, թէ ինչ է այդ խումբը—վանկ է, բառ է, թէ միտք է։ Այդ բանը խիստ դժւարացնում էր բևեռագրերի կարդալը։



Բևեռագրի արձանագրութիւն

Բևեռագրերով գրում էին նաև Հայաստանի հին բնակիչները, որոնք կոչւում էին լսալին։ Այժմ Հայաստանի զանազան կողմերում մնացել են բևեռագրի արձանագրութիւններ։ Ամենից նշանաւոր արձանագրութիւնը գտնվում է Վանայ ծովի արևելահիւսիսային կողմը, մի քարաժայով

վրայ։ Այդ արձանագրութիւններից երեսում է, որ խալդերը երկար ժամանակ պատերազմել են հարևան Ասորեստանի հետ։

Հին ժամանակ թուղթ չկար։ Այդ պատճառով մարդիկ գրում էին փայտի, քարի, ոսկրի, աղիւսի, պղնձի, արծրճի վրայ։ Այդ առարկաների վրայ փորագրում էին սրածայր գործիքներով։

Մարդիկ գրում էին նաև մնագաղաթի վրայ, որը զբելու համար պատրաստած կաշի էր։ Հին ժամանակներից մնացել են այնպիսի բարակ և մաքուր մագաղաթներ, որ թղթից դժւար են զանազանություն։ Իսկ հին եղիպտացիները գրում էին պապիրոս բոյսի մազուտ ցողունից պատրաստած թերթերի վրայ։ Մագաղաթի և պապիրուսի վրայ գրում էին սրած եղեգով կամ փետուրէ գրչով։

34

ԱՍՏԻԱԾՆԵՐ

Նախամարդիկ ամեն բանի վրայ ուշագրութիւն էին դարձնում։ Նրանք աշխատում էին հասկանալ, թէ բնութեան մէջ ինչն է իրենց օգուտ տալիս և ինչն է վնասում։

Կային շատ բաներ, որ նրանք հասկանում էին։ Փորձով գիտէին, օրինակ, որ փայտը փայտին քսելուց առաջ է գալիս կրակ, քարով խփելուց թռչունն սպանում է, միսը կշտացնում է մարդուն և այլն։

Այսպիսի պարզ բաները նրանք հասկանում էին։ Բայց բնութեան մէջ շատ բան կայ, որ նրանք չէին կարող հասկանալ։ չգիտէին, օրինակ, թէ ինչիցն է առաջ գալիս քամին, անձրւը, աղբիւրներն ու գետերը, տարւայ եղանակները, լոյսն ու մութը։ Չգիտէին, թէ ինչ բան է արեր, արշալոյսը, լուսինը աստղերը, կայծակը։

Գետը կենդանու նման շարժւում, առաջ էր գնում, բայց ծայրը չէր վերջանում և շատ անգամ էլ գազանի

Նման կուլ էր տալիս մարդկանց: Քամին չէր երևում, բայց կոտրում էր ծառերը: Լոյս ցերեկին յաջորդում էր մութ գիշերը, մարդիկ չէին կարողանում տեսնել և ազատ շարժւել: Բայց այդ երկար չէր շարունակում, արշալոյսը բըսնում էր երկինքը և կարծես բոցերի ու ծխի միջից դուրս էր վազում արել և լուսաւորում ու տաքացնում երկիրը: Երեւմն էլ միանգամից երկինքը մթնում էր, սեսև ամպերը ծածկում էին երկնքի երեսը: Մէկ էլ յանկարծ տրաքում էր կայծակը, ամպերը ճեղքում և սարսափելի ոյժով խըփում, փշում էր հսկայ ծառերը և անտառը հրդեհում:

Այս բոլորից մարդիկ վախենում էին կամ զարմանում, բայց չէին կարողանում հասկանալ, թէ ինչ են դրանք կամ ինչից են առաջ գալիս: Տեմնում էին, որ իրենք թոյլ ու անպաշտպան են այդ անհասկանալի ոյժերի առաջ: Բնութեան այդ ոյժերին նախամարդիկ աստւած էին համարում:

Նրանց կարծիքով, ինչ որ բնութեան մէջ կատարում էր, աստւածներն էին կարգագրում: Նրանք էին բոյսերն անեցնում, երկիրը պառւղներով լցնում, մարդկանց կեանքը երկարացնում, անձրւ ու տաքութիւն ուղարկում, ցանած դաշտերն ու կենդանիների հօտերը պահպանում կամ ոչնչացնում, հիւանդութիւններ ուղարկում կամ առողջացնում մարդկանց:

Այսպէս, աստւածները կամ օգուտ էին տալիս մարդկանց, կամ վնասում էին: Օգուտ տւողներին մարդիկ բարի էին համարում, իսկ վնասողներին՝ չար:

Շատ էին աստւածները, բայց նրանցից ամեն մէկը էր առանձին գործն ունէր: Մէկը պաղաքերութեան աստւածն էր, միւսը խաւարի ու չարութեան, երրորդը՝ արեի, չորրորդը՝ քամու, մի ուրիշը՝ կայծակի: Մինչեւ անգամ մոծակներ քշող աստւած էլ կար (*):

*) Հին հայերը հաւատում էին, որ կան և այնպիսի աստւածներ, որոնք մեռած մարդկանց լիզելով կենդանացնում են: Այդ աստւածները կոչւում էին առելք կամ յարալեզ:

Նախամարդիկ կարծում էին, որ աստւածներն ապրում են երկրի վրայ: Նրանց բնակարաններն էին սարերը, ժայռերը, անտառները, այրերը, աղբիւրները, գետերը, կենդանիները, ծառի կոճղերը, քարերն ու ոսկորները: Այդ բոլոր տեղերն ու առարկաները սուրբ էին համարւում, որովհետեւ այնտեղ, նրանց կարծիքով, աստւածներ էին ապրում:

Ամեն մի ցեղ, ամեն մի տոհմ աշխատում էր մի այդպիսի սուրբ տեղ ձեռք բերել, որ այնտեղ ապրող աստւածն իրենց օգնի: Իւրաքանչիւր մարդ էլ ուզում էր մի սուրբ առարկայ ունենալ իր մօտ, որ ազատւէր վտանգներից:

Մարդիկ կարծում էին, որ աստւածներն իրենց նման են ապրում, որ նրանց էլ հարկաւոր է կերակուր, բնակարան, հագուստ, զարդարանքներ: Նրանք էլ են մարդկանց նման ուրախանում, տիրում, բարկանում, ծերանում, հիւանդանում, մինչեւ անգամ մեռնում:

Այսպէս օրինակ՝ երբ ձմեռը գալիս էր և արել երկար ժամանակ չէր երևում, մի քանի երկիրներում ասում էին, թէ արև աստծուն սպանել են: Երբ գարնանը գետերը վարարում էին և կարմիր հողից կարմրում՝ մարդիկ ասում էին, թէ սպանւած արեի արիւնը խառնւել է ջրի հետ: Մուգ էին անում, կանայք երեսները չանգուտում էին, դանակներով կտրատում և այսպէս ողբում արեի մահը: Բայց շուտով ուրախ լուր էր տարածւում, թէ արև աստւածը կենդանացել է և բարձրացել երկինք:

Նրանք կարծում էին նաև, որ աստւածները մարդկանց նման կուռւմ են իրար հետ: Երբ արել խաւարում էր, հին եղիստացիք ասում էին, թէ խաւարի աստւածը վայրենի խոզի կերպարանքով յարձակել է լոյսի աստծու վրայ և նրա մի աչքը հանել: Բայց լուսնի աստւածը օգնութեան է հասել և կուրացած աստծուն բժշկել:

Այսպէս, ամեն բանով աստւածները նման էին մարդկանց:

Երբեմն մարդիկ նոյնիսկ իրենց նախնիքներին էին աստւածացնում: Աստւածներին հաւասարում էին այն նախնիքները, որոնք իրենց կեանքում մեծ գործեր էին կատարել, մեծ օգուտներ էին տւել իրենց ցեղակիցներին: *)

Այդպիսի մարդկանց մասին ասում էին, թէ նրանց հայրերը հասարակ մարդիկ չեն եղել, այլ աստւածներ, իսկ մայրերը եղել են հասարակ կանայք:

35

Հ Ո Գ Ի Ն Ե Ր

Վայրենի մարդիկ փոքր երեխաների նման չէին հասկանում, թէ ինչ բան է երազը: Եթէ երազում երեխան դրանի մէջ խնձորներ է տեսնում, զարթնելուց յետոյ որոնում է իր խնձորները, բայց չգտնելով՝ սկսում է մօրից պահանջել: Կարծում է, որ մայրը գրպանից հանել է նրա խնձորները և չի տալիս: Ակսում է լաց լինել: Բայց մայրը հասկացնում է, որ նա խնձոր չի ունեցել գրպանում, այլ միայն երազումն է տեսել:

Վայրենի մարդն էլ երբ երազում որսորդութիւն էր անում կամ պտուղներ հաւաքում, կարծում էր, որ ինքնիսկապէս որսի է գնացել կամ պտուղներ է հաւաքել:

Բայց երբ նա այդ բանը պատմում էր ընկերներին, նրանք ասում էին, որ նա տեղից չի շարժւել, պառկած քնած է եղել:

Այն ժամանակ վայրենին մտածում էր. «Ուրեմն իմ մէջ կայ մի անտեսանելի բան, որ քնած ժամանակ դուքս է գալիս ինձանից և գնում կենդանիներ որսալու, պտուղներ հաւաքելու և յետոյ նորից գալիս, մտնում է մարմնիս մէջ»:

Այդ անտեսանելի բանին մարդիկ ասում էին հոգիք երբ քնած մարդը զարթնում էր, մարդիկ ասում էին, թէ

*) Օրինակ՝ ոչնչացրել էին վայրենի գաղաններին, երկիրը մաքել էին աւաղակներից, յաղթել էին թշնամիներին և այլն:

հոգին վերագարձաւ: Իսկ երբ մէկը մեռնում էր, ասում էին, թէ հոգին ընդմիշտ թողել է մարմինն ու հեռացել: Եթէ երազում վայրենին տեսնում էր իր մեռած ընկերներին, որոնք նրա հետ որս էին անում, կարծում էր, թէ գրանք մեռածների հոգիներն են, եկել են իրեն օգնելու: Հին եղիպտացիք մինչև անգամ հաւատում էին, որ մարդու մահից յետոյ հոգին պարապում է որսորդութեամբ, ձկնորսութեամբ, վարում ու ցանում է դաշտը և այլն: Այնպէս որ նրանց կարծիքով մեռած մարդու հոգին էլ ապրում է կենդանի մարդու նման: Այդ պատճառով, երբ մէկը մեռնում էր, նրա հետ թաղում էին՝ ամանով կերակուր, գէնքեր, զանազան գործիքներ, զարդարանքներ և այլն: Շատ երկիրներում մեռելի հետ թաղում էին նաև ընտանի կենդանիներ, մինչև անգամ նրա կնոջն ու ստրուկներին *):

Մարդիկ հաւատում էին, որ հոգին մեռած մարմնի մօսից իսկոյն չի հեռանում: Կան երկիրներ, որտեղ հիմա էլ կարծում են, թէ մարդու մահից յետոյ հոգին մնում է սենեակում: Այդ պատճառով բաց են անում պատուհանները, որ նա կարողանայ սենեակից դուրս գնալ: Հին եղիպտացիք դերեզմանների մօտ ծառեր էին տնկում հոգիների համար, որովհետև կարծում էին, թէ հոգիները սիրում են ձօճւել ծառի ճիւղերի վրայ:

36

Զ Ո Հ

Երբ մարդիկ հիւանդանում էին կամ մի ուրիշ զնաս ստանում, կարծում էին, որ դրա պատճառը աստւածներն ու հոգիներն են: Այժմ էլ, երբ նեղրի զլուխը ցաւում է, նա կարծում է, թէ իր մեռած հայրն է նրա զլուխը ցաւացնում:

*) Այժմ, երբ քանդում են հին գերեզմանները, այնտեղից հանում են հին ժամանակի գէնքեր, ամաններ, զարդարանքներ և զանազան գործիքներ:

Վայրենի մարդն այսպէս էր մտածում. «Որպէսզի ինձ ոչ մի անբախտութիւն չպատահի, որսո չփախչի, ցանած դաշտս լաւ պտուղ տայ ու ես էլ առողջ մնամ,—այդ բոլորի համար ես պէտք է հոգս քաշեմ աստւածների ու հոգիների մասին»։ Եւ նա սկսում էր նրանց կերակրել։ Այդ կերակուրը կոչւում է զո՞հ։

Սկզբում աստւածներին ու հոգիներին կերակրում, պաշտում էին բաց բնութեան մէջ՝ սարերի վրայ, անտառներում կամ գաշտերում։ Մարդիկ հաւաքւում էին և սկսում ուտել ու խմել։ Նրանք կարծում էին, որ այդ ժամանակ աստւածներն ու հոգիները՝ առանց երեալու՝ նրանց հետ ուտում ու խմում են միկնոյն բաները։ Մի քանի երկիրներում զոհելու առարկաներն այրում էին, որ աստւածները կարողանան նրանցով կերակրւել։

Երբ մարդիկ անտառներում դեռ պտուղներով ու արմատներով էին կերակրւում, անտառների մի մասը աստւածների ու հոգիների համար էին թողնում, որ նրանք պտուղները քաղեն և ուտեն։ Ոչ ոք իրաւունք չունէր այդ տեղերից մի պտուղ քաղելու։ Յանցաւորներին պատժում էին։ Իսկ երբ մարդիկ սկսեցին հացահատիկներով ու մսով կերակրւել, այն ժամանակ սկսեցին իրենց աստւածներին էլ նոյն կերակուրը զոհել։

Այսպէս՝ ամեն մի ժողովուրդ, ինչ որ ինքն ուտում էր, նոյնը զոհում էր և իր աստւածներին։ Որտեղ մարդիկ խոզի կամ շան միս էին ուտում, այնտեղ աստւածներին էլ խոզի կամ շան միս էին զոհում։ Իսկ որտեղ այդ կենդանիներից զգւում էին, այնտեղ այդպիսի կենդանիներին պիղծ էին համարում և չէին զոհում։

Նախամարդիկ աստւածներին ու հոգիներին զոհում էին նաև մարդու միս և արիւն, որովհետեւ կարծում էին, թէ նրանք էլ իրենց պէս մարդու միս ու արիւն են սիրում։ Կային ցեղեր, որոնք յարձակւում էին օտար ցեղերի վրայ և նրանցից գերիներ բերում զոհելու համար։ Այդ գերիներին մորթում էին, մեծ խնջոյք սարքում և ուտում

նրանց միսն ու արիւնը։


Պատահում էր, որ մարդիկ զոհում էին իրենցից մէկին։ Բնարած մարդուն սուրբ էին համարում, լաւ կերակրում էին և նրա ամեն ասածը կատարում։ Այդպիսի մարդուն նոյնիսկ բախտաւոր էին համարում։

Շատ տեղերում մարդիկ իրենց մարմնի կաշին կտրատում էին և արիւն բաց թողնում։ Այդպիսով նրանք իրենց արիւնը զոհում էին աստւածներին։ Մարդիկ մինչև անգամ իրենց որդիներին էին զոհ բերում։

Բայց մարդ զոհելու սովորութիւնը երկար չշարունակւ եց։ Մարդկային զոհերը վերջացան և մարդիկ սկսեցին միմիայն կենդանիներ զոհել։

37

ԿՈՒՌՔԵՐ ԵՒ ՄԵԶԵԱՆՆԵՐ



Փիւնիկիական կուռք

Մարդիկ կամենալով իրենց աստւածներին պատկերացնել, զանազան նիւթերից՝ կաւից, փայտից ու քարից շինում էին նրանց արձանները և պաշտում նրանց։ Նըրանք կարծում էին, որ աստւածները այդ արձանների մէջ են բընակւում, ինչպէս առաջ ապրում էին սարերի, աղբիւրների կամ ուրիշ առարկանների մէջ։ Արձաններն այդպիսով դարձան աստծու բնակրան կամ ուրիշ խօսքով՝ կուռք։

Սկզբում կուռքերը շատ կոպիտ ու անճունի էին, որովհետեւ դեռ լաւ գործիքներ չկային։ Բայց երբ մարդիկ ծանօթացան մետաղների հետ և երկաթէ գործիքներ

ունեցան, այս ժամանակ սկսեցին շատ սիրուն արձաններ շինել: Ոչ միայն փայտից ու քարից էին շինում արձանները, այլ և պղնձից, բրոնզից, արծաթից և մինչև անգամ ոսկուց: Աշխարհիս ամենագեղեցիկ կուռքերը յոյներն են շինել:

Կուռքերն առհասարակ շինում էին մարդու նմանութեամբ: Բայց երբեմն նրանք կենդանու կամ ուրիշ առարկայի ձև ունեին: Մի քանի երկիրներում կուռքը թըռչունի կամ գաղանի գլուխ ունէր, իսկ մարմինը նման էր մարդու մարմնին: Կամ, ընդհակառակը, մարմինը կենդանու մարմին էր, իսկ գլուխը՝ մարդու: Ասորեստանում մի կուռք կար, որը թուչունի թևեր ունէր, մարդու գլուխ, առիւծի ճանկեր, կարիճի պոչ, այծի պողեր և շան մարմին: Այնքան անձունի էր նա, որ ամենքը սարսափում էին նրանից:

Մարդիկ իրենց կուռքերի համար առանձին տներ շինեցին և նրանց կանգնեցրին այդ կռատունների մէջ: Շատ տեղերում կուռքերը դնում էին ոչ թէ շինութեան մէջ, այլ տանիքի վրայ: Կռատուններին հին հայերն ասում էին մ'եհեան:



Յաւական կռւոք

Մեհեաններն առաջ փոքր ու հասարակ տներ էին: Բայց հետզհետէ մարդիկ սկսեցին աւելի մեծ և գեղեցիկ մեհեաններ շինել: Վերջն այնպիսի փառաւոր մեհեաններ շինեցին, որ հիմա էլ մարդիկ գարմանում են՝ նրանց մա-

տեղերում կուռքերը դնում էին ոչ թէ շինութեան մէջ, այլ տանիքի վրայ: Կռատուններին հին հայերն ասում էին մ'եհեան:

Մեհեաններն առաջ փոքր ու հասարակ տներ էին: Բայց հետզհետէ մարդիկ սկսեցին աւելի մեծ և գեղեցիկ մեհեաններ շինել: Վերջն այնպիսի փառաւոր մեհեաններ շինեցին, որ հիմա էլ մարդիկ գարմանում են՝ նրանց մա-

ցորդները տեսնելով: Եգիպտոսում մի մեհեան կար, որի շրջագիծը չորս վերստ էր:

Այդպիսի փառաւոր մեհեանների մէջ Եգիպտոսի մի քանի քաղաքներում էին զանազան կենդանիների՝ եղանը, կատուն, կապիկին, կոկորդիկունին, ոչխարին, այծին, շանը և այլն: Կոկորդիկունին պահում էին մի լծի մէջ և կերակրում էին մսով ու գինով:

Պաշտող եղը, որ կոչւում էր Ապիս, նշանաւոր աստւած էր համարւում Եգիպտոսում: Երբ նա մեռնում էր, ամբողջ երկիրը եօթանասուն երկուօր սուգ էր պահում:

Սուրբ կենդանիներին ոչ ոք իրաւունք չունէր սպանելու: Մի կատու սպանելու համար Եգիպտոսում մահւան պատիժ էին տալիս յանցաւորին:

Ամեն մի աստւած տարւայ մէջ իր տօնն ունէր: Այդ տօններին ահագին ժողովուրդ էր հաւաքւում մեհեաններում և մեծ տօնախմբութիւններ սարքում: Ծաղիկներով զարդարում էին մեհեաններն ու կուռքերը, անուշանոտ խունկեր ծխում, զոհեր էին մորթում, ուրախ ճաշկերոյթ սարքում, պար բռնում, երգում, նւագում:

Այսպիսի մեծ տօնախմբութիւններ կատարւում էին և հին հայաստանում, մանաւանդ Նաւասարդի տօնին, երբ մարդիկ իրենց այգիների ու գաշտերի պտուղները քաղելուց յետոյ ուղում էին իրենց շնորհակալութիւնը յայտնել Ամանոր աստծուն՝ նրա տւած բարիքների համար:

Աստւածներին ու հոգիներին ծառայելու գործերն սկըրում շատ քիչ էին ու հեշտ: Բայց հետզհետէ նրանք շա-



Եգիպտական կռւոք

տացան և դժւարացան։ Ամեն մարդ այլիս չգիտէր, թէ ինչպէս պէտք է նրանց ծառայել, ինչպէս պէտք է նրանց կամքը հասկանալ, բժշկել նրանց ուղարկած հիւանդութիւնները և այլն։

Այդ բոլորն առաջ ցեղապետներն ու տոհմապետներն էին կատարում իրենց միւս գործերի հետ։ Բայց երբ նրանց գործերը շատացան, այն ժամանակ ցեղի կամ տոհմի անդամներն սկսեցին իրենց միջից ջոկ մարդիկ ընտրել և աստւածներին ծառայելու գործը յանձնեցին նրանց։ Այսպիսի մարդկանց ըուրիմ էին ասում։

Քուրմերը պարտաւոր էին աստւածներին ծառայել, զոհ մատուցանել, խունկ ծխել կուռքերի առաջ և աղօթել ցեղի անդամների համար։ Երբ ցեղը կուի էր գնում, նրանք յաղթութիւն էին խնդրում աստւածներից, երբ անձրե չէր գալիս, անձրև էին խընդրում, երբ հիւանդութիւններն սկսում էին մարդկանց կոտորել՝ նրանք խնդրում էին աստւածներին, որ երկրից դուրս հանեն այդ հիւանդութիւնները։

Քուրմերը զանագան միշնցներով աշխատում էին աստւածների կամքն իմանալ։ Այսպէս, օրինակ, նրանք ուշադրութիւն էին դարձնում, թէ ինչպէս են թռչում թռչունները, ինչ ձայն



Քուրմ

է հանում քամին ծառի տերենների մէջ և այլն*):

Նրանք պէտք է հիւանդութիւններն էլ բժշկէին։ Ամենքը հաւատում էին, որ հիւանդութիւնների պատճառը հոգիներն ու աստւածներն են, որոնք մտնում են մարդու մէջ և նրա մարմինը ցաւացնում։ Այդ պատճառով քուրմերն աշխատում էին նրանց դուրս հանել հիւանդի մարմնից։ Նրանք սեղմում կամ ծծում էին ցաւող տեղը և յետոյ տան դուռը բաց անելով, թքում էին։ Կարծում էին, որ ծծելով հանում են չար հոգուն և թքելով տանից դուրս անում։

Հիւանդի մօտ գնացող քուրմը երբեմն իր հետ տանում էր առպրակով զանագան մանր առարկաներ։ Դրանք կուռքեր էին։ Այդ կուռքերի մէջ ապրող աստւածներն ու հոգիները նրանց կարծիքով մտնում էին հիւանդի մարմնի մէջ և այնտեղից դուրս էին անում չար հոգուն, կամ աղօթում էին աստւածներին, որ աստւածներն իրենք բժշկեն հիւանդներին։ Սակայն աստւածներն իրենց արած բարիքների համար վարձարութիւն էին պահանջում։ Այդ պատճառով քուրմերը զոհ էին մատուցանում նրանց։

Մարդիկ ոչ մի բան չէին խնայում իրենց աստւածներից։ Նւիրում էին խունկ, պտուղներ, ընտանի կենդանիներ, նոյն իսկ այգիներ, հողեր ու անտառներ։ Նւիրած կենդանիներից հետզհետէ կազմուում էին ահազին հօտեր։ Աստւածներին նւիրում էին ամենալաւ կենդանիները։ Շատ անդամ քուրմերն իրենք էին ցոյց տալիս, թէ որ կենդանին պէտք է աստծուն նւիրել։

Այդ բոլոր հարստութիւնը քուրմերն էին պահում, պահպանում։ Ոչ չէր համարձակում զրանց մօտենալ, մի բան գողանալ, որովհետեւ վախինում էին աստւածների վրէժից։

Աստւածներին շատ քիչ բան էին զոհում։ Մնացած

*) Հին հայերը Արմաւրի մօտ տնկած սոսիների անտառում տերենների ոստափիւնից զանագան գուշակութիւններ էին անում։

ահագին հարստութիւնը մնում էր քուրմերին։ Դրանով էլին նրանք ապրում։

Քուրմերին առաջ ընտրում էին, բայց հետզհետէ նըր-ըանց պաշտօնը ժառանգական դարձաւ. երբ քուրմը մեռ-նում էր, նրա տեղ որդիին էր քրմութիւն անում:

Ժամանակի ընթացքում քուրմերն այնքան շատացան,
որ նրանցից կազմւեց մի առանձին ըլլմական դասակարգ։
Նրանք ունեին իրենց գլխաւորը կամ քրմապետը։ Շատ
իշխաններ, մինչև անգամ թագաւորների որդիք ձգտում
էին քրմապետ դառնալ։



ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

1

ՀԱՅԿ ԵՒ ԲԵԼ

Հայկը զաղթում է Միջագետքից

Եփրատ և Տիգրիս մեծ գետերի մէջ գտնւում է մի
ընդարձակ դաշտավայր, որ կոչւում է Միջագետք։ Հին
ժամանակ Միջագետքը շատ պաղաւէտ երկիր էր, այնտեղ
բնակւում էին բազմաթիւ ցեղեր։

Այդ ցեղերից մէկը, որի ցեղապեան էր Բէլ անունով մի հսկայ, խիստ ուժեղացաւ և տիրեց միւս ցեղերին։ Գոռոգացաւ Բէլը իր ցեղի տարած յաղթութիւններից։ Նա պահանջեց, որ միւս բոլոր ցեղերը ճանաչեն իր իշխանութիւնը և կատարեն իր հրամանները։

Բացի մի ցեղից, բոլոր ցեղերը հնագանդեցին նըան։
Զհնագանդող ցեղի զիսաւորն էր Հայկը—գանգուր մա-
զերով, վառվոռւն աչքերով մի կտրիճ, որ հսկաների մէջ
յայտնի էր իբրև քաջ նետաձիգ և հաստ աղեղ բռնող։

Գեղեցիկ ու հաստագեղ Հայկը էլ զուզեց մնալ Միջա-
դեաքում, հաւաքեց իր որդիներին, աղջիկներին ու թոռ-
ներին, թւով մօտ 300 հոգի և չւեց, գնաց դէպի հիւսիս,
դէպի Արարադի երկիրը:

Երկար ձանապարհ գնալուց յետոյ նա հասաւ մի լեռ-նոտ երկիր, որտեղ բնակւում էին մի քանի ցեղեր։ Հայկը

տիրեց այդ ցեղերին, յետոյ բնակութեան տներ շինեց և այդ տեղը տւեց իր թռո կաղմոսին, որ Արմենակի որդին էր: Իսկ ինքը մնացած ցեղակիցների հետ շարունակեց ճանապարհը, գնալով գէպի հիւսիս-արևմուտք: Նա հասաւ մի բարձր դաշտ և բնակւեց այնտեղ: Այդ լեռնադաշտը անւանեց Հարք, որ նշանակում է հայրեր: Այստեղ շինեց մի գիւղ, որ իր անունով կոչեց Հայկաշէն: Հարքում կային մանր ցեղեր, նրանք եկան և ինքնակամ հնագանդեցին Հայկին:

Հայկը կոտու է Բէլի հետ

Գոռող Բէլը չմոռացաւ Հայկին: Եւ ահա իր որդիներից մէկին հաւատարիմ մարդկանցով ուղարկեց Հայկի մօտ, որ նա ետ դառնայ, հնագանդի իրեն և խաղաղ ապրի իր երկրում:

— Ի՞նչ ես գնացել այդ ցուրտ երկիրը և սաոցը ել հպարտ սիրտգ, — ասացին Բէլի պատգամաւորները, — արի մեղմացրու սրտիդ սաոնութիւնը, հնագանդիր ինձ և խաղաղ ապրիր իմ երկրում:

Այս լսելով Հայկը, խիստ պատասխան տւեց և ետքարձը պատգամաւորներին:

Զայրացաւ Բէլը Հայկի պատասխանի վրայ: Հաւաքեց իր ձեռքի տակ եղած ցեղերը և գնաց դէպի Հարք, որ պատժի յանդուզն Հայկին:

Դեռ չէր հասել Կորդւաց լեռներին, որ Կադմոսը նըկատեց Բէլի շարժւող ամբոխը: Նա իսկոյն քաջընթացիկներ ուղարկեց Հայկի մօտ, որ ասեն:

« Իմացիր, ովք քաջ, Բէլը դալիս է քեզ վրայ իր բարձրահասակ հսկաներով: Ես փախայ նրա ձեռքից և դալիս եմ շտապով: Ուրեմն դու էլ շտապիր, մտածիր, ինչ անելու ես՝ արա»:

Հայկը իսկոյն հաւաքեց իր որդիներին թռոներին, ուժեղ ու աղեղնաւոր մարդկանց և գնաց Բէլի դէմ: Նա

հասաւ մի ծովակի ափ, որի ջուրը աղի էր և լի մանր ձկներով: Հայկը կանգ առաւ այդտեղ և այսպէս դիմեց իր սակաւաթիւ կուղներին.

— Քալիս է գոռող Բէլը մեզ վրայ: Հվախենանք, յարձակւենք ուղղակի դէպի այն կողմը, որտեղ կանգնած կը լինի Բէլը իր հսկաներով: Կամ յաղթենք և ցոյց տանք մեր քաջութիւնը, կամ մեռնենք ու չտեսնենք, թէ ինչպէս գերի կվարեն մեր ընտանիքները:

Ասաւ Հայկն ու առաջ շարժւեց: Բաւական ժամանակ գնացուց յետոյ, նա գուրս եկաւ մի դաշտաձև տեղ, բարձր սարերի մէջ:

Դաշտի միջուկում գետակ էր գետակի ձախ ափին: Երբ նա գլուխը բարձրացրեց, տեսաւ, որ գիմացի սարերի վրայ սկին է տալիս Բէլի խառնիճաղանձ ամբոխը: Իսկ ինքը Բէլը գետակի ձախ ափում, մի բլրի վրայ, հպարտ ու հանդարտ կանգնել էր հսկաների մէջ և դիտում էր չորս կողմը:

Հայկն իսկոյն ճանաչեց Բէլին: Նա զիխին դրել էր երկաթէ զիխանոց, թիկունքն ու կուրծքը պաշտպանել պղնձէ տախտակներով, բարձերն ու բազուկները պատել պահպանակներով: մէջքը պնդացը ել գոտիով, ձախ կողքից կապել էր երկսայրի սուրը, աջ ձեռքին բռնել պինդ նիզակը, իսկ ձախ ձեռքին վահանը: Եւ այսպէս զրահաւորւած կանգնել էր զինւած հսկաների մէջ:

Այս որ տեսաւ Հայկը, շտապեց կարգի բերել իր կտրիճներին: Արմենակին երկու եղբայրների հետ կանգնեցրեց իր աջ կողմը, կադմոսին միւս երկու որդիների հետ՝ ձախ կողմը, որովհետեւ սրանք բոլորն էլ վարժ էին սուր և աղեղ գործ ածելու մէջ, ինքը կանգնեց առաջ, իսկ մնացածներին եռանկիւնու ձեռվ շարեց ետեից և հանդարտ առաջ գնաց:

Երբ հսկաները երկու կողմից իրար վրայ յարձակւեցին, ահագին դղրդիւն բարձրացաւ: Բաւական հսկաներ ընկան երկու կողմից էլ բայց ոչ մի կողմը չյաղթեց: Կասկած ընկաւ Բէլի սիրտը, նա վճռեց նորից բար-

Ճրանալ բլուրը և սպասել մինչև իր գլխաւոր բանակը գայ: Հայկն իսկոյն հասկացաւ Բէլի միաբը, առաջ վազեց, ուժգին լարեց իր լայն աղեղը և երեքթևեան նետը կըպցը Բէլի կըծըին: Ալաքը ծակեց կըծըի տախտակը և դուրս եկաւ թիկունքից: Հսկայ Բէլը տապալւեց գետին, իսկ ամբոխը սարսափահար սկսեց փախչել, հարուստ աւար թողնելով դաշտում: Աւարի մի մասը Հայկը տւեց կաղմուն, որը նրան իմաց էր տւել Բէլի գալու մասին: Կռւի տեղում Հայկը գիւղ շինեց և անւանեց Հայք: Վերջը ամբողջ գաւառը կոչւեց Հայոց Զոր: Իսկ այն բլուրը, ուր ընկել էր գոռող Բէլը, անւանեց Գերեզմանիք: Բէլի մարմինը գեղերով պատել տւեց և հրամայեց տանել Հարք ու թաղել մի բարձր լեռան վրայ, որ որդիքն ու թոռնելը տեսնեն իրենց պապերի քաջութիւնը: Սրանից յետոյ բաւական տարիներ ապրելով Հայկ նահապետը մեռաւ:

Հայկի անունով նրա ցեղը կոչւեց հայ, իսկ բնակած երկիրը՝ Հայք կամ Հայաստան:

2

ՀԱՅԵՐԸ ՏԱՐԱԾՈՒԹ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկ նահապետին յաջորդեց իր աւագ որդի Արմենակը: Այս իր եղբայրներին թողեց Հարքում, իսկ ինքը ընտանիքով և իր մարդկանցով գնաց դէպի հիւսիս-արևելք ու հասաւ մի խոր դաշտավայր, որ շրջապատւած էր բարձրագագաթ սարերով: Այս սարերի ստորոտում բղխում էին բազմաթիւ վճիռ աղբիւրներ, որոնք իրար հետ միանալով կազմում էին հանդարտահոս գետեր: Եւ գետերն այնպէս էին բոլորում սարերի ու դաշտերի շուրջը, ինչպէս պատանիները պար բռնելով բոլորում են օրիորդների շուրջը: Դաշտի հարաւային կողմը ուղղաձիգ բարձրանում էր մի ձիւնապատ, սպիտակավայլ սար, որ կարծես ալեսոր ծե-

րունի լինէր միւս երիտասարդ սարերի մէջ:

Արմենակ նահապետը իր բնակութիւնը հաստատեց այս խոր ընկած դաշտի հիւսիսային կողմը, մի բարձրագագաթ սարի տակ: Իր անունով սարը կոչեց Արագած, իսկ բնակութեան տեղը՝ Արագածոտն:

Արմենակի մահից յետոյ նահապետ եղաւ նրա աւագ որդի Արմայիսը: Այս գնաց դէպի հարաւ և բնակութիւնը հաստատեց մի բլրի վրայ, մեծ գետի ափին: Բնակութեան տեղը իր անունով Արմաւիր կոչեց, իսկ գետը անւանեց Երասխ՝ իր Արաստ թոռան անունով:

Արմայիս նահապետը ունէր մի շատակեր և բազմածին որդի, որի անունն էր Շարա: Նա Շարային ամբողջ ընտանիքով ուղարկեց մօտակայ պտղաւէտ դաշտը, որ գտնւում էր Արագածի հիւսիսային կողմը: Ասուս են, որ այդ դաշտը Շարայի անունով է Շիրակ կոչւել: Շարայի շատակերութիւնը առած էր գարձել հայ գիւղացիների մէջ: Նրանք շատակեր մարդուն հանաբով ասում էին. «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն»: Այսինքն — «Եթէ որկորդ Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակի ամբարները չեն»:

Արմայիսին յաջորդից իր մեծ որդի Ամասիան, որը Արմաւրում բաւական ժամանակ ապրելով ունեցաւ երեք որդի՝ Գեղամ, Փառոխ և Ցոլակ:

Ամասիա նահապետը Գեղամին թողեց Արմաւրում, իսկ ինքը իր միւս որդիների հետ Երասխ գետն անցնելով, գնաց բնակութեան տեղեր շինեց հարաւային սպիտակավայլ մեծ սարի մօտ, որը իր անունով Մասիս կոչեց: Այդտեղ բնակեցրեց Փառոխին և Ցոլակին, իսկ ինքը վերադարձաւ Արմաւիր և մի քանի տարուց յետոյ վախճանւեց:

Ամասիայի մահից յետոյ նահապետ դարձաւ Գեղամը: Նա իր Հարմա որդուն Արմաւրում թողնելով, գնաց դէպի արելահիւսիս և հոսաւ մի ծովակի ափ, որ գտնւում էր սարի ետեւում: Նա շէնացրեց այդ ծովակի ափը: Իր

անունով սարը կոչեց Գեղ, իսկ շինած տեղերն ու ծովը՝
Գեղաքունի:

Այստեղ նա մի որդի ունեցաւ, որին Սիսակ անւա-
նեց: Սիսակը շատ գեղեցիլ, ճարտարախօս և հպարտ
մարդ էր: Գեղամ նահապետը նրան բնակեցրեց Գեղար-
քունի կամ Գեղամայ ծովի արևելահարաւային կողմը մի
լեռնու երկրում: Սիսակը շնչեր շինեց իր նոր բնակու-
թեան տեղում և իր անունով կոչեց Սինիք կամ Սիսական:

3

Ա. Բ Ա. Մ

Հայերը հետզհետե խաղաղ կերպով բազմանում և
տարածում էին Հայաստանի զանազան կողմերում: Այդ
խաղաղութիւնը խանգարեցին հարևան ժողովուրդները, ո-
րոնք յարձակւելով հայերի վրայ թալանում էին նրանց
ունեցած չունեցածը և ոտնակոխ անում հայրենի երկիրը:

Այսպիսի դրութեան մէջ էր հայոց աշխարհը, երբ
նահապետ դարձաւ Հարմայի որդի քաջ Արամը: Նա տես-
նելով, որ հարևան ազգերը նեղում են հայերին, հաւաքեց
մօտ յիսուն հազար աղեղնաւորներ և նիզակաւորներ, որ
երկիրը պաշտպանի թշնամիների յարձակումներից:

Նախ գնաց մեղացիների վրայ, որոնք արդէն եր-
կու տարի էր, որ ասպասակում էին հայոց աշ-
խարհը արևելեան կողմից: Մեղացիների առաջնորդն էր
հպարտ և պատերազմաէր նիւքար Մադէսը: Քաջ Արամը
գիշերով յարձակեց նիւքար Մադէսի վրայ, ջարդեց նրա
զօրքը, իսկ իրեն գերի բռնելով բերեց Արմաւիր և սպա-
նել տւեց: Մեղացիների երկիրը Արամը հարկի տակ դրաւ:

Հայաստանի հարաւային կողմը կար մի շատ մեծ տէ-
րութիւն, որ կոչւում էր Ասորեստան: Արամի ժամանակ
Ասորեստանում թագաւոր էր նինոսը, որ նստում էր նին-
ուէ քաղաքում: Սա անգիր զբոյցներից լսել էր, որ Արամի

նախահայր հաստաղեղ Հայկը սպանել է իր նախահայր
Բէլին: Ուստի մաքումը դրել էր չնջել Հայկի ցեղը եր-
կրիս երեսից: Բայց երբ տեսաւ Արամի տարած յաղ-
թութիւնը, ծածկեց իր չար մտադրութիւնը և հրաման
ուղարկեց Արամին, որ արձակ համարձակ շարունակի
իր իշխանութիւնը: Բայց դրանից նինոսը իրաւունք
տւեց Արամին մարգարտէ վարսակալ գործ ածելու և աշ-
խարհիս երեսին իրենից յետոյ երկրորդը կոչւելու:

Մեղացիներին յաղթելուց յետոյ Արամը նոյն զօրու-
թեամբ գնաց Ասորիքի կողմերը: Այստեղ նա պատահեց
Բարշամ անունով մի հսկայի, որ նոյնպէս ասպասակում
էր հայոց երկիրը: Բարշամն իր ձեռքի տակ ունէր քառա-
սուն հազար հետևակ և հինգ հազար ձիաւոր: Նա անա-
պատ էր դարձել շրջակայ երկիրները և ծանր հարկ գրել
բնակիչների վրայ: Արամը պատերազմեց Բարշամի հետ և
յաղթեց նրա զօրքին. այդ տեսնելով Բարշամը կորդւաց
աշխարհի միջով փախաւ դէպի Ասորեստանի դաշտերը,
որտեղ վրայ հասան Արամի զինակիրները և սպանեցին:
Ասորիները աստι ածացնելով Բարշամին՝ երկար ժամանակ
պաշտում էին նրան իր բազմաթիւ քաջութիւնների հա-
մար: Արամը Բարշամի երկիրի մեծ մասը հարկաւու դարձ-
րեց իրեն:

Բայց քաջ Արամը դեռ էլի գործ ունէր անելու: Նա
թէ և ապահովել էր Հայաստանի արևելեան և հարաւային
սահմանները, սակայն արևմտեանը դեռ կարօտ էր պաշտ-
պանութեան: Այստեղ, արևմուտքում, ապրում էր նրա
ամենավտանգաւոր թշնամին, Պայապիս Քաղիան, որ տի-
րել էր ամբողջ Կապադովկիային՝ Պոնտոսից սկսած մինչև
Ովկիանոսը (Միջերկրական ծովը): Ահա սրա դէմ պէտք է
պատերազմէր քաջ Արամը: Պատերազմ գնալուց առաջ
Արամը արևելեան սահմանի պահպանութիւնը յանձնեց
Սիսակեաններին, իսկ հարաւային սահմանին՝ Կաղմեան-
ներին: Ապա հաւաքեց քառասուն հազար հետևակ և երկու
հազար ձիաւոր ու գնաց դէպի արևմուտք՝ Պայապիս Բա-

դիայի դէմ: Պատերազմում Պայտապիսը յաղթւեց և փախաւ մի կղղի: Յաղթութիւնից յետոյ Արամը Կապադովկիայում՝ կառավարիչ նշանակեց իր ազգական Մշակին, տալով նը- րան տամն հաղար զօրք, իսկ ինքը վերադարձաւ Հայաստան: Մշակը մի փոքրիկ քաղաք շինեց, պատեց պարիսպ- ներով և իր անունով Մշակ կոչեց: Կապադովկացիք չկա- րողանալով ուղիղ արաւասանել այդ անունը, ասում էին Մաժաք: Վերջը Մաժաք քաղաքն ընդարձակւեց և կոչւեց Կեսարիա:

Արամը հրամայեց, որ Կապադովկիայի բնակիչները սովորեն հայ լեզուն և հայերէն խօսեն: Այդ երկիրը կոչ- ւեց Առաջին Հայք: Այնուհետև Արամը այդ կողմերից ըս- կսած մինչեւ բուն Հայաստանը բնակեցրեց գանազան տե- ղերից բերած մարդկանցով, այնպէս որ հետզհետէ կազ- մւեցին Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք:

Այսպիսի քաջագործութիւններ կատարելուց յետոյ, հզօր ու անւանի դարձաւ Արամը, և նրա անունը յայտնի եղաւ բոլոր հարևան ազգերին: Նրանք սկսեցին Արամի անունով մեր աշխարհը Արմէն կոչել:

4

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Շամիրամը պատերազմում է Արա Գեղեցկի հետ

Արամին յաջորդեց իր որդի Արան: Նինոսը Արային նոյն պատիւները տւեց, ինչ որ Արամ նահապետին: Այս- պէս, Արան էլ մարգարտէ վարսակալ էր կրում դվին և կոչւում էր աշխարհիս Երեսին Երկրորդը՝ Նինոսից յետոյ: Արան շատ գեղեցիկ էր. նրա գեղեցկութեան մասին շատ էր լսել Նինոսի կին Շամիրամը, լսել էր ու սիրա- հարւել: Բայց քանի Նինոսը կենդանի էր, Շամիրամը չէր համարձակում յայտնել Արային իր սէրը և նրա հետ ամուսնանալ:

Նինոսի մահից յետոյ Շամիրամը էլ չկարողացաւ թագյնել իր սէրը: Նա թանգագին ընծաներով պատգա- մաւորներ ուղարկեց Արա Գեղեցկի մօտ և շատ ուրիշ պարզեներ խոստանալով աղաչում էր նրան, որ գայ Նինոսէ, ամուսնանայ իր հետ և թագաւորի Նինոսի բոլոր Երկիր- ների վրայ: Բայց Արա Գեղեցիկը մերժեց Ասորեստանի մեծ թագուհու խնդիրը և ետ դարձրեց պատգամաւորնե- րին: Շատ գնացին ու եկան պատգամաւորները, բայց Արա Գեղեցիկը չուղեց կատարել Շամիրամի կամքը:

Այն ժամանակ բարկացաւ Շամիրամը և վճռեց բռնի ոյժով աիրանալ Արային: Նա անթիւ զօրքեր հաւաքեց իր Երկիրներից և գնաց դէպի Հայաստան. հասաւ Արայի դաշ- տը, որ նրա անունով Այրարատ էր կոչւում: Շուտով Արա Գեղեցիկն էլ իր զօրքով եկաւ, բանակ դրաւ Շամիրամի դիմաց: Պատերազմից առաջ Շամիրամը հրամայեց իր զօ- րապետներին, որ աշխատեն կենդանի բռնել Արա Գեղեց- իկն: Բայց կուի մէջ ջարդւեց Արայի զօրքը, և Շամիրա- մի զինւորների ձեռքից ընկաւ Արան:

Յաղթութիւնից յետոյ Շամիրամը դիակապուտներ ուղարկեց պատերազմի դաշտը, որ դիակների մէջ գտնեն իր սիրելի Արային:

Դիակապուտները Արա Գեղեցիկի դիակը գտան քաջ զինւորների դիակների մէջ և բերին Շամիրամի մօտ:

Շամիրամը հրամայեց, որ դիակը տանեն և դնեն իր ապարանքի վերնատանը: Երբ հայ զօրքը Արայի մահան պատճառով նորից պատերազմ յայտարարեց Շամիրամին, Շամիրամն ասաւ. «Հրամայեցի իմ աստւածներին, որ լի- զեն Արային, և նա կկենդանանայ»:

Բայց ելք դիակը հոտեց, Շամիրամը հրամայեց ձգել նրան մի մեծ փոս և հողով ծածկել: Իսկ իր սիրելիներից մէկին ծածուկ զարդարելով լուր տարածեց, թէ՝ «Աստ- ւածները լիզելով կենդանացրել են Արային և կատարել իր ցանկութիւնն ու փափագը»: Այսպէս հաւատացնելով ա- մենքին, պատերազմը դադարեցրեց:

Շամիրամակնելաւ քաղաքի շինութիւնը

Պատերազմից յետոյ Շամիրամը մի առ ժամանակ մնաց Այրարատ դաշտում։ Ապա երբ շոգերն ընկան, ճանապարհորդելու դուրս եկաւ դէպի հարաւ, դէպի ծաղկաւէտ հովիտներն ու դաշտերը։

Նա տեսաւ երկրի գեղեցկութիւնը, օդի մաքրութիւնը, յստակ աղբիւրների քչքչոցը, գետերի կարկաչիւնը, տեսաւ ու ասաւ.

—Արժէ, որ բնակութեսն քաղաք և պալատ շինենք այսպիսի բարեխառն օդ և մաքուր ջուր ունեցող երկրում, որ տարւայ չորրորդ մասը, այն է ամառը, անց կացնենք Հայաստանում, իսկ մնացած երեք զով եղանակները նիւէում։

Շատ տեղեր ման եկաւ նա, շատ սիրուն տեղեր տեսաւ, բայց ամենից շատ հաւանեց Աղի ծովի արեելեան ափը։

Այստեղ, ծովի ափին, նա տեսաւ մի երկայնաձև բըլուր, որ ձգւում էր դէպի արևմտահիւսիս։ Բլրի հարաւային մասում ուղիղ դէպի երկինք էր նայում մի քարաժայու։ Սրանից մի փոքր հեռու, դէպի հարաւարեելեան կողմը տարածւում էր մի դաշտաձև հովիտ, որը ծովի ափն իջնելով՝ ընդարձակ, գեղեցիկ ձոր էր դառնում։ Բլուրից թափւում էին քաղցրահամ ջրեր, որոնք ձորերի և հովիտների միջով վազելով, միաւորւում էին և փառաւոր գետեր կազմում։ Այս հովտաձև ձորի մէջ ջրերի աջ և ձախ կողմերում շինւած էին շատ գիւղեր։

Շամիրամի հաւանած բլրի արեելեան կողմը մի փոքրիկ սար կար։ Ահա այս տեղն ընտրեց ամարանոցի համար։ Այնուհետև Շամիրամը հրամայեց Ասորեստանից և իր միւս երկիրներից բերել տասներկու հազար հասարակ բանւոր և վեց հազար ընտիր վարպետներ, որոնք հմուտ էին փայտի և քարի, պղնձի ու երկաթի արհեստների մէջ։ Եւ նրա հրամանը կատարւեց։ Շուտով բերեցին

խառնիճաղանձ բանւորներ և հանճարեղ, իմաստուն արւեստագէտներ։

Շամիրամը հրամայեց, որ ամենից առաջ շինեն գետի ամբարտակը։ Խոշոր քարերով և ապառաժներով մի բարձըր ու լայն ամբարտակ շարեցին, ամրութեան համար կրով ու աւազով ծեփեցին. այնպէս որ մինչև հիմա էլ գրեթէ մնում է այդ ամբարտակը, և եթէ մէկն ուզենայ պարսատիկի համար մի քար պոկել, ինչքան էլ չարչարուչ չի կարող, ասում է աւանդութիւնը։ Այդ ամբարտակը տանելով շատ ասպարէզներ*), հացըրեց մինչև քաղաքի համար նշանակւած տեղը։

Այնուհետև սկսեցին բուն քաղաքի շինութիւնը։ Շամիրամը հրամայեց խմբերի բաժանել բոլոր բանւորներին և իւրաքանչիւր խմբի վրայ նշանակեց ընտիր վարպետներ։ Այսպէս մի քանի տարի աշխատեցնելով, աւարտեց հրաշալի քաղաքի շինութիւնը ամուր պարիսպներով և պղնձէ գոներով։ Քաղաքի մէջ նա շինել տւեց զանազան տեսակ և գոյնգոյն քարերից կրկնայարկ և եռայարկ ընտիր ապարանքներ, ամեն մէկը արևմտահիւսիս։ Ինչպէս որ հարձակաւոր է։ Դեղեցիկ և ընդարձակ փողոցներով բաժանեց ամբողջ քաղաքը, իսկ նրա մի քանի տեղերում շինեց զարմանք շարժող բաղանիքներ։

Գետի ջրի մի մասը տարաւ քաղաք և առւակներով բաժանեց ամբողջ քաղաքում, բուրաստանների, ծաղկոցների և ամեն տեսակ պէտքերի համար. իսկ միւս մասը տարաւ ծովակի աջ ու ձախ ափերը՝ շրջակայքը ջրելու։

Քաղաքի շուրջը տնկել տւեց բազմատեսակ ծառեր, որոնք միմեանցից զանազանուում էին իրենց տերեներով ու պտուղներով։ Բացի դրանից տնկել տւեց խաղողի որթ։ Շամիրամը ամեն կերպ աշխատում էր հոյակապ և հոչակաւոր դարձնել իր շինած քաղաքը. այդ պատճառով անթիւ բնակիչներ բերեց և բնակեցրեց նրա մէջ։

*.) Ասպարէզը 125 քայլ է։

Բայց այդ հրաշալի շինութիւնների մէջ ամենաառաջինը և ամենափառաւորը քաղաքի ծայրում շինւածն էր:

Պարսպել տւեց հարաւային քարաժայռի գագաթը, շինել տւեց դժւարամուտ և դժւարելանելի թագաւորանիստ շէնքեր:

Իսկ քարաժայռի արևելեան կողմը, որի վրայ այժմ ոչ չի կարող երկաթով մի գիծ անգամ քաշել, նա փորել տւեց գանազան պալատներ, օթևաններ, դանձատներ և երկար վիճեր, որոնց նշանակութիւնը մինչև հիմա էլ ոչ ոք չգիտէ: Ամբողջ քարաժայռի երեսը ողորկել տւեց և հրամայեց նրա վրայ արձանագրել իր գործերը: Սրա տեսքը միայն կարող է մարդու զարմանքը շարժել: Բայց ոչ միայն այդտեղ, այլ և Հայաստանի շատ ուրիշ տեղերում արձաններ կանգնեցրեց և նոյն գրերով գանազան բաներ գրել տւեց:

Շամիրամի անունով այս հրաշալի քաղաքը կոչւեց Շամիրամակերտ, որ նշանակում է Շամիրամի ձեռքով շինած: Բայց վերջը նրա անունը փոխւեց և դարձաւ Վան:

Անուշաւան Սոսանէր

Արա Գեղեցկի մահից յետոյ Շամիրամը Հայաստանի վերակացու նշանակեց նրա տասներկու տարեկան որդուն, որին Արա անւանեց, որովհետև շատ էր սիրում Արա Գեղեցկին:

Այս Արան Անուշաւան անունով մի որդի ունեցաւ, որը խօսրի ու գործի մէջ շնորհալի էր: Նրան Սօս էին կոչում, որովհետև նւիրւած էր սօսի ծառերի անտառին, որ Արմենակ նահապետն էր տնկել Արմաւրի մօտ: Այս ծառերի տերեների սօսափիւնից հին հայերը զանազան գուշակութիւններ էին անում, նայելով թէ քամին ինչպէս էր փչում՝ հանդարտ, թէ սաստիկ:

Անուշաւանը երկար ժամանակ գտնւում էր Ասորեստանի արքունիքում: Նրա հետ այնտեղ լաւ չէին վարւում,

արհամարհում, չարչարում էին: Բայց վերջը մի քանի բարեկամների օգնութեամբ Սօսանւէրը կարողացաւ Հայաստանի կառավարիչ դառնալ:

ՏիգրԱն ԵՐԻԱՆԴԵԱՆ

Տիգրան Երանդեանը որպէս թագաւոր

Արա Գեղեցկի մահից յետոյ Հայաստանը երկար ժամանակ մնաց Ասորեստանի իշխանութեան տակ: Բայց երբ Ասորեստանը թուլացաւ և մեղացի թագաւորների ձեռքն ընկաւ, այն ժամանակ Հայաստանը ազատւեց և թագաւորութիւն գարձաւ: Հայաստանի առաջին թագաւորն էր Պարոյրը:

Պարոյրից յետոյ իններորդ թագաւորն էր Տիգրան Երանդեանը: Սա մեր բոլոր թագաւորներից ամենից հզօրն էր, ամենից խելօքը և ամենից քաջը: Նրա օրով հարստացաւ Հայաստանը և լցւեց ոսկով, արծաթով, թանգագին քարերով ու զգեստներով: Տգեղները այդ զգեստներով գեղեցիկ էին երևում, իսկ գեղեցիկները՝ անման, ասում է աւանդութիւնը:

Տիգրան Երանդեանը կարգի բերեց զօրքը: Հետեակներին ձիաւոր գարձրեց, պարսաւորներին նետ ու աղեղ տւեց, շերտաւորներին՝ սուր ու նիզակ, իսկ ով մերկ էր՝ զգեստաւորեց զրահ ու վահանով: Եւ այնպէս կանոնաւորեց զօրքը, որ միայն զէնք ու զրահի շողշողալը սարսափ էր զցում թշնամու սիրտը:

Մեր հին ժողովրդական երգիչները այսպէս էին երգում մեծ թագաւորի մասին:

Նրա մազերը շէկ էին ու գանգուր, դէմքը գեղեցիկ, աչքերը ժապուն, թիկունքը հաստ, ազդբերը լիքը և ոտները գեղանի: Կեր ու խումի և զւարճութիւնների մէջ պարկեշտ էր և չափաւոր: Իմաստուն ու ճարտարախօս էր և ամեն բանի մէջ շնորհալի: Արդարադատ էր և հաւասար:

ըասէլ: Ոչ նախանձում էր լաւերին և ոչ արհամարհում թոյլերին, այլ աշխատում էր ամենքի վրայ հաւասարապէս տարածել իր ինամքը:

Աժդահակի երազը եւ Ցիզրանունու նետ ամուսնանալը

Երբ Հայաստանում թագաւորում էր Տիգրան Երանդեանը, այն ժամանակ Մարաստանում թագաւոր էր ծերունի Աժդահակը, իսկ Պարսկաստանում՝ Իիւրոսը:

Տիգրան Երանդեանը բարեկամական դաշն էր կապել Կիւրոսի հետ և խոստացել էլ օգնել պատերազմի ժամանակ:

Ծերունի Աժդահակը լսել էր Նրանց միաբանութեան մասին և խիստ կասկածանքի մէջ էր ընկած: Նա տանջում էր կասկածից և չէր կարողանում հանդիսաւ քնել: Նա շուտ-շուտ կանչում էր իր խորհրդականներին և ասում. «Ցոյց տւէք ինձ մի հնար, որով կարողանանք քանդել Կիւրոսի և Տիգրանի սիրոյ կապը»:

Եւ շարունակ այսպիսի շփոթութեան մէջ էր:

Մի գիշեր սաստիկ մտածելուց մի սարսափելի Երազ տեսաւ. վեր թռաւ տեղից, էլ չսպասեց խորհրդի ժամին, այլ կէս գիշերին կանչեց խորհրդականներին.

Զարմացած եկան խորհրդականները և աւելի ևս զարմացան, Երբ տեսան, որ Աժդահակը տխուր ու տրտում նստած, աչքերը գետնին յառած, խորը յոգոցներ է արձակում:

Երբ խորհրդականները նրան հարցըին, թէ ինչ է պատահել՝ Աժդահակը Երկար ժամանակ չկարողացաւ պատասխան տալ. Վերջապէս մի փոքր հանգստանալուց յետոյ ասաւ:

«Ո՞վ սիրելիներ, ես մի սարսափելի Երազ տեսայ: Իբրև թէ գտնւում էի մի անծանօթ Երկրում, մի բարձր սարի մօտ, որի գագաթը կարծես պատած էր սաստիկ սառնամանիքով: Եւ ինձ ասում էին, թէ հայոց Երկրումն

եմ: Երբ Երկար նայում էի սարին, ինձ Երևեցաւ մի ծիրանազգեստ կին, որը Երկնագոյն քօղով ծածկւած նստել էր սարի գլխին: Բարձրահասակ էր, գեղեցիկ աչքերով և կարմիր թշերով:

«Երկունքի մէջ էր նա: Երկար ժամանակ հիացած նայում էի այդ Երևոյթին: Յանկարծ այդ կինը Երեք կատարեալ դիւցազներ ծնեց: Առաջինը մի առիւծ հեծնելով դէպի արկմուտք թռաւ. Երկրորդը ընձի վրայ նստած դէպի հիւսիս սլացաւ, իսկ Երրորդը մի ահազին վիշապ սանձելով կատաղաբար յարձակւեց մեր տէրութեան վրայ:

«Ահա այսպիսի խառն Երազների մէջ էի, որ յանկարծ ինձ տեսայ իմ պալատի տանիքի վրայ կանգնած: Տեսայ, որ տանիքը զարդարւած էր գեղեցիկ և գոյնզգոյն շատըրւաններով, իսկ մեր աստւածները կանգնած էին հըաշալի տեսքով: Ես ձեզ հետ միասին աստւածներին գոհ էի մատուցանում և խունկ ծխում:

«Երբ յանկարծ վերև նայեցի տեսայ, որ վիշապ հեծած դիւցազնը, արծւի նման սլանալով յարձակւեց մեր աստւածների վրայ և կամենում էր նրանց կործանել: Ես մէջ ընկայ և սկսեցի կռւել այն զարմանալի դիւցազնի հետ: «Նախ նիզակներով կռւեցինք և արիւնը հոսեց առւակների պէս ու ծովի նման բռնեց տանիքի Երեսը. այնուհետև սկսեցինք ուրիշ գէնքերով կռւել:

«Բայց ինչու խօսքս Երկարացնեմ: Դիւցազնը գետին տապալեց ինձ... Սաստիկ վախից ըրանեցի, քունս փախաւ, վեր կացայ, բայց ասես էլ կենդանի չեմ... Երազից ուղղակի Երևում է, որ Հայկազեան Տիգրանը յարձակւելու է մեզ վրայ: Այժմ, ասացէք տեսնեմ, թէ աստւածների օգնութիւնից յետոյ՝ գործով ու խօսքով ի՞նչ խորհուրդ էր տալիս ինձ»:

Թագաւորը շատ օգաաւէտ խորհուրդներ լսեց իր խորհրդականներից, շնորհակալութիւն յայտնեց նրանց և շարունակեց.

«Շատ խելօք, շատ իմաստուն խորհուրդներ լսեցի

ձեզանից, ով սիրելիներ: Բայց լսեցէք և իմ կարծիքս, որ
ամուշածների օգնութիւնից յետոյ կարող է պէտք գալ մեզ:
Թշնամուց ազատւելու ամենալաւ միջոցն այն է, որ սի-
րող ձևանանք նրան, միամտացնենք և ապա սպանենք դա-
ւաճանելով: Այս մտադրութիւնը ոչ փողով կարող ենք
գլուխ բերել, ոչ էլ խաբեքայական խօսքերով: Մնում է,
որ կին ուղենք Տիգրանի գեղեցիկ և խելօք քոյր Տիգրա-
նուհուն ու բարեկամանանք Տիգրանի հետ: Երբ մեր մէջ
գնալ գալ կլինի, այն ժամանակ հեշտութեամբ կարող ենք
ոչնչացնել Տիգրանին: Մենք կարող ենք հարստութիւն և
պատիւ խոստանալ Տիգրանի բարեկամներին և հրամայել
կամ սրով սպանեն, կամ թունասորեն կամ թէ ոսկով հե-
ռացնենք նրանից իր մտերիմներին ու կողմնակիցներին և
քոնենք նրան անզօր աղայի սլէս»:

Խորհրդականները շատ հաւանեցին թագաւորի այս
միտքը: Աժդահակը մի նամակ գրեց և խորհրդականներից
մէկին յանձնելով ուղարկեց նրան Տիգրան Երւանդեանի
մօտ մեծամեծ գանձերով:

Նամակի մէջ այսպէս էր գրել.

«Սիրելի եղբայր, գիտես, որ այս աշխարհում աստ-
ւածները մի շատ թանգագին պարզե են տւել մեզ, այն
է՝ սիրելի բարեկամներ: Այդ պարզելը աւելի մեծ է երե-
ւում, երբ բարեկամներդ իմաստուն են և հզօր: Այն ժամա-
նակ ոչ դրսից կհամարձակեն տէրութեանդ վըայ յար-
ձակւել, և ոչ էլ ներսը կյանդնեն ապստամբել: Տեսնե-
լով, որ այսպիսի բարիքներ են ծագում բարեկամութիւնից,
մտածեցի աւելի ուժեղացնել այն ոէրը, որ կայ իմ և քո
մէջ, որպէսզի մենք ամեն կողմից ապահով մնալով ողջ ու
առողջ կառավարենք մեր տէրութիւնները: Բայց այս կլինի
այն ժամանակ, երբ դու ինձ կնութեան կտաս մեծ չա-
յաստանի օրիորդին, քո քոյր Տիգրանուհուն, եթէ իհարկէ
նրա բախտաւորութիւնն ես ուզում, որովհետեւ նա ինձ
մօտ թագուհիների թագուհի կլինի: Ո՞զ եղիր, մեր թա-
գակից և սիրելի եղբայր»:

Այս նամակը ստանալով Տիգրան Երւանդեանը, չը-
հասկացաւ Աժդահակի չար միտքը և Տիգրանուհուն մեծ
պատւով Մարաստան ուղարկեց Աժդահակի մօտ:

Աժդահակը գրգոռմ է Տիգրանուհուն եղած դէմ:

Աժդահակը Տիգրանուհուն դարձրեց տիկնանց տիկին,
ոչ միայն նրա համար, որ չար միտք ունէր սրտում, այլ
նաև խելօք ու գեղեցիկ էր Տիգրանուհին: Այնուհետեւ
Աժդահակը իր տէրութեան մէջ ոչինչ չէր անում առանց
նրա խորհրդի. ամեն գործ կարգադրում էր նրա խօսքով
և հրամայել էր, որ ամենքը հնագանդեն նրան:

Այս բոլորն այսպէս անելուց յետոյ Աժդահակը մի օր
քաղցրութեամբ ուղեց խաբել Տիգրանուհուն և հասնել իր
չար նպատակին:

—Դու չգիտես, ասաւ, թէ ինչ չարամիտ է եղբօրդ
կին Զարուհին: Տիգրանը նրանից ազդւած չի ուզում, որ
դու լինես արիների տիկինը: Բայց քանի ես կենդանի եմ,
Զարուհին չի արժանանալ արիների թագուհու գահին և
տեղ չի բռնիլ աստւածուհիների մէջ: Իսկ դու, սիրելիս,
ոլէտք է ընտրես երկուսից մէկը, կամ պիտի մնաս առաջ-
ւայ ալէս եղբայրասէր և բոլոր արիների աչքում խայտա-
ռակւես, կամ լաւ մտածես վտանգի մասին և գլխիդ
ճարը տեսնես:

Աժդահակը մտադրւել էր սպանել Տիգրանուհուն, եթէ
նա չհամաձայնէր իր ասածներին: Բայց խելօք գեղեցկու-
հին իսկոյն հասկացաւ Աժդահակի դաւաճանութիւնը, միա-
միտ ձևացաւ և քաղցր խօսքերով հանդարտացրեց նրան:
Իսկ միւս կողմից շուտով իր մտերիմ մարդկանց ձեռքով
այս բոլորի մասին մանրամասն յալտնեց եղբօրը:

Տիգրանի եւ Աժդահակի պատերազմը
Այնուհետեւ Աժդահակը պատգամաւորներ ուղարկեց
հայոց թագաւորի մօտ, որ ամեն.

—Արի մեր տէրութիւնների սահմանագլուխը, մի շատ կարևոր խօսելիք ու գործ ունեմ քեզ հետ, որի մասին ոչ գրով կարելի է յայտնել, ոչ էլ մարդու բերանով ասել. պէտք է անպատճառ երես առ երես խօսենք:

Տիգրանը խկոյն հասկացաւ Աժդահակի միտքը և գըրով յայտնեց նրան, որ գիտէ նրա չար խորհուրդները:

Այսպիսով բացւեց Աժդահակի գաւաճանութիւնը: Այսուհետև էլ ոչ մի խորամանկութիւն չէր կարող փրկել Աժդահակին, և պատերազմն սկսւեց:

Հայոց թագաւորը ընտիր զօրքեր հաւաքեց կապադովկացիներից, վրացիներից, աղւաններից և Մեծ ու Փոքը Հայաստանից ու ամբողջ զօրութեամբ գնաց Մարատանի վրայ:

Մեծ վտանգի մէջ էր Աժդահակը, որովհետև նա պէտք է պատերազմէր քաջ Հայկազնի զօրքի հետ: Հակառակութիւնը հինգ ամիս ձգձգւում էր, որովհետև Տիգրան Երւանդեանը շարունակ մտածում էր, թէ ինչպէս անի, ինչ հնար գտնի, որ քրոջն ազատի Աժդահակի ձեռքից: Վերջապէս նա կարողացաւ ազատել Տիգրանուհուն, և մօտեցաւ պատերազմի ժամը:

Քաջերը քաջերին հանդիպելով չէին կամենում թիւնքներն իրար դարձնել, ասում է աւանդութիւնը, ու կոհւը երկար շարունակում էր:

Գեղեցիկ էր Տիգրան Երւանդեանը, ընդունակ բոլոր գործերի մէջ, իսկ ուժի կողմից իր նմանը չունէր աշխարհիս երեսին: Կուի տաք ժամանակը պատահեց նա Աժդահակին, ջրի պէս ձեղքեց նրա երկաթեայ զրահը, նիզակի լայն ծայրը խրեց նրա կուրծքը և գետին տապալեց թշնամուն: Աժդահակի մահը վերջ տւեց կուտին:

Տիգրան Երւանդեանը պատերազմի դաշտից բերեց մօտասը հազար գերիներ: Գերիների մէջ կային Աժդահակի առաջին կին Անոյշը և Աժդահակի ցեղից շատ աղջիկներ ու պատանիներ: Տիգրան Երւանդեանը նրանց բնակեցրեց Մասիս սարի արևելեան լանջի վրայ, իսկ միւս գերիներին

Մասիսի արևելեան կողմը, Երասխ գետի ափին: Հին երգիչները Աժդահակի սերունդը կոչում էին «Վիշապազուն», որ նշանակում է «վիշապի որդի»: այսպէս էին ասում նրանց, որովհետև «աժդահակ» բառը մեր լեզուվ նշանակում է «վիշապ»:

Տիգրան Երւանդեանը չմոռացաւ իր քոյր Տիգրանուհուն: Թագաւորական պատով և բազմաթիւ մարդկանցով նրան ուղարկեց իր շինած Տիգրանակերտ բաղաքը և այն կողմի բոլոր գաւառներին հրամայեց, որ ծառայեն Տիգրանուհուն:

Աժդահակի մահից յետոյ Մարաստանն անցաւ պարսից կիւրոս թագաւորի ձեռքը:

6

Վ Ա Հ Ա Դ Ն

Տիգրան Երւանդեանից յետոյ թագաւորեց նրա կրտսեր որդի Վահագնը: Ժողովրդական աւանդութիւնն ասում է, որ սա շատ քաջ և ուժեղ թագաւոր է եղել, կուել է ոչ միայն մարդկանց, այլ նոյնիսկ վիշապների հետ և հայածել, քաղել է նրանց աշխարհիս երեսից: այդ պատճառով նա կոչւել է Վահագն Վիշապաքաղ:

Մեր հեթանոս պապերը Վահագնին ասսւածացըին իր արած քաջագործութիւնների համար: Նրա կուսքը գլւած էր Աշտիշատ քաղաքի Վահեվահեան մեհեանում կամ Վահագնի սենեակում: Ասում են, որ Վահագնին պաշտում էին նաև վրացիները: Նրանք էլ կանգնեցրել էին Վահագնի արձանը և պատւում էին զոհերով:

Մեր պապերն ասում էին, որ Վահագնը չէր կարող մարդու պէս ծնւել: Նրա ծննդի մասին այսպէս էին երգում ժողովրդական երգիչները —

Երկնում էին երկինք, երկիր,
Երկնում և ծիրանի ծովը,

Երկունքով էր բռնւած նաև
Ծովում կարմրիկ եղեգնիկը:
Շուխ էր բարձրանում եղեգնի փողից,
Բոց էր բարձրանում եղեգնի փողից,
Եւ մի պատճեակ դուրս վազում բոցից
Կրակ մազերով, բոց միրուքով,
Զոյգ արեի պէս աչքերով:

Վահագնի մասին պատմում էին նաև, որ մի անգամ
ձմեռ ժամանակ գնացել, յարդ էր գողացել ասորոց Բար-
շամ ցեղապետից: Երկնքի վրայով շտապ-շտապ վազելիս
յարդը թափթիւել, ցըւել էր երկնքում: Մեր հեթանոս
պապերը երկնքի վրայ ցոյց էին տալիս սպիտակ հետքեր
և ասում, թէ դա «յարդողի ճանապարհ»-ն է:

7

ՎԱՂԱՐՇԱԿ

Վաղարշակը զալիս է Հայաստան

Վահագնից յետոյ մի քանի թագաւորներ նստեցին
Հայաստանում: Արանց գործերի մասին ոչ մի տեղեկու-
թիւն չի տալիս մեր պատմութիւնը:

Յայտնի է միայն Վահէ թագաւորի մասին, որ նա պա-
տերազմել է նշանաւոր Ալէքսանդր Մակեդոնացու հետ և
սպանել կուի դաշտում:

Վահէի մահից յետոյ Հայաստանում վերջացաւ Հայ-
կազանց թագաւորութիւնը, իսկ Հայաստանն ընկաւ Ալէք-
սանդր Մակեդոնացու ձեռքը:

Այդ երկելի թագաւորը տիրեց շատ ու շատ երկիր-
ների և իր աթոռը հաստատեց Բաբելոն քաղաքում: Բայց
շուտով Ալէքսանդր Մեծը մեռաւ, և նրա տիրած երկիր-
ները մակեդոնացի գօրավարները բաժանեցին իրար մէջ:
Մակեդոնացիների իշխանութեան օրով շփոթութիւն

էր տիրում հայոց աշխարհում: Ամեն մէկն աշխատում էր
յաղթել միւսին և տիրել երկրին:

Այդ ժամանակ Կասպից ծովի հարաւարելեան կողմը,
Պարթևաստանում, երեաց մի քաջ իշխան, Արշակ անունով:
Նա մեծ պատերազմներից յետոյ տիրեց արևելքին և Բա-
բելոնից դուրս քշեց մակեդոնացիներին:

Աւելի նշանաւոր էր Արշակ Քաջի թոռը, Արշակ Մե-
ծը: Սա այնքան ուժեղացաւ, որ տիրեց ամբողջ Ասիային
և իր թագաւորութեան գահը հաստատեց Ասորեստանի
Նինւէ քաղաքում:

Օտ կամենալով ապահով կառավարել իր ընդարձակ
թագաւորութիւնը՝ եօթանասուն հազար զօրք տւեց իր եղ-
բայր Վաղարշակին և թագաւոր նշանակեց հայոց աշխարհի
և նրա հարևան երկիրների վրայ:

—Գնա, ուրիշ երկիրներ էլ վերցրու, ասաւ Արշակ
Մեծը, ինչքան միտք ու քաջութիւնդ կլտրեն, որովհեաւ
քաջերի սահմանը իրենց զէնքն է, որքան զէնքը կկտրի,
այնքանն էլ կտիրի*):

Երբ Վաղարշակը Հայաստան մտաւ, հայ իշխանները
չհամարձակեցին գուրս գալ նրա դէմ:

Ընդհակառակը, Բագարատ մեծ նախարարը նրան դի-
մաւորեց իր զօրքով, ոսկի և արծաթ մատուցեց նրան,
զարդարեց մետաքսէ շորերով ու վակասով, հայրենի թա-
գը դժաւ նրա գլխին և տարաւ նստեցրեց ոսկեզօծ, ակա-
նակուռ գահի վրայ, իր աղջիկն էլ տւեց կնութեան:

Վաղարշակը ապահովում է իր թագաւորութիւնը

Վաղարշակը Հայաստանի զանազան կողմերից ժողո-
վեց անւանի և քաջ մարդկանց իրենց զօրքերով ու զնաց
կանդ առաւ Արմաւիր կոչւած բլրի մօտ:

*). «Անմանք քաջաց, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այն-
քան ունի»:

Նա բաւական ժամանակ մնաց այդտեղ զինավարժութեան համար, որովհետև հայոց զօրքը պատերազմական ոչ մի կարգ չգիտէր:

Այսուհետև Վաղարշակը գնաց Փռքը Ասիայի իշխանութիւնութիւնների մասին, հաստատ էին պահում մակեդոնացիների հետ կապած դաշնը: Կապադովկիայի Մորփիւղիկէս իշխանը նրանց գլուխ անցնելով պատերազմ յայտաբարեց Վաղարշակի դէմ:

Կուռող կողմերը իրար պատահեցին Փռքը Հայքում, կողոնիա կոչւած մի բլրի մօտ: Նրանք բանակ դրին միմեանցից բաւական հեռու և այդպէս մնացին շատ օրեր:

Վերջապէս, երբ Վաղարշակը սկսեց պատերազմը, Մորփիւղիկէսը կատաղաբար յարձակւեց նրա զօրքի վրայ: Մորփիւղիկէսը սրտոտ մարդ էր, խոշոր կազմւածքով: Իր մարմնի համեմատ էլ մեծ ոյժ ունէր: Նա զրահաւորւած էր պղնձով ու երկաթով և իր սակաւաթիւ, բայց ընտիր զինւորների հետ գետին էր տապալում Վաղարշակի քաջ ու ընտիր զինւորներին: Նա աշխատում էր հասնել հայոց թագաւորին: Վերջապէս, մօտենալով, արձակեց իր նետը, որը սլացաւ թռչունի պէս: Բայց չուշացան հայ քաջերը և նիզակով սպանեցին Մորփիւղիկէսին, իսկ նրա զօրքը հալտծեցին:

Այսուհետև դադարեց մակեդոնացիների կորուր, և նըւաճած երկիրը հանդարտւեց Վաղարշակի ձեռքի տակ:

Ապա Վաղարշակ թագաւորը գնաց դէպի հիւսիս և գեղեցիկ կերպով կարգաւորեց այդ կողմի երկիրները: Այդտեղ շինեց իրեն համար ամարանցներ, որոի տեղեր, այգեստաններ և բուրաստաններ:

Նա իր մօտ կանչեց նորեկ վայրենի ցեղերը, որոնք բնակւում էին հիւսիսային դաշտում և Մեծ Կովկասեան լեռների ստորոտում ու հովիտներում: Վաղարշակը հրամայեց նրանց, որ թողնեն աւազակութիւնն ու մարդապահութիւնը, հարկ տան ու հնազանդեն թագաւորական

հրամաններին, որպէսզի, երբ միւս անգամ գայ, գեղեցիկ կարգեր հաստատի նրանց երկրում և իշխաններ ու առաջնորդներ նշանակի նրանց վրայ: Ապա արձակեց նրանց, տալով իմաստուն մարդիկ և վերակացուներ:

Իսկ երբ վիչեցին սաստիկ քամիները և հիւսիսը ցըրտեց, Վաղարշակը իջաւ Արարատեան դաշտը, կարգի դրաւ զօրքը և վերակացուներ նշանակեց այնտեղ: Այսուհետև իր բոլոր գլխաւորներով գնաց Միջագետքի Մծբին քաղաքը, որ Արշակ Մեծը նրան տւել էր իբրև մայրաքաղաք:

Վաղարշակը ծանօթանում է հայերի պատմութեան հնտ

Երբ Վաղարշակը հաստատեց իր թագաւորութիւնը, կամեցաւ իմանալ, թէ իրենից առաջ ովքեր են տիրել հայոց աշխարհին և ինչպիսի մարդիկ են եղել նրանք: Արդէօք քաջ մարդկանց տեղ է թագաւորում, թէ երկչու:

Վաղարշակը գտաւ մի ասորի, Մար Աբաս Կատինա անունով, որը խելօք մարդ էր և լաւ գիտէր քաղոքական ու յունական լեզուները: Մի նամակ տւեց նրան և ուղարկեց իր եղբայր Արշակի մօտ, թանգագին ընծաներով: Նամակի մէջ այս էր գրել:

«Ճամաքի ու ծովի թագաւոր Արշակ, որ պատկերով նման ես մեր աստւածներին, իսկ բախտով բարձր բոլոր թագաւորներից, քո փոքր եղբայր և նիզակակից Վաղարշակը, որ քեզանից հայոց թագաւոր է կարգւած, առողջութիւն ու յաղթութիւն է ցանկանում քեզ:

«Դու ինձ հրամայել էիր, որ քաջ ու իմաստուն կերպով վարւեմ. չմոռացայ խրամը, ինչքան կարողացայ, ինսամբ տարայ և հոգս քաշեցի ամեն բանի մասին:

«Այժմ, երբ քո խնամակալութեամբ կարգի բերի այս թագաւորութիւնը, ուղեցի իմանալ, թէ ինձանից առաջ ովքեր են տիրել հայոց աշխարհին և որտեղից են այս երկիր նախարարութիւնները:

«Ճայտնի չէ, թէ եղել է այստեղ որ և է կարգ և

պաշտամունք։ Ինչպէս նաև, թէ նվեր են այս աշխարհի երելիներից առաջինն ու վերջինը։ Մի օրինաւոր բան չկայ այս երկրում, ամեն ինչ խառն է ու վայրենի։

«Ուստի խնդրում եմ, հրամայես բանալ թագաւորական դիւանդ այս մարդու առաջ, որպէսզի գտնի քո՞ եղբօր ու որդու ցանկացածը և շուտով ճշգրիտ պատմութիւն բերի մեզ։ Ես լաւ գիտեմ, որ իմ ուրախութիւնը քեզ էլ կուրախացնի։

«Ո՞ղջ եղիր գու, որ երկելի ես աստւածների մէջ բնակւելով»։

Արշակ Մեծը Մար Աբաս Կատինայի ձեռքով այս նամակն ստանալով շատ ուրախացաւ, որ այսպէս խելօք բան է մտածել իր փոքր եղբայրը, որին հաւատացել էր իր թագաւորութեան կէսը։ Նա իսկոյն հրամայեց, որ բաց անեն Նինւէի արքունի դիւանը Մար Աբասի առաջ։

Մար Աբաս Կատինան բոլոր մատեանները նայելով, վերջապէս գտաւ մի մատեան, որ Ալէքսանդր Մեծի հրամանով քաղդէական լեզւից յունարէն էր թարգմանւած։ Մատեանը իր մէջ պարունակում էր հին ազգերի և նախնիքների պատմութիւնները։

Այդ մատեանից Մար Աբասը հանեց միայն հայ ազգի ճիշտ պատմութիւնը և յոյն ու ասորի լեզւով գրւած բերեց Մծրին մայրաքաղաքը, Վաղարշակ թագաւորի մօտ, ասում է մեր պատմագիր Մովսէս Խորենացին։

Իսկ գեղեցկադէմ, քաջաղեղ և հանճարեղ Վաղարշակը այդ պատմութիւնը համարեց իր առաջին գանձը և մեծ գգուշութեամբ պահեց իր պալատի մէջ։ Նրա մի մասը հրամայեց, որ փորագրեն արձանի վրայ։

Վաղարշակը կարգ ու կանոն է մտցնում պալատում

Վաղարշակը ծանօթացաւ։ Հայոց աշխարհի պատմութեան հետ իմացաւ, թէ ինչ իշխաններ են եղել հին ժամանակ և ինչ գործեր են կատարել։ Դրա համեմատ էլ

պաշտօն ու պատիւներ տւեց նրանց իր արքունի պալատում, զօրքի և կառավարութեան մէջ։

Վաղարշակը կարգ ու կանոն մտցրեց պալատում։ Նա մեծ ուշադրութիւն դարձրեց իր անձի, պալատի և կանանցի պահպանութեան վրայ։ Այդ գործը նա յանձնեց Հայկի սերնդին։ Այսպէս, Վաղարշակին պաշտպանում էին զինւած թիկնապահներ, որ բաջ նիզակաւոր ու սուսերաւորներ էին։ Դրանց գլխաւորը կոչւում էր Մաղիազ։

Պալատը պահպանում էին չորս գունդ պահապաններ, ամեն մի գնդի մէջ կար տասը հազար զինւած մարդ։ Պալատի պահպան զօրքը կոչւում էր Ոստան գունդ, կանանցի պահպանութեան համար ներքինիներ էին նշանակւած և դրանց վրայ զինւաւոր էր կարգւած Հայր-Մարդպետը։

Պալատում նա նոր օրէնքներ հաստատեց և առանձին ժամեր նշանակեց ընդունելութեան, խորհուրդների, ուրախութիւնների և զբօնանքների համար։

Նա երկու յիշեցնող էր պահում իր մօտ։ Մէկը պէտք է բարին յիշեցնէր, միւսը վրէժինդրութիւնը։ Բարի յիշեցնողին պատւիրել էր, որ իրեն յիշեցնի արդարութիւնն ու մարդասիրութիւնը, եթէ բարկացած ժամանակ անիրաւ հրամաններ տալու լինէր։

Վաղարշակը զանազան պաշտօններ տւեց նախարարներին։ Բագարատ նախարարին նա իրաւունք տւեց թագաւորի գլխին թագ գնելու, թագադիր և ասպետ կոչւելու, որովհետեւ նա պատւով ընդունել էր Վաղարշակին։ Բացի դրանից իրաւունք տւեց նրան արքունիքում և թագաւորական տան մէջ շրջելիս մանր մարգարտով զարդարած երեք տակէն վարսակալ կապելու՝ առանց ոսկու և ակների։ Այս Բագարատից է ծագել մեր պատմութեան մէջ յայտնի Բագրատունի նախարարութիւնը։

Թագաւորից յետոյ երկրորդ նշանակեց Մուրացան նախարարին, այսինքն Մարաց իշխանին, որը Աժդահակի սերնդից էր։

Մի առանձին նախարար նշանակեց, որ իրեն ձեռնոց-

ներ հազցնի, և այդ նախարարութիւնն անւանեց Գնթունի:
Երբ թագաւորը դուրս էր գալիս պալատից, Արծրունի
նախարարները նրա առջևից արծիւներ էին տանում:

Դատ նախարարին, որ Գեղամի սերնդից էր, նշանաւեց որսերի վերակացու: Յետոյ այդ նախարարութիւնը Վարաժնունի կոչեց Դատի Վարաժ որդու անունով, որը յայտնի էր իրեւ հմուտ նետաձիգ:

Գնունի նախարարները համեղ խմիչքներ էին պատրաստում թագաւորի համար: Վաղարշակը շատ էր զւարձանում Գնունի անւան վրայ, որը կարծես նշանակում էր պինի ունի:

Մայրի անտառներում բնակւող Հաւենունիները թագաւորի համար բազէներ պէտք է պահէին:

Սպանդունիները սպանդանոցների վրայ էին կարգւած: Իսկ Զիւնականներն էլ, շատ կարելի է, թագաւորի համար ձիւն բերողներն էին ու նրա ամարանոցներ պահողները:

Վաղարշակը շատ որդիներ ունէր, նա բոլորին չպահեց իր մօտ, Մծբինում, որովհետև գիտէր, որ իր մահից յետոյ կոփւ կսկսէր թագաւորական գահի համար: Վաղարշակը նրանց ուղարկեց Հաշտեանք գաւառը և տւեց այդ գաւառի բոլոք գիւղերի եկամուտները: Բացի գրանից ուռճիկ նշանակեց թագաւորական գանձարանից: Իրեն մօտ թագաւորութեան համար թողեց միայն իր անդրանիկ որդի Արշակին և նրա որդի Արտաշէսին, որին շատ էր սիրում: Եւ իսկապէս, Արտաշէսը կենդանի և ուժեղ տղայ էր: Փոքրիկ Արտաշէսին տեսնողներն ասում էին, թէ նա քաջ մարդ կդառնայ:

Այնուհետև արդէն օրէնք դարձաւ Արշակունի թագաւորների համար, որ միայն մի որդին մնայ թագաւորի մօտ իբրև ժառանգ, իսկ միւսները գնան Հաշտեանք գաւառ:

Վաղարշակը կուսակալներ է նշանակում սահմանների վրայ

Վաղարշակը ուշադրութիւն դարձրեց նաև երկրի պահպանութեան վրայ:

Նա զինւորական կարգեր մտցրեց և նրանց համար զանազան աստիճաններ սահմանեց՝ առաջին, երկրորդ և այլն:

Երկրի սահմանների մօտ ապրող իշխաններին Վաղարշակը կուսակալ նշանակեց: Նրանք պէտք է պահպանէին հայոց աշխարհը թշնամիների յանկարծակի յարձակումներից:

Այդ կուսակալների մէջ նշանաւոր էր արևմուտքի կուսակալ Տորքը, որին խիստ անձոռնի գէմքի համար՝ Անգեղ էին ասում: Եւ իսկապէս, կոպիտ էր նա, խոժոռակազմ, տափակարիթ, խոր աչքերով ու դաժան հայեացքով: Տորք Անգեղի ոյժի և քաջութեան մասին շատ զարմանալի բաններ էին պատմում երգիչները: Ասում էին, որ նա ձեռքերով ճորմ էր այնպիսի կարծը ու պինդ քարեր, որոնք ոչ մի ճեղք չունէին: Ճղած քարը քերում էր եղունգներով և տախտակի պէս հարթում, ապա նրանց վրայ փորագրում էր արծիւներ և ուրիշ բաններ:

Պատմում էին նոյնպէս, որ նա մի օր Պոնտոս ծովի ափին հանդիպել է թշնամիների նաւերին և յարձակւել նրանց վրայ: Թշնամիները նրան տեսնելով քաշւել են ծովը ութ ասպարէզ: Տորքը չկարողանալով նրանց համնել, վերցրել է բլրի չափ քարեր և ձգել նրանց ետևից: Թարերի ընկնելուց ծովի մէջ գոյացել են խոր պատուածքներ, որոնց մէջ խորտակւել են շատ նաւեր. իսկ մնացած նաւերին ըշել, տարել են բարձրացած ալիքները:

Վաղարշակի միա կարգադրութիւնները

Վաղարշակը առանձին ուշադրութիւն դարձրեց նաև պաշտամունքի վրայ: Արմաւիր քաղաքում նա շինել տւեց կուռքերի մեհեաններ և դրաւնրանց մէջ արեգակի, լուսնի և իր նախնիքների արձաններ:

Վահագնի սերնդի մարդիկ եկան նրա մօտ և խնդրեցին, որ թոյլ տայ նրանց մեհեանների մէջ սպասաւորել:

Վաղարշակը մեծապէս պատւեց նրանց, յանձնեց քրմութիւնը, առաջին նախարարութիւնների կարգը դասեց և անւանեց Վահունի:

Վաղարշակ թագաւորը կարգի բերեց նաև բաղաքներն ու գիւղերը: Նա հրամայեց նորոգել Շամիրամի բաղաքը. զանազան տեղերում շինել տւեց բաղմաբնակ քաղաքներ և մեծ ու մարդաշատ գիւղեր: Թէ քաղաքներում և թէ գիւղերում նա նշանակեց իրաւարարներ (դատաւորներ): Հրամայեց, որ քաղաքացիներին աւելի մեծ պատիւներ տան, քան թէ գիւղացիներին: Գիւղացիները պէտք է քաղաքացիներին պատւէին իշխանների պէս: Բայց դրա համար քաղաքացիները չպէտք է պարծենային, այլ պարտաւոր էին եղբայրաբար վարւել գիւղացիների հետ:

Ահա այսպիսի մեծագործութիւններ և բարեկարգութիւններ արաւ Վաղարշակ թագաւորը հայոց աշխարհում: Նա վախճանւեց Մծբին քաղաքում՝ քսան երկու տարի թագաւորելուց յետոյ:

8

ԱՐՏԱՇԵՍ Ա. ԱՇԽԱՐՀԱԿՈՒ

Հպարտ ու պատերազմասէր թագաւոր էր Վաղարշակի թոռ Արտաշէսը: Մինչև նրա թագաւորելը Արշակունիների մէջ պարսից արքաներն էին առաջինը համարւում, իսկ հայոց թագաւորները՝ երկրորդ:

Արտաշէսը չուղեց երկրորդական գահը նստել, այլ կամեցաւ առաջինը լինել: Եւ պարսից արքան առաջնութիւնը նրան տւեց: Այն ժամանակ Արտաշէս թագաւորը իրեն համար մի պալատ շինեց պարսից աշխարհում և ըսկըսեց իր պատկերով փող կտրել. Այնուհետև պարսից թագաւորը ստիպւած էր նրա ձեռքի տակ ծառայել:

Աւագութիւնը չգոհացը Արտաշէս թագաւորին: Նա ուզում էր արշաւել դէպի արևմուտք և նորանոր երկիր-

ներ նւաճել: Նախ քան Հայաստանից դուրս գալը Հայաստանում թագաւոր նշանակեց իր որդի Տիգրանին: Հիւսիսային կողմի կուսակալութիւնը յանձնեց վրաց մեծ բղեշն Միհրգատին և նրան կնութեան տւեց իր Արտաշամայ աղջիկը:

Երկիրը այսպէս ապահովելուց յետոյ Արտաշէսը հրաման տւեց շատ մեծ զօրք ժողովել արևելքից և հիւսիսից: Եկան, հաւաքւեցին զօրքերը: Այնքան շատ էին նրանք, որ անկարելի էր համարել, այլ պէտք էր չափել: Ամեն տեղ, որտեղից նրանք անցնում էին կամ բանակ դնում, Արտաշէսը հրամայում էր մարդագլուխ մի մի քար գցել, որ զօրնով երևայ զօրքերի շատութիւնը: Կուի ժամանակ նրա զօրքի նետաձգութիւնից ծածկւում, խաւարում էր արեգակը, և լոյս ցերեկը մութ գիշեր դառնում: Երբ նրա զօրքը գետից ջուր էր խմում, գետը նւազում էր, ինչպէս ձմբան ամիսներին, մինչև անզամ ձորերից վազող առատ ջրերը չէին կարողանում պակասը լրացնել:

Ահա այսպիսի անհամար զօրքով Արտաշէսը արշաւեց դէպի արևմուտք, տիրեց ամբողջ Փոքր Ասիային և հասաւ մինչև Միջերկրական ծովը:

Ծովի առաջ էլ կանգ չառաւ նա, որովհետեւ վճռել էր ամբողջ արևմուտքը իրեն հնազանդեցնել: Անթիւ նաւերով ծածկեց ծովը և մտաւ Յունաստան: Այդ տիրած երկիրներից նա բաղմաթիւ կուռքեր ուղարկեց Հայաստան:

Բայց յայտնի չէ, թէ ինչ պատճառով ահազին խռովութիւն ընկաւ Արտաշէս թագաւորի զօրքերի մէջ: Նրանք սկսեցին միմեանց կոտորել. ասում են, որ այդ խռովութեան մէջ զինւորները սպանեցին իրենց թագաւորին:

Հպարտ ու պատերազմասէր էր Արտաշէս աշխարհակալը և շատ ու շատ երկիրներ էր նւաճել իր թագաւորութեան օրով, բայց մահւան ըովէին արտասելով բացականչեց. «Աւաղ փառացս անցաւորի», այսինքն՝ «Ափսոս անցաւոր փառքի»:

ԵՐԻԱՆԴ ԱՐԵԱԿՈՒՆԻ

Երևանի Արշակունյաց թագավորելը և մանուկ Արտաշէսի
փախուածը

Արտաշէս Ա-ի մահի յետոյ մի քանի թագաւորներ
նստեցին Հայաստանում։ Այդ թագաւորներից մէկի անունը
Սանատրուկ էր։

Սանատրուկի ժամանակ հայ նախարարների մէջ առաջին տեղն էր բոնում Երւանդ անունով մի սրտոտ ու յաղթանդամ իշխան։ Նրա մայրը Արշակունի էր և ունէր էլլի մի որդի Երւագ անունով։

Երւանդը խոնարհ և առատաձեռն մարդ էր: Նա կարողացել էր բոլորի սիրտը գրաւել: Եւ երբ Սանաւրուկ թագաւորը յանկարծ սպանւեց որսի ժամանակ, Երւանդին նստեցրին թագաւորական զահը: Բայց Բագրատունիներից ոչ ոք չուզեց նրա զիխին թագ դնել:

Թագաւոր դառնալուց յետոյ կասկած ընկաւ Երւանդիկ սիրտը: Նա վախենում էր, որ Սանատրուկի որդիները մեծանալով իր ձեռքից կիսեն թագաւորութիւնը: Եւ այդ վտանգից ազատւելու համար նա կոտրել տւեց Սանատրուկի որդիներին^{*}):

Ազատւեց միայն մանուկ Արտաշէսը, որին ծծմայրը
փախցրեց Հեր գաւառը: Ծծմայրը այդ մասին իսկոյն լուր
տվեց Արտաշէսի դայեակ Մմբատին, որը Բիւրատ Բագրատու-
նու որդին էր: Նա այդ ժամանակ գտնւում էր իր կալած-
քում՝ Սպեր գաւառի Մմբատաւան գիւղում: Մմբատը, երբ
տեղեկացաւ, որ Սանատրուկը սպանւել է, իսկ նրա որ-
դիքը կոտորւել, իսկոյն իր երկու աղջկան՝ Մմբատանոյշին

*) Երւանդի մասին ասում էին, որ նա չար աչք ունէր. եղբ լուսանում էր, արքունի սպասաւորները պինդ քարեր էին բռնում Երւանդի առաջ, և նրա չար աչքից քարերը ճարռում էին:

Ամբատուհուն տարաւ Բայրերդ ամրոցը և այնտեղ
պատասխարեց։ կայդ գլուխ բարձր առ և վեցական

Ամրոցի պահպանութիւնը յանձնեց քաջ տղամարդկանց, իսկ ինքը վերցնելով իր մի կնոջն ու սակաւաթիւ մարդկանց՝ զնաց, գտաւ մանուկ Արտաշէսին:

Երւանդ թագաւորը իմացաւ Սմբատի գնալը և մարդիկ ուղարկեց, որ Նըան բռնեն: Այդ պատճառով Սմբատը երկար ժամանակ շորերը փոխած ստիպւած էր ոտով թափառել մանկան հետ մար հովիւների իջևաններում: Իսկ երբ յարմար ժամանակ գտաւ, փախաւ պարսից թագաւորի մօտ:

Պարսից թագաւորը, որ վաղուց արդէն լսել էր Ալմբատի քաջութեան մասին, մեծ պատիւ տւեց նրան. մանուկ Արտաշէսին էլ մեծ պատւով պահեց իր որդիներին:

Երևանոր մտածում՝ է իր գա՞նձ ապահովելու լիասին

Երւանդը շարունակ մտածում էր, որ իր համար մեծ չարիք է պատրաստում պարսից արքունիքում։ Այդ պատճառով հանդիսա քուն չէր գալիս նրա աչքերին։ Իսկ քնած ժամանակն էլ սարսափելի երազներ էր տեսնում։

Որպէսզի կարողանայ մի կերպ ոչնչացնել Արտաշէսին,
նա պարզեներով պատգամաւորներ ուղարկեց պարսից
թագաւորի մօտ՝ ասելու.

—իմ արիւն ու հարազատ, ինչու ես մեծացնում մար Արտաշէսին իմ և իմ թագաւորութեան դէմ: Ինչու ես հաւատում աւագակ Սմբատի այն խօսքին, թէ Արտաշէսը Սանատորուկի որդին է: Հովհանեսի որդուն նա աշխատում է Արշակունի գարձնել այսինքն քեզ արիւնակից ու հարազատ: Ո՞չ, նա Սանատորուկի որդին չէ. Սմբատը մի մարտղայ է գտել ու խաբում է քեզ:

Սմբատի մօտ էլ մի քանի անդամ պատգամաւորներ ուղարկեց ասելու.

—Զուր ինչու ես այդքան աշխատում: Ծծմայրը քեզ
խաբել է. զու իմ գէմ մի մար տղայ ես մեծացնում:

Երւանդը վատ պատասխան ստանալով զայրացաւ,
մարդիկ ուղարկեց Բայբերդ ամրոցը, կոտորել տւեց քաջ
պահապաններին և գերի վերցնելով Մմբատի աղջիկներին
պահեց նրանց Անի ամրոցում, եփրատի ափին: Երբ Երւանդը
տեսաւ, որ անկարելի է մանուկ Արտաշէսին ոչըն-
չացնել, աւելի մեծ երկիւղի մէջ ընկաւ: Նա այժմ հաս-
տառ գիտէր, որ վաղ թէ ուշ իր ձեռքից պէտք է խլեն
թագաւորական իշխանութիւնը:

Եւ նա սկսեց պատրաստութիւն տեսնել: Դիմեց հռո-
մայեցիների օգնութեան, հայոց Միջազետքը տւեց նրանց
և սկսեց մեծ հարկ վճարել:

Բացի դրանից իր համար մի ամուր քաղաք շինեց և
արքունիքը այդտեղ տեղափոխեց: Մանաւանդ որ Երասխ
գետը հեռացել էր Արմաւիր կոչւած բլրից: Երբ ձմեռը
երկարատե էր լինում, ջուրը հիւսիսային ցուրտ քամինե-
րից սառչում էր, և քաղաքի բնակիչները ջրի պակասու-
թիւն էին քաշում:

Քաղաքի շինութեան համար Երւանդը մի քարաբլուր
ընտրեց, որ գտնւում էր Արմաւրից մի քիչ հեռու, դէպի
արեմուտք:

Քարաբլի շուրջը գալարւում էր Երասխ գետը, իսկ
նրա դիմացի կողմից հոսում էր Ախուրեանը:

Երւանդը պարսպել տւեց ամբողջ քարաբլուրը: Քա-
դարի ներսը շատ տեղերում փորել տւեց գետի յատակին
հաւասար խոր ջրհորներ:

Նա առանձին ուշադրութիւն դարձրեց միջնաբերդի
վրայ: Ամրացնել տւեց բարձր պարիսպներով ու սղնձէ
դռներով:

Կերև բարձրանալու համար Երկաթէ սանդուղներ էին
շինւած մինչև դուռը, սանդուղի աստիճանների մէջ ծածուկ
որոգայթներ կային, որպէսզի, եթէ մէկը թափուն բարձրա-
նար թագաւորին սպանելու, բռնէր: Ասում էին, որ այդ

սանդուղները երկու երես ունէին, մէկը արքունի սպասա-
ւորների ու ցերեկով եկող գնացողի համար էր, իսկ միւսը
սարբւած էր գիշերային դաւաճանների համար: Այս ամուր
քաղաքը նա Երւանդաշատ անւանեց.

Երւանդը զգոյշ թագաւոր էր: Նա Արմաւրից ամեն
բան տեղափոխեց Երւանդաշատ քաղաքը, բացի կուռքերից:
Կուռքերի տեղափոխութիւնը նա օգտակար չէր համարում.
վախենում էր, չինի թէ զոհաբերութիւնների ժամանակ
շատ ժողովուրդ հաւաքւի իր քաղաքում և քաղաքի պաշտ-
պանութիւնը դժւարանայ: Այդ պատճառով Երւանդաշատից
քառասուն ասպարէզ հեռու, դէպի հիւսիս, Ախուրեան
գետի վրայ, շինել տւեց մի փոքր քաղաք և կոչեց Բագա-
րան, որ նշանակում է բագինների—կուռքերի բնակարան:
Արմաւրից Բագարան տեղափոխեց բոլոր կուռքերը, մեհ-
եաններ շինեց և իր եղբայր Երւազին քրմապետ նշանակեց:

Ճննդոց անտառի եւ Երւանդակերտի շինութիւնը

Գետի հիւսիսային կողմը Երւանդը տնկել տւեց
մայրի ծառերի մի մեծ անտառ, որ անւանեց Ծննդոց:
Պարիսպ քաշեց նրա շուրջը և լցրեց արագավազ այ-
ծեամներով, եղնիկներով, եղջերուներով, վայրի էշերով,
վարագներով: Երւանդը շատ էր ուրախանում այդտեղ որս
անելիս:

Բայց Երւանդի բոլոր շինութիւնների մէջ ամենագե-
ղեցիկն ու հոյակալը Երւանդակերտն էր: Այս դաստա-
կերտը նա շինեց աչքի ձեռով: Երասխից դէպի հիւսիս, մեծ
հովտի մէջ շինել տւեց փառաւոր շինութիւններ, որոնք
փայլում էին տչքի բբի պէս, այս շինութիւնները նա բը-
նակեցրեց մարգկանցով: Բնակութեան շուրջը ծաղկոցներ
ու բուրաստաններ գցեց, որոնք նման էին բբի շուրջն ե-
ղած բոլորակին: Այսուհետեւ տնկեց բազմաթիւ այգիներ,
որոնք յիշեցնում էին կոպերի խիտ ու գեղեցիկ գիծը:
Հիւսիսից ձգւում էր մի կամարաձև բլուր, որ ասես

գեղեցիկ կոյսի սիրուն յօնք լինէր: Հարաւից տարածւում էին հարթ դաշտեր, որոնք նման էին գեղեցիկ ծնօտների, իսկ բերանի պէս բացւած գետը իր երկու ափով երկու բացւած շրթունքի էր նմանում:

Եւ այս գեղեցկանիստ դաստակերտը կարծես իր հայեցքը յառել էր բարձր երւանդաշատ քաղաքին: Իսկ որ թագաւորակայել դաստակերտ էր:

Արտաշէսի Հայաստան զալը

Արտաշէսի դայեակ Սմբատը շատ քաջութիւններ արաւ Պարսկաստանում: Պարթև նախարարները այդ տեսնելով թագաւորի մօտ եկան և խնդրեցին, որ պարգևատրի Սմբատին և տայ այն, ինչ որ ինքը, Սմբատը, կմնդրի:

Թագաւորը համաձայնեց և ասաւ. «Հարցրէք, տեսէք, ի՞նչ է կամենում այդ քաջը»:

Նախարարները պատասխանեցին. «Ով անմահ բարերարութիւն, Սմբատը մի բան է խնդրում քեզանից, որ դու Սանատրուկի որդի Արտաշէսին, քո արիւն ու հարագատին, իր հօր գահի վրայ հաստատես»:

Արքայից արքան համաձայնեց, զօրք տւեց Սմբատին, որ Արտաշէսին տանի, հաստատի գահի վրայ:

Երւանդը Ուտիացոց գաւառումն էր, երբ լուր հասաւ, թէ պարսից թագաւորը մեծ զօրք է տւել Սմբատին, որ գնայ Երւանդի դէմ և մանուկ Արտաշէսին իր թագաւորութեան գահը նստեցնի: Այս լսեց թէ չէ, նախարարներից շատերին թողեց, որ այդ կողմի սահմանները պահպանեն, իսկ ինքը շտապով գնաց Երւանդաշատ, որ զօրք հաւաքի: Սյուտեղ խնդիրներով ու պարգևներով կարողացաւ զօրքեր հաւաքել Հայաստանից, Վրաստանից, Կեսարիայի կողմերից և Միջազետքից: Գարուն էր, այդ պատճառով զօրքերը շուտ հաւաքւեցին:

Իր բազմաթիւ զօրքերով եկաւ նաև Մուրացան նախարարութեան տանուտէր Արգամը: Երւանդը վերադաշ-

րել էր նրան երկրորդական գահը, որ Արշակունի թագաւորներից մէկը խլել էր Մուրացաններից:

Թէ Արգամին և թէ առհասարակ բոլոր նախարարներին ու զօրքերին Երւանդը առատ պարզեներ բաժանեց:

Իսկ Սմբատը մանուկ Արտաշէսի հետ շտապով գնում էր դէպի Ուտիացոց սահմանները: Նրան դիմաւորելու եկան այն կողմի զօրքերը և Երւանդի թողած նախարարները: Երբ մնացած հայ նախարարներն իմացան, որ զօրքերը անցել են Սմբատի կողմը, յուսահատւեցին և իրենք էլ ուղեցին Երւանդից բաժանւել: Մանաւանդ տեսնում էին, որ հոռմէական զօրքերը ուշանում են:

Իսկ Երւանդը նրանց աւելի առատ էր պարզեատրում: Եւ որքան առատ էր պարզեատրում, այնքան աւելի ատելի էր դառնում: Բոլորն էլ գիտէին, որ Երւանդը Սըմբատի երկիւղից է առատածեռն դարձել: Եւ նրան այնքան չէին սիրում շատ պարզ ստացողները, ինչքան թըշնամանում էին քիչ ստացողները:

Սմբատը մանուկ Արտաշէսի հետ դուրս եկաւ Գեղամայ ծովի ափը, Արգած սարի ետևը. նա շտապով գնում էր դէպի Երւանդ թագաւորի բանակը:

Սմբատը բանի տեղ չէր գնում Երւանդի զօրքի շտապիւնը, նա միայն Մուրացան Արգամից էր վախենում, որովհետև քաջ էր Մուրացանը և բազմաթիւ տէգաւոր գունդ ունէր:

Արտաշէսը պատգամաւորներ ուղարկեց նրա մօտ և Երդւեց, որ Երւանդի տւած բոլոր պատիւները կմողնի նրան և ուրիշ աւելի մեծ պատիւներ կտայ, եթէ միայն հեռանայ Երւանդից:

Արտաշէսի Եւ Երւանդի պատերազմը

Երւանդի բանակը գտնուում էր Երւանդաշատից դէպի հիւսիս, Երեք հարեւը ասպարէզ հեռու, Ախուրեան գետի ափին: Երբ Արտաշէսի դրօշակները Երևացին, Արգամը իր

հետևակ զօրքով անցաւ նրա կողմը: Այն ժամանակ Սըմբատը հրամայեց փողերը հնչեցնել և իր զօրքը առաջ մըդելով այնպէս արշաւեց Երւանդի զօրքի վրայ, ինչպէս արծիւն արշաւում է կաքաւների վրայ: Երւանդի աջ և ձախ թերի նախարարներն էլ բաժանելով նրանից՝ միացան Սմբատի հետ: Վրաց զօրքը թէկ սկզբում լաւ էր կռւում, բայց շուտով փախուստ տւեց կռւի դաշտից:

Պէտք էր տեսնել Երւանդի գնդի և Միջազետքի զօրքերի սարսափելի կռտորածը:

Երբ բանակները իրար խառնեցին, Տաւրոսի քաջերը Արտաշէսի կողմը դիմեցին: Նրանք խօսք էին տւել Երւանդին, որ իրենց կեանքը չեն խնայիլ Արտաշէսին սպանելու համար: Արդէն հասել էին նրան, երբ նրանց առաջը կտրեց Արտաշէսի ծծմօր որդի Գիսակը և կոտորեց բոլորին: Բայց քաջ Գիսակի դէմքը թրով կիսւեց ու նա ընկաւ կռւի մէջ: Տաւրոսի գնդի ջարդը տեսնելով, Երւանդի զօրքերը սկսեցին փախչել:

Իսկ Երւանդը ձի հեծած դիմեց դէպի Երւանդաշտ. թէկ արդէն գիշեր էր, բայց նա ամեն մի իջևանում փոխում էր ձին և շարունակում փախուստը, որ թշնամու ձեռքը չընկնի: Իսկ քաջ Սմբատը սակաւաթիւ կտրիճ զօրքով նրա ետեկից ընկած հալածեց մինչև քաղաքի դուռը:

Արտաշէսի զօրքերը անցան Երւանդի գնդի կանգնած տեղը և գիշեր ժամանակ բանակ դրին ընկած զինւորների դիակների վրայ:

Արտաշէսը այդ գիշերը անց կացրեց Երւանդի վրանի ասկ, որը շինւած էր կաշւից ու կտաւից: Առաւօտը նա իշխանաբար վարւելով, հրամայեց թաղել սպանւածներին: Այն հովիտը, որտեղ նա բանակ դրաւ, կոչւեց Մարաց Մարգ, իսկ պատերազմի տեղը՝ Երւանդավան, որ նշանակում է մի տեղ, որտեղից վանել, փախցրել էր Երւանդին:

Այնուհետև Արտաշէսը գնաց մայրաքաղաքի վրայ: Կէս օրից առաջ նա հասաւ Երւանդակերտին և հրամայեց զօրքին, որ միաբերան կանչեն. «Մար ամատ», այսինքն՝

«Մարն եկաւ»: Նա ուղում էր յիշեցնել այն անարդ խօսքը, որ Երւանդը իր մասին ասել էր պարսից թագաւորին ու Սմբատին: Դրանից յետոյ Երւանդակերտը Մարմեդ կոչւեց, որովհետև Արտաշէսը կամեցաւ Երւանդի անունը ջնջել այդ դաստակերտի վրայից:

Մինչև Արտաշէսի և բոլոր զօրքերի գալը Սմբատը պահում էր մայրաքաղաքի դուռը: Երբ նրանք հասան և ամրոցի դէմ կռիւ սկսեցին, ամրոցի պահապան դուռը անձնատուր եղաւ և բաց արաւ քաղաքի դուռը: Զօրքը մտաւ քաղաքը: Արտաշէսի զինւորներից մէկը պալատը մըտաւ և թրի մի հարւածով սպանեց Երւանդին: Արտաշէսը չմոռացաւ, որ Երւանդը Արշակունի էր և հրամայեց թղել նրան ու վրան մահարձան կանգնեցնել:

Երւանդի մահից յետոյ Սմբատը մտաւ թագաւորական գանձարանը, որոնեց, գտաւ Սանատրուկ թագաւորի թագը, բերեց, դրաւ Արտաշէսի գլխին և թագաւորեցը նրան ամբողջ Հայաստանի վրայ:

10

ԱՐՏԱՇԷՍ Բ. ԵՒ ԱՐՏԱՒՄԶԴ

Արտաշէս թագաւորը պարզեստրում է իրեն օգնողներին և շինում է Արտաշատ քաղաքը

Արտաշէս թագաւորի առաջին գործն եղաւ վարձատրել իր բարեկամներին և շնորհակալութիւն յայտնել նըրանց:

Նա պարգևներ բաժանեց պարսկական զօրքերին և արձակեց իրենց աշխարհը:

Քաջ և պատւական Արգամին թողեց երկրորդական գահը և բացի դրանից իրաւունք տւեց գործ ածել՝ յակնթակապ պատկ, երկու ականջին օղեր, մի ոտին կարմիր կօշիկ, ոսկէ գդալ ու պատառաքաղ և ոսկէ գաւաթ:

Արտաշէսը մեծ պարգևներ տւեց նաև իր դայեակ Սմբատին։ Նրան յանձնեց ոչ միայն թագակապ ասպետութիւնն ու արևմտեան զօրքի իշխանութիւնը, այլ և գլխաւոր նշանակից հայոց աշխարհի բոլոր գործակալների ու թագաւորական տան վրայ։

Նա չմոռացաւ Գիսակի որդի Ներաէսին. նախարարութիւն տւեց նրան և անւանեց Դիմաքսեան, որ նշանակում է դէմքը կիւտած։ Երախտագէտ Արտաշէսը այդպէս արաւ ի յիշատակ քաջ Գիսակի, որ տաւրոսացիների հետ կուելիս զրկւել էր դէմքի կիսից ու մեռել։

Դրանից յետոյ Արտաշէսը հրաման տւեց Սմբատին, որ գնայ Բագարան ամուր քաղաքը և սպանի Երւանդի եղբայր Երւազին։ Սմբատը մտաւ Բագարան, բռնեց Երւազին, հրամայեց Երկանաքար կապել նրա վզից և ձգել գետի ջրապտոյտի մէջ։

Այնուհետև Սմբատը Երւազի տեղ քրմապետ նշանակեց Արտաշէսի ազգականներից մէկին։ Առ մի ժամանակ երազ մեկնող ինչ որ մոզի աշակերտ էր եղել և այդ պատճառով նրան անւանում էին Մոգպաշտէ, այսինքն, «մոզին հետեւող»։

Սմբատը վերցրեց Երւազի բոլոր գանձերը, նրա հինգ հարիւր ծառաններին, մեհեանների ընտիր գանձերը ու բերեց տւեց Արտաշէսին։

Արտաշէսը բերած ծառանները Սմբատին պարգևեց, իսկ գանձերի վրայ աւելացնելով իր գանձերից էլ, հրամայեց Սմբատին, որ այդ գանձերը ընծայ տանի իր հայր և աջակից պարսից թագաւորին։

Սմբատը տարաւ Երւազի ծառաններին և բնակեցրեց Մասիսի ետեւ, մի դիւղում, որ Բագարան անւանեց։ Այնուհետև նա անցաւ Պարսկաստան, որ ընծանները արքայից արքային յանձնի։

Մինչդեռ Սմբատը Պարսկաստանումն էր, հոռմայեցոց կայսեր հարկանանները մեծ զօրքով մօտեցան Հայաստա-

նին և հարկ էին պահանջում։ Արտաշէսը նրանց լինդրեց երկիր շմտնել և պահանջած հարկը վճարեց։

Արտաշէսը չուզեց մնալ Երւանդաշատ քաղաքում և հրամայեց նոր քաղաք շինեն Երասխ և Մեծամօրի գետերի խառնուրդի մօտ, մի բլրի վրայ։

Քաղաքը շինւեց կարճ ժամանակում և առանց դըժւարութեան, որովհետեւ մայրի փայտերը բերւում էին Երասխով։ Քաղաքի մէջ մի մեհեան շինեցին և Բագարանից այդտեղ բերին թէ օտար և թէ հայկական կուռքերը։ Արտաշէսը հրամայեց, որ Երւանդաշատից դուրս բերեն գերի հրէաններին և բնակեցնեն նոր շինած քաղաքում։ Այդտեղ փոխազրեց նաև Երւանդաշատ քաղաքի բոլոր գարդերը, որոնց մի մասը Երւանդը ինքն էր շինել տւել, իսկ մի մասը բերել Սմբաւրից։ Արտաշէսը նոյնպէս աշխատում էր բարեգարդել և հարստացնել նրան, ինչպէս վայել է մի թագաւորանիստ քաղաքի։ Այս քաղաքը իր անունով Արտաշատ անւանեց։

Արտաշէսի պատերազմն ալանների հետ եւ Սաթենիկի հետ ամուսնանալը

Այդ ժամանակ ալանները իրենց հետ միացնելով միւս լեռնականներին և վրացիններից շատերին ահագին բազմութեամբ թափւեցին հայոց աշխարհը։

Արտաշէսը հաւաքեց իր զօրքերը ու գնաց նրանց գէմ, որ դուրս քշի երկրից։ Այս երկու քաջ և աղեղնաւոր ազգերի պատերազմը հայոց աշխարհում սկսւեց։

Բայց ալանները մի փոքր ետ քաշւեցին, անցան կուրգեար և բանակ դրին նրա հիւսիսային ափին։ Արտաշէսն էլ հասաւ ու բանակ դրաւ հարաւային ափին. այնպէս որ կուր գետն էր բաժանում երկու բանակները։

Ալանների թագաւորը ալևս չէր ուզում պատերազմել. նա խաղաղութիւն էր խնդրում, որովհետև հայ զօրքերը գերի էին վերցրել նրա որդուն և տարել Արտաշէսի մօտ։

Ալանաց թագաւորը խոստանում էր Արտաշէսին՝ տալ ինչ
որ կինդրի, պատրաստ էր երգւելու և մշտական դաշն
կապելու, որ ալանաց պատանիները այլևս չեն ասպատա-
կի հայոց աշխարհը:

Բայց Արտաշէսը չէր համաձայնում: Այն ժամանակ գետ-
ափն եկաւ պատանու քոյրը, կանգնեց մի բարձր տեղ և
թարգմանների բերանով այսպէս կանչեց դէպի Արտաշէսի
բանակը.

«Քեզ եմ ասում, քաջ Արտաշէս, որ յաղթեցիր ալան-
ների քաջ ազգին, արի համաձայնիր այդ պատանին տա-
լու ալանների գեղաչեայ օրիորդիս: Ո՞վ է լսել մի ազգի-
կտրիճները վրէժի համար ուրիշ ազգերի կտրիճներին սպա-
նեն կամ ստրկացնեն և կամ երկու քաջ ազգերի մէջ յա-
փտենական թշնամութիւն գցեն»:

Այսպիսի իմաստուն խօսքեր լսելով Արտաշէսը դուրս-
եկաւ գետի ափը, տեսաւ գեղեցիկ կոյսին և հաւանեց:

Կանչեց իր դայեակ Սմբատին և յայտնեց, որ կա-
մենում է ամուսնանալ ալանաց օրիորդի հետ: Ապա աւե-
լացրեց.

—Պատրաստ եմ խաղաղութեան դաշն կապելու այդ
քաջ ազգի հետ և պատանուն էլ արձակելու:

Սմբատին դուր եկաւ Արտաշէսի այս խօսքը, նա խնա-
մախօս ուղարկեց ալանաց թագաւորի մօտ, որ ալանների-
մեծ օրիորդ Սաթենիկին կնութեան տայ Արտաշէսին:

Իսկ ալանաց թագաւորը հապարտ բացականչեց.

«Քաջ Արտաշէսը որտեղից պէտք է հազար հազարներ
և բիւրեր տայ քաջազգի կոյս օրիորդի համար»:

Արտաշէս քաջ թագաւորը շատ վիրաւորւեց այս խօս-
քերից և ահա—

«Հեծաւ իր սե գեղեցիկ ձին
Եւ ոսկէօղ կարմիր կաշւէ պարանը հանած,
Սրաթե արծւի պէս անցաւ գետը,
Նետեց ոսկէօղ կարմիր կաշւէ պարանը
Ու գցեց ալանների օրիորդի մէջքը:

Շատ յաւեցրեց քնքոյշ օրիորդի մէջքը,
Արագ վախցնելով նրան իր բանակը»:
Այսպէս վախցրեց Արտաշէսը իր հարսնացւին և ապա
մեծ հարսանիք արաւ: Երգիչներն այսպէս էին երգում այս
հարսանիքի մասին.

«Ոսկի անձրի էր գալիս Արտաշէսի վեսայութեան
ժամանակ,

Ու մարդարիտ էր թափւում Սաթենիկի հարսնութեան
ժամանակ»:

Արտաշէսը սիրեց գեղեցիկ Սաթենիկին և նրան առա-
ջինը համարեց իր կանանց մէջ:

Մի փոքր ժամանակից յետոյ Սաթենիկի հայրը վախ-
ճանւեց: Մի ալան հալածեց Սաթենիկի եղբօրը և բոնի
կերպով տիրեց ալանաց աշխարհին:

Այդ իմանալով Արտաշէսը զօրք տւեց Սմբատին և ու-
ղարկեց Սաթենիկի եղբօրը օգնելու: Սմբատը յաղթեց հա-
կառակորդին և դուրս քշեց ալանաց աշխարհից, իսկ իշ-
խանութիւնը վերադրեց Սաթենիկի եղբօրը:

Այնուհետեւ Սմբատը արշաւեց ալանաց թշնամիների
աշխարհը, աւերեց նրանց երկիրը և բազմաթիւ մարդկանց
գերի վերցնելով բերեց Արտաշատ: Արտաշէսը հրամայեց
նրանց բնակեցնել Մասիսի հարաւարենելեան կողմը, որ
կոչւում էր Շաւարշական գաւառ: Դրանից յետոյ այդ գա-
ւառը Արտաշ կոչւեց, որովհետեւ գերիները բերւած էին
Արտաշ երկրից:

Արտաշէսը բարեկարգութ է Հայաստանը

Գեղեցիկ կարգեր ու սովորութիւններ մացրին վա-
ղարշակն ու միւս թագաւորները, բայց հայոց աշխարհը
զուրկ էր զլնաւոր արւեստներից ու գիտութիւններից:
Հայերը աւագակութեամբ և թալանով էին պարապում:
Կարծես գիտութիւններ չէին հասկանում կամ հոգու չէին
բաշում նրանց մասին, ասում է Մովսէս Խորենացին:

Ծանօթ չէին շաբաթների, ամիսների և տարիների բոլորման հետ: Հայ աշխարհի ծովակների և գետերի վրայ դեռ նաւազնացութիւն չկար: Հիւսիսային վայրենի ժողովուրդների նման դեռ հում միս էին ուտում: Զունէին ձկնորսական գործիքներ և մինչև անգամ երկրագործութիւնը շատ քիչ էր տարածւած:

Այսպէս էր նայոց աշխարհը Արտաշէսից առաջ: Իսկ նրա օրով այնպէս բարեկարգւեց երկիրը, որ ասում են, չէր կարելի մի կտոր անմշակ հող գտնել ոչ լեռներում և ոչ էլ դաշտերում:

Նա շատ գաղթականներ բերեց Հայաստան և բնակեցրեց սարերում, հովիսներում ու դաշտերում: Ամբողջ երկիրը ծածկւեց գիւղերով ու ագարակներով: Անհրաժեշտ էր նրանց սահմանները որոշել, և Արտաշէս թագաւորը հրամայեց սահմանաքարեր պատրաստել: Քառակուսի քարեր տաշեցին, նրանց մէջ պնակի ձևով փոսեր շինեցին, քարերը հողի մէջ թաղեցին, իսկ նրանց փոսերի մէջ ուրիշ քառակուսի քարեր նստեցրին, որոնց ծայրերը գետնի երեսից մի փոքր բարձր էին: Այսպէս ահա որոշեցին գիւղերի ու ագարակների սահմանները:

Արտասազդի նախանձը

Շատ որդիներ ունեցաւ Արտաշէսը Սաթենիկից: Անդրանիկը Արտաւագդն էր, որ մի նախանձու, հպարտ և ինքնահաւան մարդ էր: Նրան չէին սիրում հին երդիչները և պատմում էին, թէ—

«Վիշապազունները դողացել են
մանուկ Արտաւազդին
և նրա տեղ մի դե են դրել»:

Արտաւազդը նախանձեց ծերունի Արդամի փառք ու պատմին: Նրա դէմ գրգռեց իր հօրը, մեղագրելով թէ Արդամն ուզում է ամենքի վրայ թագաւոր դառնալ: Արտաշէսը հաւատաց Արտաւազդի խօսքերին, երկրորդական գահը խեց Արդամից ու տւեց Արտաւազդին:

Դրանից յետոյ մի օր Արտաշէս թագաւորը իր որդիների հետ միասին ճաշի գնաց Արդամի մօտ: Ճաշի ժամանակ թագաւորի որդիքը կասկածի մէջ ընկան, կարծելով որ դաւ են սարքել իրենց հօր դէմ: Նրանք շփոթ ու աղմուկ բարձրացրին, յարձակեցին Արդամի վրայ և սկսեցին քաշը ել նրա ալևոր մազերը:

Իսկ Արտաշէսը սաստիկ վրդովւած վերադարձաւ Արտաշատ, գօրք տւեց իր Մաժան որդուն և ուղարկեց, որ Մուրացաններին կոտորի:

Մաժանը սպանեց Մուրացաններից շատերին, այրեց Արդամի պալատը և նրա աննման հարճ Մանդուին բերեց, ընծայեց Արտաշէսին:

Երկու տարուց յետոյ Արտաշէսը ներեց Արդամին, հրամայեց վերադարձնել բոլոր կալւածները, բայց գեղցիկ Մանդու հարճին իր մօտ պահեց:

Իսկ Արտաւազդը չբաւականացաւ Մուրացաններից խլած երկրորդական գահով: Նա խեց նաև նախիջնանը և Երասխի հիւսիսային ափին գտնւած բոլոր գիւղերը, որոնց մէջ շինւած էին Մուրացանների պալատներն ու բերդերը:

Այս դէպքի մասին երգիչները ծաղրելով պատմում էին, թէ—

«Արտաշատ քաղաքը շինելու ժամանակ Արտաշէս թագաւորի քաջ որդին, Արտաւազդը, իր պալատի համար էլ տեղ չգտաւ, գնաց մարերի մէջ շինեց Մարակերտ քաղաքը»:

Այս բոլորը չկարողացաւ տամնել Արդամի որդին և դէնքը ձեռքին դուրս եկաւ Արտաւազդի դէմ: Բայց թագաւորի որդին յաղթեց նրան և կոտորեց բոլոր Մուրացաններին, նրանց հետ նաև Արդամին: Իսկ նրանց իշխանութիւնն ու գիւղերը սեփականեցրեց: Եւ այս երեսի նախարարութիւնից մնացին միայն մի քանի աննշան մարդիկ, որոնք ազատւեցին փախչելով Արտաշէսի մօտ:

Արտաւազդը հանգիստ չթողեց նաև իր հօր գայեակ Ամբատին:

Կասպից երկիրը ապստամբել էր Արտաշէսի դէմ: Ար-

տաշէսը ամբողջ հայ զօրքը տալով Սմբատին ուղարկեց այդ երկիրը և մինչև անգամ ինքը եօթն օր ճանապարհ գցեց նրանց: Սմբատը գնաց, յաղթեց ապստամբներին, աւերեց կասպից երկիրը ու իր հետ բազմաթիւ գերիներ բերեց, որոնց մէջ էր նպի այդ երկրի թագաւոր Զարդմանուը:

Սրտաշէսը ուրախացած՝ արժանի պատիւներ տւեց բազմայաղթ Սմբատին, կուի ամբողջ աւարը թողեց նրան և բացի գրանից մի քանի գիւղեր ընծայեց արքունի կալւածներից:

Սրտաւազդը գրա համար նախանձեց Սմբատին և ուղեց նրան սպանել: Այս բանը Սրտաշէսի ականջը հասաւ, և նասաստիկ տիրեց: Իսկ Սմբատը իր կամքով թողեց հայ զօրքերի իշխանութիւնը և իր գերիներով հեռացաւ, գնաց դէպի Ասորեստանի կողմերը, դէպի Տմորիք (Կորդիք):

Այստեղ ծերութեան հասակում նա ամուսնացաւ մի կնոջ հետ, որին սաստիկ սիրում էր և նրա պատճառով մնաց Տմորիքում:

Իսկ Սրտաւազդը Սմբատի գնալուց յետոյ հօրից ստացաւ իր ցանկացածը, այն է՝ բոլոր զօրքերի իշխանութիւնը:

Սրտաշէսի միւս որդիները իրենց կանանցից գրգռւելով, նախանձեցին Սրտաւազդին, որը ուղում էր ամեն պատի տիրանալ:

Սրտաշէսը կժգոն որդիներին խաղաղացնելու համար զանազան պաշտօններ տւեց նրանց:

Արտաշէսի մահը եւ Սրտաւազդի անհետանալը

Սրտաշէս թագաւորը մի քանի անգամ ապստամբեց հռոմայեցիների գէմ և ուղում էր հարկ չտալ: Բայց հռոմէ-ական զօրքերի ոյժը տեսնելով, թողեց իր մտադրութիւնը և շարունակեց հարկ տալ:

Մի անգամ էլ, երբ Սրտաշէսը Հռոմի կայսեր հրամա-

ն ով պատերազմելու էր զնում պարսիկների գէմ, ճանապարհին Մարանդ գաւառի Բակուրակերտ աւանում հիւանդացաւ:

Այստեղ Արեղեան տոհմի նահապետ Արեղոն, որ մի կեղծաւոր ու խաբերայ մարդ էր, աղաչեց թագաւորին, որ իրեն ուղարկի Եկեղեց գաւառի Երիդա քաղաքը, Արտեմիդի մեհեանը՝ կուռքերից բժշկութիւն և երկար կեանք ինդրելու:

Թագաւորը համաձայնեց, և Արեղոն գնաց մեհեանը, բայց մինչև նրա վերադառնալը Սրտաշէս թագաւորը վախճանեց:

Մեռնելու ժամին Սրտաշէսը յիշեց իր անց կացրած ուրախ օրերը և հառաչելով ասաւ:

«Ով կտայ ինձ ծխանի ծուխը
եւ նաւասարդի տուաւոտը,
եղնիկների վազվելն ու եղջերուների թրոչ-
կոտելը.

Մենք փող էինք փչում և թմբուկ զարկում,
ինչպէս թագաւորների սովորութիւնն է»:

Մեռաւ Սրտաշէս թագաւորը և խոր սզի մէջ դցեց ամբողջ երկիրը:

Հայերը մեծ պատիւներ տւին նրա դիակին:

Դագաղը ոսկուց էր, միջի բարձն ու անկողինը բենեղից, զգեստը ոսկեթել: Թագը դրած էր գլխին, իսկ ոսկեղարդ զէնքը՝ առաջը: Դագաղը շրջապատել էին թագաւորի որդիները, ազգականները, զինուորական պաշտօնեաները, նահապետներն ու նախարարների զնոցերը և ապա զօրքը: Բոլորն այնպէս էին զինւած, կարծես պատերազմելու էին գնում:

Առջեից պղնձէ փողեր էին փչում, ետևից զնում էին սևազգեստ ձայնարկու կոյսեր և լալկան կանայք: Դրանցից յետոյ զնում էր ժողովրդի ահազին բազմութիւնը: Այսպէս տարան և թաղեցին Սրտաշէս թագաւորին:

Իսկ նրա սիրելի կանայք, հարձերը, մտերիմ ծառա-

Ները և շատ մարդիկ չուզեցին բաժանուել իրենց սիրելի
թագաւորից և ինքնասպան եղան նրա գերազմանի վրայ:
Նախանձոտ Արտաւազիք տեսաւ այս բանը և նեղա-
ցած ասաւ.

«Գնացիր

Եւ ամբողջ երկիրը հետդ տարար.

Այս աւերակների վրայ ի՞նչպէս թագաւորեմ»:

Այն ժամանակ մեռած հայրը անիծեց որդուն.

«Եթէ որսի գնաս

Ազատ Մասիսի վրայ,

Թող քաջըրը քեզ բռնեն,

Տանեն ազատ Մասիսի վրայ.

Այնտեղ մնաս և էլ լոյս չտեսնես»:


Այս ծանր անէծքը շուտով կտտարւեց, ասում է
աւանդութիւնը:

Արտաւազիք հօր մահից յետոյ թագաւոր գառնալով
իր բոլոր եղբայրներին գուրս քշեց Այրարատից զէպի Աղի-
ովիտ և Առերանի գաւառները: Իր մօտ պահեց միայն
Տիրան եղբօրը, իրի ժառանգ, որովհետև ինքը որդի չու-
նէր: Նոր էր թագաւոր եղել, և ահա մի օր Արտաշատի
կամուրջն անցնելով գնաց Մասիսի կողմերը կինճ ու վայրե-
նի էշ որսալու: Որսի ժամանակ յանկարծ խելազարւեց, իր
ձիով մի անդունդ գլորւեց ու անհետացաւ:

Պառաւները պատմում են, թէ նա այնտեղ բանտարկ-
ւած է մի այրի մէջ, երկաթէ շղթաներով կապկալած:
Երկու շուն իբրև թէ անդադար կրծում են նրա շղթաները,
և Արտաւազիք աշխատում է ազատւել այնտեղից, որ վերջ
տայ աշխարհին:

Բայց ասում են, որ դարբինների կոանի հարւածնե-
րից նորից ամրանում են նրա կապանքները:

Հայ դարբինները սովորութիւն ունեն կիրակի օրերը
երեք կամ չորս անգամ խփելու սալին, որպէսպի ամրանան
Արտաւազիք շղթաները:



ՅԱՒԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1

Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով,
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկ եղեգնիկն:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ ի բոցոյն պատանեկիկ վագէր:
Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:

2

Թեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգիս Ալանաց,
Ե՛կ հաւանեաց աշագեղոյ դստերս Ալանաց
Տալ զպատանիդ:

Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդա-
նութիւն
Կամ ծառայեցուցանելով և ի սորկաց կարգի
պահել,

Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

3

Ուստի՝ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և
բիւրս ի բիւրոց ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս Ալանաց:

4

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծւի սրաթե ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

5

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարդարիտ ի հարանութեանն Սաթինկան:

6

Վիշապազունք գողացան
Զմանուկն Արտաւազդ
Եւ դե մոխանակ եղին:

2

Արտաւազգայ ոչ դաեալ,
Քաջի որդւոյն Արտաշմի,
Տեղի ապարանից
ի ճիմսանալն Արտաշատու՝
Նա անց, գնաց և շինեաց
ի մէջ մարաց զՄարակերտ:

8

Ո՞ւ տայլը ինձ զծուխս ծխանի
Եւ գառաւօտն նաւասարդի,
Զվագելն եղանց և զվագելն եղջերուաց,
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց:

9

Մինչ դու գնացեր
եւ զերկիր ամենայն ընդ քեզ տարար
ես աւերակազս ո՞րպէս թագաւորեմ:

10

Եթէ դու յորս հեծցիս
Յազատ ի վեր ի Մասիս
Զըեղ կալցին քաջը, տարցին
Յազատ ի վեր ի Մասիս.
Անդ կազցես և զլոյս մի տեսցես:



ՅԱՆԿ

ՅԱՌԱԶԱԲԱՆՆԵՐ

Երևան
I—VI

Քաղաքակալիթութեան տարերքը

Գլուխ

| | |
|---|----|
| 1 Ապրուստի գլխաւոր միջոցները | 7 |
| 2 Նախնական գործիքները | 8 |
| 3 Նախամարդկանց բնակութեան տեղը | 9 |
| 4 Պաշտպանւելու ամենալաւ միջոցը | 10 |
| 5 Խմբովին կերակուր ճարելը | 11 |
| 6 Թափառական կեանք | 12 |
| 7 Քարէ գործիքներ | 12 |
| 8 Կենդանիներ սպանելու և բռնելու գէնքեր | 15 |
| 9 Որսորդութիւն և ձկնորսութիւն | 17 |
| 10 Մոի պաշար | 19 |
| 11 Ցղւած քարէ գործիքներ | 20 |
| 12 Կրակի գիւտը | 22 |
| 13 Խորովելն ու թխելը | 24 |
| 14 Կրակով որսորդութիւն | 25 |
| 15 Անասնապահութիւն | 26 |
| 16 Եփելու արւեստը և ամանները | 28 |
| 17 Զարդեր | 30 |
| 18 Բնակարան | 34 |
| 19 Հազուստ | 39 |
| 20 Գործելու, մանելու և կարելու արւեստները | 40 |
| 21 Երկրագործութիւն | 42 |
| 22 Բրօնզի և երկաթի դար | 45 |
| 23 Ցեղը և նրա առաջնորդը | 48 |
| 24 Մայրական տոհմ | 51 |

| | |
|--|----|
| 25 Փոխանակութիւն | 53 |
| 26 Յամաքային և ջրային ճանապարհներ | 56 |
| 27 Համայնական և մասնաւոր սեփականութիւն | 58 |
| 28 Բնուանիք | 60 |
| 29 Արհեստաւորներ | 62 |
| 30 Վաճառականներ | 63 |
| 31 Աղնւականներ և ստրուկներ | 65 |
| 32 Լեզու | 68 |
| 33 Կիր | 71 |
| 34 Աստւածներ | 77 |
| 35 Հոգիներ | 80 |
| 36 Զոհ | 81 |
| 37 Կուռքեր և մեհեաններ | 83 |
| 38 Քուրմեր | 85 |

Հայկական աւանդութիւններ

Գլուխ

| | |
|--|-----|
| 1 Հայկ և Բէլ | 89 |
| 2 Հայերը տարածւում են Հայաստանում | 92 |
| 3 Արամ | 96 |
| 4 Արա Գեղեցիկ և Շամիրամ | 96 |
| 5 Տիգրան Երւանդեան | 101 |
| 6 Վահագն | 107 |
| 7 Վաղարշակ | 108 |
| 8 Արտաշէս Աշխարհակալ | 116 |
| 9 Երւանդ Արշակունի | 118 |
| 10 Արտաշէս Բ. և Արտաւազդ ՅԱՀԵԼԻԱԾ. Գուսանական երգեր | 125 |
| | 135 |


ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ


Առաջին երեսում բաց է թողւած

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈԽԻՆԱԺ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

բառելը

| Երես | Տ Ա Կ | Տպւած Է | Այլք է լինի |
|------|-------------|-------------|-------------|
| 10 | 11 վերկից | պաշտպանելու | պաշտպանելու |
| 33 | 10 ներքեկից | նաշխած | (նախշած) |
| 36 | 10 ներքեկից | եղեգնից | եղեգնից |
| 44 | 5 ներքեկից | եղներ | եղներ |
| 69 | 11 | դրեց | դրաւ |
| | 17 | ձեռքոերի | ձեռքերի |
| 71 | 5 | երկւոր | եկւոր |
| 81 | 13 | գերեզմաններ | գերեզմաններ |
| 89 | 6 | զուզեց | չուզեց |
| 90 | 1 | թէլ | թէլ |
| 95 | 14 վերկից | դրել | դրել |
| 97 | 4 ներքեկից | «Աստ- | աստ- |
| | 2 | փափաղը: | փափաղը: |
| 101 | 4 վերկից | 5 | |
| 102 | 9 | էլ | էլ |





ԱՐՄԵՆԻԱ

ՄԵԴԱՑԻՒԵՐ

(ՄԱՐԱՏԱՆ)



ՀԱՅԱՍՏԱՆ
Կ
ԱՐԵՒԱՆ ԵՐԿՐՈՒԾ



ՀՀ Ազգային գրադարան

NL0402967

